ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ, ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

7–ՐԴ

ԴԱՍԱՐԱՆ

Դասագիրք հանրակրթական
հիմնական դպրոցի համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

Խմբագիրներ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ. *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆ. *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ. *պատմագիտության թեկնածու*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց պատմության միջնադարյան շրջանի բովանդակությունը, առանձնահատկությունները: Հայոց միջնադարյան պատմությունը բաժանվում է երեք փուլի՝ վաղ միջնադար՝ IV–IX դդ., դասական (զարգացած) միջնադար՝ X–XIV դդ., ուշ միջնադար՝ XV դ. — XVII դ. առաջին կես: Վաղ միջնադարը տևել է ավելի քան հինգ դար: Այն սկսվել է Մեծ Հայքի թագավորության ամբողջականության ու անկախության վերականգնումով (298 թ.), քրիստոնեության՝ աշխարհում առաջինը որպես պետական կրոն ընդունումով (301 թ.) և ավարտվել Բագրատունյաց թագավորության հռչակումով (885 թ.):

Հայաստանն ավելի քան հինգհազարամյա քաղաքակրթության բնօրրան է: Միջնադարում հայ գիտամշակութային կյանքի զարգացումը հասավ աննախադեպ բարձրության և նոր արժեքներով հարստացրեց ազգային և համաշխարհային մշակույթի գանձարանը:

Վաղ միջնադար: Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը գոյություն ունեցավ մինչև 428 թ., որից հետո պետականությունը պահպանվեց ի դեմս նախարարական համակարգի: Հայ ժողովրդի անձնուրաց պայքարի շնորհիվ Հայաստանը միջնադարում մի քանի անգամ կարողացավ վերականգնել թագավորությունը և նախարարական իշխանապետությունը: Հայոց ամբողջականության պահպանման գործում մեծ է Հայ առաքելական եկեղեցու ավանդը:

Մեսրոպ Մաշտոցի հայ գրերի գյուտով (405 թ.)՝ հոգևոր–մշակութային արժեքների նորոգմամբ և ամրագրմամբ, հայ ժողովուրդը դիմակայեց արտաքին վտանգներին: Հայոց պատմության V դարը, որը բնութագրվում է թարգմանական և ինքնուրույն գրականության ստեղծմամբ, անվանվում է *ոսկեդար*: Հայ մտավորականները պատմական, փիլիսոփայական, աշխարհագրական, բնագիտական մեծարժեք ժառանգություն են թողել՝ հարստացնելով հայ և համաշխարհային գիտական մտքի շտեմարանը, ինչպես նաև հայերեն թարգմանությունների շնորհիվ՝ կորստից փր-

կելով օտար հեղինակների մի շարք երկեր: Հայ ոսկեդարն իր մեծ ազդեցությունն ունեցավ հայկական միջնադարյան ողջ մշակույթի վրա:

Վարդան Մամիկոնյանի և Վահան Մամիկոնյանի գլխավորած համաժողովրդական պայքարի շնորհիվ 484 թ. Իրանը ճանաչեց Տանուտերական Հայաստանի ինքնուրույնությունը: Այդ ժամանակաշրջանում վերականգնվեց հայկական թագավորությունը Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում և Ուտիքում և հարակից տարածքներում: VII դ. երկրորդ կեսին մի քանի տասնամյակի ընթացքում տեղի ունեցավ Հայոց աշխարհի վերամիավորումը և ամբողջական անկախ իշխանապետության բարձրացումը: VIII դ.՝ Արաբական խալիֆայության գերիշխանության ծանր ժամանակաշրջանում, հայ ժողովուրդը բազմիցս ապստամբեց օտար տիրապետության դեմ:

Դասական միջնադար: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի շնորհիվ վերականգնվեց հայկական թագավորական իշխանությունը՝ ի դեմս հայ Բագրատունիների պետության (885–1045 թթ.), նրա ճյուղավորումների՝ Կարս–Վանանդի (963–1065 թթ.), Տաշիր–Զորագետի՝ Կյուրիկյանների (978–1113 թթ.): Հայոց պետականության անքակտելի մասն էին Վասպուրականի (908–1021 թթ.), Սյունիքի (987–1170 թթ.), Փառիսոսի (X դ. կես–1044 թ.) թագավորությունները, Զաքարյանների (XII դ. վերջ–XIII դ. առաջին տասնամյակներ), Կիլիկիայի հայկական իշխանապետություններն (1080–1197 թթ.), Կիլիկիո թագավորությունը (1198–1375 թթ.), ինչպես նաև հայկական մյուս նշանավոր իշխանությունները:

Հայ առաքելական եկեղեցին հովանավորում էր գիտության, կրթության, գրականության, արվեստի բնագավառները: Վանական ուսումնական կենտրոններում հիմնադրվեցին Գլաձորի և Տաթևի համալսարանները: Կրթական կենտրոններ էին գործում նաև Հայաստանի քաղաքներում: Մեծ դեր էին կատարում նաև հայկական իշխանական տները՝ հովանավորելով Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Կիլիկյան Հայաստանի գիտակրթական և մշակութային կյանքը: Հայ մշակույթի այդ դարաշրջանը հայտնի է *Արծաթի դար* անունով: Դիմակայելով օտար նվաճողներին՝ հայ ժողովուրդը զենքի հետ մեկտեղ գիտությամբ ու կրթությամբ՝ լուսավորչությամբ էր պաշտպանում հայրենիքը և ազգային արժեքները:

Ուշ միջնադար: Հայաստանի համար ծանր ժամանակներ սկսվեցին ավերածություններ բերող օտար քոչվոր ցեղերի ներխուժումների ու ասպատակությունների հետևանքով: Սակայն հայ ժողովուրդն իր աննկուն կամքով հերոսաբար պահպանում էր իր ազգային արժանապատվությունը և օտար բռնակալություններից ազատագրման կորովը:

ԲԱԺԻՆ
I

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ I
ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

§ 1. ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հողատիրության ձևերը: Միջնադարում ձևավորված ավատատիրության (ֆեոդալիզմ) հիմքում ընկած հողատիրությունը կալվածքային սեփականատիրությունն էր:

Մեծ Հայքում մինչև 428 թ. պետական՝ թագավորական, ծառայողական, մասնատիրական՝ ժառանգական և համայնքային հողատիրության գերագույն տերը թագավորն էր: Գյուղատնտեսությունը (երկրագործություն, անասնապահություն, այգեգործություն, մեղվաբուծություն) հիմնված էր մասնավոր և համայնական հողատիրության վրա:

Համայնական հողային սեփականությունը պետական հողում էր: Այն բաժանված էր հարկատու երդերի միջև: Գյուղական համայնքները թագավորական գանձարանի հիմնական հարկատուներն էին: Հարկերի գանձումը և ապրանքափոխանակությունը հիմնականում կատարվում էր բնամթերքով:

Թագավորից հետո խոշոր հողատերեր էին նախարարները՝ իշխանությունների տերերը՝ բդեշխները, գործակալները և նախարարական տոհմերի անդամները: Հորից որդուն անցնող ժառանգական հողերը կոչվում էին *հայրենական*:

Թագավորական հողատիրությունն աստիճանաբար կրճատվում էր ժառանգական նախարարական հողատիրության աճի հետևանքով: Երկրի կենտրոնում՝ *միջնաշխարհում* էին արքունի հողային տիրույթները՝ Արտաշատ մայրաքաղաքի գավառը՝ *Ուպան Հայոցը:* Այստեղ ապրում էին թագավորը, թագուհին ու արքայորդիները: Թագավորական ընտանիքի մյուս անդամները՝ Արշակունի *սեպուհները* (արքայազներ), նույնպես կալվածքներ ունեին:

Հայ Արշակունիների հարստության անկումից հետո (428 թ.), երբ երկիրը Պարսկաստանի և Բյուզանդիայի ազդեցության տակ էր, հողատիրության գերագույն տերը կրկին մնում էր հայ նախարարական համակարգը:

V դարում Վարդան և Վահան Մամիկոնյանների գլխավորած հայ ժողովրդի ապստամբությունները ստիպեցին պարսից արքունիքին հրաժարվել բռնի քաղաքականություն վարելուց Արևելյան Հայաստանում: 484 թ. Պարսկաստանը ճանաչեց Տանուտերական իշխանությունը, նախարարական ժառանգական հողատիրությունը և Հայ եկեղեցին:

Արևմտյան Հայաստանում Բյուզանդական կայսրությունը փոփոխեց նախարարական հողային ժառանգության՝ հորից որդուն անցնելու ավանդական կարգը:

Ասպիճանակարգությունը: Նախարարական տան գլխավորը կոչվում էր *պեր* կամ *պանուպեր:* V դ. վերջին, երբ Վահան Մամիկոնյանը պաշտոնապես դարձավ Հայաստանի արևելյան մասի կառավարիչը, այն անվանվեց *Տանուպերական իշխանության աշխարհ*: Ինչպես թագավորական, այնպես էլ նախարարական տոհմի հաջորդ աստիճանը *սեպուհներն* էին:

Հայոց թագավորը հողեր էր շնորհում նաև եկեղեցուն: Միջնադարում առաջացավ հողատիրության նոր՝ վանքապատկան ձևը:

Խոշոր ու միջին հողատեր ազնվականությունը՝ նախարարները, եկեղեցական հոգևորականությունը, ինչպես նաև մանր ազնվականությունը պատկանում էին բարձր՝ *ազատների* դասին: Նրանք ունեին բազմաթիվ արտոնություններ: Դրանցից էր հեծելազորում ծառայելու իրավունքը:

Ստորին՝ *անազատների* դասը կազմում էին քաղաքացիները, առևտրականները, արհեստավորները, շինականները (ազատ և կախյալ գյուղացիները), ինչպես նաև քաղաքային ռամիկները, որոնցից կազմվում էր հետևակը:

VIII դ. Արաբական խալիֆայության շուրջ հար-

յուրամյա դաժան գերիշխանության ընթացքում բազմաթիվ հողատեր նախարարներ ոչնչացվեցին, և ծանր հարկերի հետևանքով երկրի զարգացումը խաթարվեց: IX դ. երկրորդ կեսին Հայոց թագավորական իշխանությունը վերականգնումից հետո հայկական ավատատիրական համակարգը լիովին վերականգնվեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ էր Հայոց պետության հողի գերագույն տերը: Որո՞նք էին հողատիրության հիմնական ձևերը:
2. Ինչպե՞ս էին կոչվում ժառանգությամբ փոխանցվող հողային տիրույթները:
3. Ովքե՞ր էին սեպուհները:
4. Ի՞նչ դասերից էր կազմված ավատատիրական աստիճանակարգը Հայաստանում:
5. Ովքե՞ր էին կազմում ազատների և անազատների դասերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Կազմե՛ք ավատատիրական աստիճանակարգության գծապատկերը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավատատիրություն, թագավորական, ծառայողական, մասնատիրական հողատիրություն, հայրենական, Միջնաշխարհ, Ուտրան Հայոց, սեպուհ, աստիճանակարգություն, Տանուտերական իշխանության աշխարհ, ազատներ, անազատներ, շինականներ

§ 2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Թագավորը և արքունի գործակալությունները: Հայ Արշակունիների թագավորության շրջանում՝ 65–428 թթ., պետական կարգը շարունակում էր մնալ միապետական: Պատերազմ հայտարարելու, հաշտություն կնքելու, արտաքին գործերը վարելու գերագույն իրավունքը պատկանում էր թագավորին: Երկրի կառավարման և պաշտպանության գործում կարևոր նշանակություն ունեին պետական վարչությունները՝ գործակալությունները:

Արքունի գործակալությունների ղեկավարների՝ գործակալների (*հազարապետ, սպարապետ, մարդպետ, մաղխազ, Մեծ դատավոր, ասպետություն*) միջոցով թագավորը կառավարում էր երկիրը:

Հազարապետը ղեկավարում էր տնտեսական–հարկային գործը:

Սպարապետը զինված ուժերի գլխավոր հրամանատարն էր:

Ռազմական արվեստի հազարամյակների փորձ ունեցող Հայոց կանոնավոր բանակի թվակազմը 100–120 հազար էր: Այն բաղկացած էր հեծելազորից և հետևակից: Հայոց թագավորի և նախարարների պահած հեծելազորը միասին կազմում էր *հայոց այրուձին*: Թագավորական *ուսպանը* պաշտպանում էին սպարապետի, մաղխազի և մարդպետի գլխավորած հատուկ հեծյալ ջոկատները, որոնք հայտնի էին *ուսպան այրուձի* անունով: Թագավորի անձի պաշտպանությունն ապահովում էր ընտրյալ նետաձիգներից բաղկացած այրուձին՝ մաղխազի հրամանատարությամբ: Ըստ իրենց զորքերի քանակի՝ նախարարները համարվում էին բյուրավորներ, հազարավորներ, հարյուրավորներ, հիսնավորներ և տասնավորներ:

Մարդպետը հսկում էր արքունի կալվածքները և գանձարանը:

Հնում *Մեծ դատավորի* պաշտոնը կատարում էր քրմապետը, իսկ միջնադարում՝ հայոց կաթողիկոսը:

Թագավորական շրջանում «թագակիր ասպետության» գործակալության պարտականությունը թագն արքայի գլխին դնելն էր և պալատական արարողությունները ղեկավարելը:

Մայրաքաղաքը կառավարող քաղաքագլուխը Արտաշատի *շահապն* էր: Այս պաշտոնը թագավորը հանձնում էր պալատական ավագանու ներկայացուցիչներից մեկին:

Պետական գրասենյակը և արքունի դիվանը գլխավորում էր *սենեկապետը,* որը թագավորի անձնական քարտուղարն էր:

Պետական զինանշանը արծիվն էր: Դրոշը ծիրա-

նագույն էր, որի վրա գործված էր ոսկեգույն արծիվ:

Հայ նախարարների զբաղեցրած պաշտոնական դիրքն արքունիքում ու զորքի թվաքանակը գրանցվում էր *Գահնամակում* և *Զորանամակում*: Երկրի համար առավել կարևոր հարցերը քննարկվում էին *Աշխարհաժողովում,* որը հնուց գումարվում էր Բագավանում՝ Հայոց ամանորի՝ Նավասարդի տոնակատարության օրը: IV դ. երկրորդ կեսից Աշխարհաժողովի պարտականություններն աստիճանաբար անցնում են աշխարհիկ ներկայացուցիչների մասնակցությամբ գումարվող եկեղեցական ժողովներին:

Վարչական բաժանումը, քաղաքային կյանքը: Մեծ Հայքի թագավորության վարչական բաժանումը համապատասխանում էր նահանգների (աշխարհներ) գավառաբաժանմանը:

Վաղարշապատի կառուցումով հինավուրց Արտաշատը շարունակում էր պահպանել իր մայրաքաղաք լինելու նշանակությունը: Մեծ Հայքի մյուս քաղաքները՝ Վանը, Երվանդաշատը, Զարեհավանը, Զարիշատը, Կարինը, Մուշը, Արճեշը, Դվինը, Նախիջևանը, Խլաթը, Մանազկերտը, Տիգրանակերտ անունը կրող քաղաքները (Աղձնիքում և Արցախում) կարևոր տնտեսական, մշակութային և արհեստագործական նշանակություն ունեին Մետաքսի ճանապարհի՝ Հայաստանով անցնող մայրուղիների վրա:

Թագավորական շրջանում արքունիքը մայրաքաղաքի միջնաբերդում էր: Հայ ազնվականությունն ապրում էր թագավորական պալատին մոտ թաղամասում: Այնտեղ էր նաև թատրոնը: Քաղաքների որոշակի թաղամասերում ապրում էին առևտրականներն ու արհեստավորները՝ իրենց համքարություններով (զինագործներ, կավագործներ, գորգագործներ, ոսկերիչներ, կաշեգործներ, ներկարարներ և այլն): Քաղաքներում և քաղաքամերձ ավաններում մեծ թիվ էին կազմում մերձակա հողատարածքում այգեգործությամբ և հացահատիկի մշակմամբ զբաղվող ռամիկները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կառավարման տեսանկյունից ինչպիսի՞ երկիր էր Հայաստանը:
2. Ինչո՞ւ էին անհրաժեշտ գործակալությունները:
3. Ներկայացրե՛ք գործակալությունները և նրանց գործառույթները:
4. Ի՞նչ էին բովանդակում Գահնամակը և Զորանամակը:
5. Ինչպե՞ս էր կազմվում հայոց այրուձին:
6. Ովքե՞ր էին իրականացնում թագավորական ոստանի պաշտպանությունը: Որքա՞ն էր հայոց բանակի թիվը:
7. Թվարկե՛ք միջնադարյան Հայաստանի նշանավոր քաղաքներ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ներկայացրե՛ք արքունի գործակալությունները և նրանց գործունեությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործակալություններ, հազարապետ, սպարապետ, մարդպետ, մաղխազ, Մեծ դպրավոր, թագակիր թագակապ ասպետություն, շահապ, Աշխարհաժողով

§ 3. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ

Տրդատ III Մեծ և Գրիգոր Լուսավորիչ: I դ. հաստատվեց Հայ առաքելական եկեղեցին: IV դ. սկզբին քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման մեջ մեծ գործունեություն ծավալեցին ս. Գրիգորը և Տրդատ III–ը: Ս. Գրիգորի կոչով կառուցվեցին Հռիփսիմյան կույսերի վկայարաններ: Այդ գործում Գրիգոր Լուսավորչին օգնեցին Տրդատ թագավորը, թագուհին, թագավորի քույրը և նրանց օգնականները: Ըստ պատմիչ Ագաթանգեղոսի՝ Ազատ Մասիսի գագաթից Տրդատն իր թիկունքին ութ մեծ քար է տեղափոխում և տեղադրում հռիփսիմյան կույսերի վկայարանների հիմքում: Ըստ ավանդության՝ Գրիգոր Լուսավորչի տեսիլքում երևացել է Միածնի՝ Արարիչ Աստծո միակ որդու՝ Քրիստոսի իջած տեղը, որտեղ և կանգ-

Տրդատ III Մեծ (հեղինակ՝ Մկրտում Հովնաթանյան)

նեցվել է փրկչական խաչի նշանը: Այստեղից էլ ծագել է Էջմիածին՝ «Միածնի իջած վայր», անունը:

Հայաստանի բոլոր կողմերից Տրդատ III Մեծի հրամանով նախարարները, ազատները, հայոց զորքը՝ իր զորավարներով, գավառապետները հավաքվում են Վաղարշապատում և Գրիգոր Լուսավորիչին կարգում եպիսկոպոսապետ: Ս. Գրիգորը հայ նախարարների ուղեկցությամբ մեկնում է Կապադովկիայի Մաժաք–Կեսարիա քաղաքը, որտեղ եպիսկոպոսների ժողովը նրան ձեռնադրում է հայոց կաթողիկոս:

Այնուհետև նա վերադառնում է Հայաստան: *Բագավանում՝* Նպատ լեռան ստորոտում, Տրդատ Մեծը, Աշխեն թագուհին և հայոց զորքը մեծ պատիվներով դիմավորում են ս. Գրիգորին: Լուսաբացին հայոց կաթողիկոսն արքունիքին, զորքին և ժողովրդին Արածանիի ջրերում մկրտում է: Այդպես ***301 թ. քրիստոնեությունն աշխարհում առաջինը Հայաստանում հռչակվում է պետական կրոն:***

Ս. Էջմիածին Մայր տաճարի հիմնադրումից հետո հայոց կաթողիկոսը արքայի հովանավորությամբ Հայաստանի քաղաքներում ու գյուղերում եկեղեցիներ է հիմնում՝ Տարոնում՝ Ս. Կարապետի, իսկ Աշտիշատում՝ Ս. Երրորդության: Այնուհետև Հայաստանի նորակառույց եկեղեցիներում և թեմերում ծառայելու համար նա եկեղեցու պաշտոնյաներ է ձեռնադրում՝ ավելի քան չորս հարյուր եպիսկոպոսներ, քահանաներ, սարկավագներ: Նախկին հայ քրմերը և նրանց զավակները, հատկապես Աղբիանոսի տոհմից, համալրում են նրանց շարքերը:

Քրիստոնեության՝ պետականորեն ընդունման պատմական նշանակությունը: Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունումից հետո ավանդաբար պահպանվեցին հնուց եկող շատ տոներ ու ծեսեր և դարձան ազգային–եկեղեցական տոներ՝ Ամանոր, Ս. Ծնունդ, Տընդեզ՝ Տյառնընդառաջ, Ս. Սարգիս, Բարեկենդան, Ծաղկազարդ, Զատիկ կամ Ս. Հարություն, Համբարձում, Վարդավառ Նավասարդ, Խաղողօրհնեք, Խաչվերաց և այլն:

Մեծ վերելք ապրեց հայկական ճարտարապետությունը: *Նախաքրիստոնեական բազիլիկ* և *գլխապոն* կամ *հազարաշեն* կոչվող շինությունների՝ տաճարների և պալատների համադրմամբ առաջացավ եկեղեցաշինությունը, ստեղծվեցին խաչքարեր:

Ազգապահպան մեծ նշանակություն ունեցավ Հայաստանում քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն: Հայ եկեղեցու հովանու տակ հայ գիտության ու մշակույթի մեծ գործիչների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Գրիգոր Տաթևացու և հետնորդների ստեղծագործական ժառանգությունը գումարվեց հազարամյակների խորքից եկող հայ մշակույթի ու գիտության գանձարանին: Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի հոգևոր ու գաղափարական առաջնորդ ու պաշտպանը:

Գրիգոր Լուսավորչի արձանը Հռոմում (Վատիկան)

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշե՛ք Քրիստոսի ո՞ր առաքյալներն են քարոզել Հայաստանում:
2. Բացատրե՛ք «ժամանակ անիշխանությանը» հասկացությունը:
3. Ինչո՞ւ Գրիգորը մեկնեց Կեսարիա:
4. Ի՞նչ գիտեք Ս. Էջմիածնի կառուցման և անվանակոչության մասին:
5. Ինչպե՞ս Լուսավորիչը ստեղծեց հայոց տոնացույցը: Ազգային–քրիստոնեական ի՞նչ տոներ գիտեք:
6. Քրիստոնեության ընդունումն ի՞նչ պատմական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: Ի՞նչ առաքելություն ստանձնեց հայոց եկեղեցին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ առաքելական եկեղեցի, վկայարան, Տրդատ Մեծ, Գրիգոր Լուսավորիչ, եկեղեցաշինություն, ձեռնադրել, ազգային եկեղեցական տոներ

ԳԼՈՒԽ II
ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 301–428 ԹԹ.

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Հայոց թագավորական իշխանության ամրապնդումը: Տրդատ III: Մեծ Հայքի թագավորությունը արևմուտքից սահմանակից էր Հռոմեական կայսրությանը, իսկ հարավից՝ Սասանյանների թագավորությանը: Հյուսիսից Վիրքի և արևելքից բուն Աղվանքի (Աղուանք) հետ սահմանն անցնում էր Կուր գետով:

Վաղ միջնադարում Առաջավոր Ասիայում մեծ ազդեցություն ունեին Հռոմեական կայսրությունը և Սասանյան Իրանը, որոնք հակամարտում էին միմյանց դեմ: Ի թիվս այլ երկրների՝ Հայաստանը նույնպես այդ երկու տերությունների միջև էր ընթացող պայքարի ոլորտում: Սասանյանների պարտությունից հետո՝ 298 թ., Մեծ Հայքի թագավորությունը վերականգնեց իր անկախությունը: Տրդատ III–ն սկսեց վարել երկրի ռազմական ու տնտեսական հզորության ամրապնդման քաղաքականություն:

Տրդատ III–ի գահակալությամբ Մեծ Հայքում խաղաղություն և բարեկեցություն վերահաստատվեց: Արքան երիտասարդ էր, բայց հմտորեն տիրապետում էր ռազմական արվեստին, բարեպաշտ և հմուտ պետական գործիչ էր: Տրդատ III Մեծի գործունեությամբ հզորացան կենտրոնական իշխանությունը և բանակը: Նա բարձրացրեց պետական վարչությունների՝ գործակալությունների դերը երկրի կառավարման և պաշտպանության գործում (հազարապետություն, սպարապետություն, մարդպետություն, մաղխազություն, ասպետություն, Մեծ դատավոր):

Հայոց պետության անկախության երաշխավորը հայոց բանակն էր:

Տրդատ III–ի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ երկրի տնտեսությունը վերելք է ապրում: Մի-

ջազգային ասպարեզում, քաղաքական և տնտեսական դրության կայունացմանը զուգընթաց նոր թափ է ստանում առևտուրը, որի գլխավոր կենտրոններն էին Մեծ Հայքում՝ Արտաշատը, իսկ Հյուսիսային Միջագետքում՝ Մծբինը: Հայաստանի մյուս քաղաքները՝ Տիգրանակերտը, Վանը, Նախիջևանը, Վաղարշապատը, Ձարեհավանը, Երիզան, նույնպես ընդգրկված էին միջազգային տարանցիկ աշխույժ առևտրի մեջ:

Տրդատ III–ը քայլեր է ձեռնարկում Հայ եկեղեցուն տնտեսապես ապահովելու նպատակով: Գյուղական եկեղեցիների քահանաներին տալիս է հողաբաժիններ, դրանով իսկ սկզբնավորվում է եկեղեցական հողատիրությունը:

Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Մեծը ձեռնամուխ են լինում կրթության գործին: Հայաստանի զանազան գավառներից հավաքված մանուկների մի մասին տալիս են ասորերեն դպրության, մյուսներին՝ հունարեն: Դրա նպատակը հայերենի հմուտ թարգմանիչներ պատրաստելն էր՝ եկեղեցական քարոզներում Ավետարանի խոսքը հայերեն բանավոր թարգմանությամբ ժողովրդին հասցնելու, ինչպես նաև պետական գրագրություն կատարելու համար:

Ս. Գրիգորն աշխահիկ կյանքից առանձնացել և միայնակ՝ ճգնավորի կյանքով ապրում էր Բարձր Հայքի Դարանաղի գավառի մի քարայրում: Տրդատ արքան կաթողիկոսի որդիների՝ ***Վրթանեսի*** և ***Արիստակեսի*** հետ գնում է այնտեղ: Արքայի խնդրանքով ս. Գրիգորը Արիստակեսին եպիսկոպոս է ձեռնադրում: Արիստակեսը մասնակցում է ***325 թ. Նիկիայի*** առաջին տիեզերական ժողովին: Արիստակեսը, վերադառնալով Հայաստան, բերում է Նիկիական կանոնները: Դրա ս. Գրիգորը ավելացնում է իր կանոնախումբը:

Տրդատ թագավորը Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի եպիսկոպոս է ձեռնադրում Վրթանեսի որդուն՝ մանուկ ***Գրիգորիսին:*** Նրա հոգևոր իշխանության տակ էին Հայոց Արևելից կողմերը՝ Արցախ



Գեղի ամրոցը (Կաքավաբերդը) Խոսրովի անտառի տարածքում

և Ուտիք աշխարհները, Փայտակարանը, ինչպես նաև Վիրքն ու բուն Աղվանքը՝ որպես Հայ առաքելական եկեղեցուն ենթակա եպիսկոպոսություններ: Գրիգորիսը քրիստոնեական քարոզչության ժամանակ դաժանորեն սպանվեց Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Մազքթաց երկրի թագավոր Սանեսանի հրամանով: Ս. Գրիգորիսի մարմինը նրա հավատակիցները հողին հանձնեցին Արցախի Ամարաս գյուղում՝ իր պապի՝ ս. Գրիգոր Լուսավորչի կառուցած եկեղեցում:

Խոսրով III Կոտակ: Տրդատ Մեծի որդին՝ Խոսրով III Կոտակը (330–338 թթ.), շարունակում է Մեծ Հայքի թագավորության ամրապնդման քաղաքականությունը: Նրա օրոք հայոց կաթողիկոս է դառնում ս. Գրիգոր Լուսավորչի ավագ որդին՝ Վրթանես Ա Պարթևը:

Տնտեսությունն ու քաղաքաշինությունը երկրում վերելք են ապրում: Արտաշատի մոտակայքում ճահիճներ էին առաջացել Երասխի վտակ Մեծամորի հունը փոխվելու հետևանքով: Ուստի Խոսրովն արքունիքը տեղափոխում է ոչ հեռու գտնվող ***Դվին*** քաղաքը: Արքայի հրամանով անտառատներ տնկվեցին: Գառնի ամրոցից մինչև Դվին կաղնու անտառի մի մասը կոչվեց «Տաճար մայրի», իսկ մյուսը՝ «Խոսրովակերտ» («Խոսրովի անտառ»): Անտառները դարձան նաև արքայական որսատեղի:

Հայոց սպարապետ ***Վաչե Մամիկոնյանը 335 թ.*** ջախջախում է Հայաստան ներխուժած մազքթաց Սանեսան թագավորի զորքը: Հաջորդ տարիներին Սասանյանների ներխուժումները կասեցվում են սպարապետ Վաչե Մամիկոնյանի և նրա զինակիցների կյանքի գնով: Վրթանես կաթողիկոսի սահմանած կարգով հայրենիքի պաշտպանության համար իրենց կյանքը զոհաբերողներին դասում են սուրբ նահատակների շարքին:

Խոսրով Կոտակը սպարապետության պատիվը շնորհում է Վաչե Մամիկոնյանի որդուն՝ Արտավազդին: Խոսրով Կոտակին հաջորդում է որդին՝ ***Տիրանը:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քայլեր ձեռնարկեց Տրդատ III–ը կենտրոնական իշխանության և բանակի հզորացման ուղղությամբ:
2. Որտեղ էր առանձնացել Լուսավորիչը:
3. Հայաստանից ո՞վ մասնակցեց Նիկիայի տիեզերական ժողովին: Ինչ գիտեք այդ ժողովի մասին: Ինչ է «Հավատո հանգանակը»:
4. Ո՞վ էր Գրիգորիսը և ինչ գործունեություն էր իրականացնում:
5. Երբ է թագավորել Խոսրով III Կոտակը: Ո՞ւմ անցավ Լուսավորչի գահը: Ինչ գործերով է հայտնի Խոսրով Կոտակը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ճգնավոր, Նիկեայի տիեզերական ժողով, «Հավատո հանգանակ», Գրիգորիս եպիսկոպոս, Խոսրով III Կոտակ, Վրթանես Ա Պարթև, Վաչե Մամիկոնյան

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՏՐԴԱՏ ՄԵԾԻ ՄԱՍԻՆ

«Խոսրովի որդի Տրդատի թագավորության ժամանակ Հայոց աշխարհը լուսավորվեց հաճոյական սիրով և հավատի աստվածապաշտության հավատով, որին ծանոթացավ մեծ քահանայի՝ Գրիգորի միջոցով... Սրանից հետո թագավորեց Խոսրով Կոտակը՝ Խոսրովի թոռը՝ քաջ և առաքինի Տրդատ թագավորի որդին: Սրա ժամանակ քահանայապետ եղավ և իր հոր ու եղբոր աթոռը նստեց Վրթանեսը, Գրիգորի երեց որդին: Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի հաջողություն և աստվածային մեծ պաշտամունքը աստվածահաճո բարի վարք: Սուրբ Վրթանեսը իր հոր և եղբոր նման նրանց լուսավորում էր և առաջնորդում: Այն դարում ծաղկում էին իրավունքն ու արդարությունը»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, III, Գ:

§ 2–3. ՊԱՅՔԱՐ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՀԱՄԱՐ: ԱՐՇԱԿ II, ՊԱՊ

Տիրանի գահակալությունը: Տիրանի (339–350 թթ.) գահակալությունն ընթացավ բարդ քաղաքական պայմաններում: Արքան ձգտում էր Մեծ Հայքի թագավորությունը զերծ պահելու Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի (Պարսկաստանի) միջև ընթացող քաղաքական պայքարի մեջ ներքաշվելուց: Տիրանի մի որդուն՝ Տրդատին և նրա զավակներին՝ Գնելին ու Տիրիթին, Կոստանդիոս II կայսրը պատանդ էր պահում կայսրությունում: Տիրանը խնդիրներ ուներ նաև երկրի ներսում՝ Հուսիկ կաթողիկոսի և նախարարների մի խմբավորման հետ: Օգտվելով Տիրանի համար ստեղծված բարդ իրավիճակից՝ Հայաստան եկած Ատրպատականի մարզպանը դավադրաբար ձերբակալում է նրան, ածուխով աչքերը դաղում ու տանում պարսից Շապուհ արքայի մոտ: Պարսիկները ցանկանում էին, որ Տիրանը չգործի իրենց թշնամի հռոմեացիների կողմից: Որոշ ժամանակ անց, պարսից արքան ազատ է արձակում հայոց թագավորին: Այդ ժամանակ Մեծ Հայքում թագավորությունն անցնում է Տիրանի մյուս որդուն՝ Արշակ II–ին:

Արշակ II–ի քաղաքականությունը: Արշակ II–ը (350–368 թթ.) դարձավ Արշակունիների ամենանշանավոր արքաներից մեկը: Նա սկսեց վարել ինքնուրույն քաղաքականություն: Հայոց արքային ահաբեկելու նպատակով կայսրը հրամայեց Հռոմում սպանել նրա եղբորը՝ արքայազն Տրդատին: Սակայն Արշակը չի ընկճվում: Նրա խորհրդով՝ Ներսես Ա կաթողիկոսը միջնորդում է, որ Հայաստան վերադառնան Գնելն ու Տիրիթը: Գնելն ամուսնացել էր Անդովկ Սյունու աղջկա՝ Փառանձեմի հետ, որին սիրում էր նաև Տիրիթը: Նա Արշակին տրամադրել էր Գնելի դեմ: Սակայն վերջինիս սպանությունից հետո Տիրիթը ևս չի խուսափում արքայի ցասումից և մահապատժի է ենթարկվում: Այդ դեպքերից հետո Արշակն ամուսնանում է Փառանձեմի

Ներսես կաթողիկոս

հետ: Շուտով ծնվում է նրանց թագաժառանգ Պապը: Այդ ընթացքում արքունիքի և նախարարական տների միջև աճող լարվածությունը սպառնում էր երկրի կայունությանը:

354 թ. Ներսես Ա–ն ***Աշտիշատում*** հրավիրում է Հայ եկեղեցու առաջին ժողովը: Այնտեղ ընդունված հոգևոր և աշխարհիկ կյանքին առնչվող կանոնների համաձայն՝ կառուցվում են վանքեր, դպրոցներ, աղքատանոցներ: Ընդունվում է մի կանոն, որով հայոց թագավորին ու մեծամեծներին կոչ էր արվում լինելու գթասիրտ իրենց ծառաների և հասարակ ժողովրդի նկատմամբ: Մյուս կողմից՝ ծառաներին պատվիրվում էր հնազանդ ու հավատարիմ լինել իրենց տերերին:

Կենտրոնական իշխանության ամրապնդման նպատակով Արշակ II–ը որոշում է Կոգովիտում կառուցել Արշակավան քաղաքը: Երկրում լարվածությունը մեղմելու նպատակով նա թույլատրում է Արշակավանում բնակություն հաստատել բոլոր ցանկացողներին, նույնիսկ օրինազանցներին, որոնք ազատ էին լինելու դատ ու դատաստանից: Իրենց տերերից դժգոհ ծառաներն ու շինականներն սկսում են փախչել և ապաստան փնտրել նոր կառուցվող քաղաքում: Դա առաջացնում է նախարարների դժգոհությունը: Նրանք հարձակվում և ավերում են քաղաքը:

359 թ. վերսկսված հռոմեա–պարսկական պատերազմի ժամանակ Շապուհ II–ը օգնություն է խնդրում Արշակից: Հայոց զորքով Մծբին քաղաքի մոտ Արշակը պարտության է մատնում հռոմեական զորքին: Շապուհն առաջարկում է Արշակին ամուսնանալ իր դստեր հետ, բայց Արշակը հրաժարվում է: Շուտով Շապուհը թշնամանում է Արշակի հետ: Հայոց արքան, վերադառնալով հայրենիք, ընդունում է Արևելք եկած հռոմեական կայսեր հրավերը և նրա հետ հանդիպում է Մաժաքում: Հայ–հռոմեական վերականգնված դաշինքն ամրապնդվում է Արշակի և կայսերական ընտանիքից Օլիմպիայի ամուսնությամբ: Սակայն շուտով Օլիմպիա թագուհուն թունավորում են:

Շապուհ II–ի դրամներից

Պարսկա–հռոմեական պատերազմն ավարտվում է հռոմեացիների պարտությամբ: Նոր գահակալած կայսեր ու Շապուհ արքայի միջև 363 թ. կնքվում է հաշտություն: Պայմանագրի համաձայն՝ կայսրը պարտավորվում էր չօգնելու հայերին: Այդ պայմանագիրը IV դ. հռոմեացի պատմիչ Ամմիանոսն անվանել է «ամոթալի»:

Հայկական զորքերի հաղթանակները: Այս ժամանակաշրջանից սկսվում են սասանյան զորքերի ներխուժումները Մեծ Հայքի տարածք: ***Գանձակ*** (Շահաստան) քաղաքում Վասակ սպարապետի գլխավորած Հայոց զորքը 363 թ. դիմակայում և ջախջախում է Շապուհի ուղարկած ուժերին: Հաջորդ տարի Հայաստան ներխուժած պարսից զորքերը նոր պարտություններ են կրում հայոց բանակից:

Շապուհը, պարտվելով Վասակից, դիմում է խորամանկ քայլի: Նա Մերուժան Արծրունուն առաջարկում է աջակցել իրեն: Վերջինս, հավատալով հայոց գահն իրեն տալու Շապուհի խոստմանը, ուրանում է քրիստոնեությունը և մազդեզականություն է ընդունում:

Հերթական արշավանքի ընթացքում պարսից մեծաքանակ զորքն ուժեղ դիմադրության է հանդիպում ***Անգեղ*** ամուր բերդում: Չկարողանալով գրավել այդ բերդը՝ նրանք մեկնում են Դարանաղի գավառ ու գրավում են ***Անի*** բերդը, որտեղ ամփոփված էին Արշակունի արքաների աճյունները և գանձերը: Բացի Սանատրուկ թագավորի գերեզմանից, որը շատ ամուր էր, պարսիկները բացում են արքայական մյուս գերեզմանները և գերեվարում թագավորների ոսկորները՝ ասելով. «Հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհն ենք տանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն և քաջությունը այստեղից թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվեն»: Սակայն հայոց 60000–անոց զորքը Վասակ սպարապետի գլխավորությամբ ջախջախում է թշնամուն, ազատում թագավորների ոսկորները և վերաթաղում Արագածի լանջին գտնվող **Աղձք** գյուղում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 298–387 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Մեծ Հայքի տարածքը
Այլ պետություններ
Կապաղակ Մայրաքաղաքներ
Վան Անի Խոշոր քաղաքներ, բերդեր
Սև ծով
Կասպից ծով
Միջերկրական ծով
Արևելյան երկրներ
Մեծ Հայք
Ասորիք
Մեծ Մարք
Վիրք
Աղվանք
Ատրպատական
Կապադովկիա
Ասորեստան
Բաբելոնիա
Մարաստան
Ասորիք

Արտագերս

Պայքար պարսից զավթողական քաղաքականության դեմ: Պատերազմում հաջողության չհասնելով՝ Շապուհ արքան դիմում է նենգության: Նա դեսպանների միջոցով Արշակին հրավիրում է Տիզբոն՝ իբր թե վիճելի հարցերը կարգավորելու: Նախօրոք երդում ստանալով Շապուհից իրենց անվտանգության վերաբերյալ՝ Արշակ թագավորը և սպարապետ Վասակ Մամիկոնյանը մեկնում են Տիզբոն (368 թ.): Շապուհը, չկատարելով իր խոստումը, սպարապետ Վասակ Մամիկոնյանին տանջամահ է անում: Արշակին ձերբակալում են և նետում ***Անհուշ*** բերդը, որտեղ նա ևս մահանում է:

Այդ նույն ժամանակ պարսից պաշարման մեջ էր հայտնվել ***Արտագերս*** ամրոցը, որտեղ հերոսական դիմադրություն էին ցուցաբերում Փառանձեմ թագուհու գլխավորած տասնմեկ հազար ընտիր զորականները: Թագուհին հույս ուներ, որ օգնության նպատակով կայսրություն մեկնած իր որդին՝ Պապը, շուտով կվերադառնա հռոմեական օգնական ուժով:

Երկարատև պաշարման հետևանքով սկված համաճարակը, սովը և անընդմեջ կռիվները հյուծում են Արտագերսի պաշտպաններին: Պարսիկ զավթիչները, ներխուժելով ամրոց, ոչնչացնում են ողջ մնացածներին, իսկ Փառանձեմին՝ խոշտանգելով սպանում:

Այդ ընթացքում Մերուժան Արծրունին և նրան

միացած Վահան Մամիկոնյանն ավերածություններ էին գործում, ատրուշաններ կառուցում և ժողովրդին բռնի կերպով պարտադրում մազդեզական կրոնը: Ուրացյալ Վահանին սպանում է նրա որդին՝ Սամվել Մամիկոնյանը: Հետագայում Ռաֆֆին այս դեպքերի գեղարվեստական նկարագրությունը տվել է «Սամվել» պատմավեպում:

Պապ թագավոր: Հռոմեական օգնական զորքով Պապը վերադառնում է և հաստատվում հայոց գահին (370–374 թթ.): Հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանը երկիրը մաքրում է թշնամու զորքերից և լուծում Արշակ արքայի և իր հոր՝ Վասակ սպարապետի վրեժը: Մուշեղը դառնում է սպարապետ, վերականգնում երկրի սահմանները՝ Ուրմիայից հարավ գտնվող Գանձակ Շահաստանով, իսկ հյուսիսում՝ Մեծ Հայքի և Վիրքի միջև՝ Կուր գետով: Մուշեղ զորավարը քանդում է նորակառույց մազդեզական ատրուշանները: Երկրում վերաշինվում են ավերված բնակավայրերը, նորոգվում եկեղեցիները, զարգանում է տնտեսությունը:

370 թ. Մուշեղը 40 հազար զորականներով Հայաստանի հարավային սահմանագլխին ջախջախում է պարսից զորքը: Պարսից հրամանատարներից շատերը ձերբակալվում են և Մուշեղի հրամանով մահապատժի ենթարկվում: Մուշեղի ձեռքն են ընկնում պարսից արքայական գանձարանը և կանայք, որոնք նրա հրամանով ազատ են արձակվում: Զայրացած թագավորը հանդիմանում է Մուշեղին, որ նա անհարկի մեծահոգաբար էր վարվել իր մոր դահճի՝ Շապուհի նկատմամբ՝ ազատելով պարսից արքայի կանանոցը:

371 թ. տեղի է ունենում ***Զիրավի*** վճռական ճակատամարտը: Պապ թագավորի հրամանով հայոց զորքերը, հռոմեական զորաջոկատի հետ միավորված, բանակ էին դրել Այրարատ նահանգի Բագրևանդ գավառի Զիրավի դաշտում: Հայոց ավելի քան 90 հազարանոց զորքի հրամանատարը Մուշեղ սպարապետն էր: Պապ թագավորը և Ներսես կաթողիկոսը բարձրացել էին ***Նպատ լեռը***՝

Արածանի գետը Ձիրավի դաշտում

Վաղեմ կայսեր արձանի գլուխը

այնտեղից հետևելու ճակատամարտին: Կաթողիկոսի բարեխոսությամբ Պապի զայրույթը փարատվում է Մուշեղի նկատմամբ:

Լուսադեմին սկսվում է ճակատամարտը: Ներսես կաթողիկոսը, բազուկները տարածած, աղոթում էր Նպատ լեռան գագաթին: Հայոց զորքերը հաջողությամբ գրոհում են պարսիկների վրա: Հակառակորդը ջախջախվում և փախչում է մարտադաշտից: Հաղթանակը կատարյալ էր: Դավաճան Մերուժանը գերի է ընկնում: Ասպետ Սմբատ Բագրատունին նրան մահապատժի է ենթարկում:

Հաղթանակից հետո Պապ թագավորը և Մուշեղ սպարապետը զբաղվում են Հայոց թագավորության հզորության ամրապնդմամբ: Պապի բարեփոխումների շնորհիվ հայոց բանակի թիվը հասնում է մոտ 100 հազարի: Հոգևորականների հարազատներին պարտադրվում է պետական և զինվորական ծառայություն կատարել: Եկեղեցական հողատիրությունը կրճատվում է:

Պապի անկախ քաղաքականությանը դեմ էր Հռոմեական կայսրությունը: 373 թ. հռոմեական կայսեր հրամանով խնջույքի ժամանակ Պապին դավադրաբար սպանում են: Հռոմեացի պատմիչ Ամմիանոսը խստորեն դատապարտել է Հռոմի այդ նենգ քայլը հայոց արքայի նկատմամբ:

Պապին հաջորդած իր ազգականը՝ **Վարազդատը (374–378 թթ.),** հայտնի էր որպես օլիմպիական խաղերի հաղթող, երիտասարդ էր և Մեծ Հայքի թա-

գավորության պաշտպանության և կառավարման գործն իրականացնում էր Մուշեղ սպարապետի խորհուրդներով: Իսկ նրան հաջորդած Պապի որդիների՝ Արշակ III–ի ու նրան գահակից Վաղարշակի խնամակալը սպարապետ **Մանվել Մամիկոնյանն** էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞վ փոխարինեց Խոսրով Կոտակին. ե՞րբ է գահակալել:
2. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Տիրանը. ինչո՞ւ:
3. Ինչ ճակատագրի արժանացավ Տիրանը. ո՞վ փոխարինեց նրան:
4. Ներկայացրե՛ք Արշակ II–ին:
5. Ո՞վ էր հայոց կաթողիկոսը և նրա միջնորդությամբ ովքե՞ր վերադարձան Հայաստան:
6. Ե՞րբ և ո՞ւմ կողմից է հրավիրվել Աշտիշատի ժողովը: Ինչո՞վ էր այն նշանավոր: Ի՞նչ կարևոր որոշումներ ընդունեց այդ ժողովը:
7. Ի՞նչ ընթացք և ավարտ ունեցան Արշակ II–ի և իր եղբորորդիների միջև հարաբերությունները:
8. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Արշակ II–ը:
9. Ինչպե՞ս ավարտվեց հայ–պարսկական պատերազմը:
10. Նկարագրե՛ք Ձիրավի ճակատամարտը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիրան, Արշակ II, Ներսես Ա կաթողիկոս, Աշտիշատի եկեղեցական ժողով, Արշակական, Վասակ Մամիկոնյան, «ամոթալի» պայմանագիր, Պապ, Ձիրավի ճակատամարտ, Մուշեղ Մամիկոնյան

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԺԻ ՄԱՍԻՆ

Պարսից պալատում Արշակի միտքը փորձելու նպատակով Շապուհը հրամայում է Հայաստանից բերված հողով ծածկել դահլիճի հատակի կեսը ու ջրով ցանել:

Շապուհի հետ ճեմելու ժամանակ, երբ հայտնվում էին հայկական հողի վրա, Արշակը սաստիկ ըմբոստանում էր ու ասում. «Հեռո՛ւ ինձանից, չարագո՛ր ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը»: Շապուհի նենգ հրամանով Արշակին ձերբակալում են Անհուշ բանտի զնադանում:

Հաջորդ օրը Շապուհի հրամանով պալատ բերված Վասակ Մամիկոնյանին նա ծաղրանքով ասում է. «Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր խանգարիչը, որ այսքան չարչարեցիր մեզ... Ես քեզ պիտի աղվեսի մահով սպանեմ»: Վասակ սպարապետը մեծ արժանապատվությամբ պատասխանում է. «Այժմ, երբ ինձ տեսնում ես կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչև այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես: Բայց մինչ ես Վասակն էի, հսկա էի, մի ոտս հենում էի մի լեռան վրա, իսկ մյուսն էլ՝ մյուս լեռան. երբ հենվում էի աջ ոտքիս վրա՝ աջ կողմի լեռն էր գետնի տակ անցնում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էր գետնի տակ անցնում»: Շապուհի հարցին, թե որոնք էին այդ լեռները, Վասակ սպարապետը պատասխանում է. «Այդ երկու լեռներից մեկը դու էիր, իսկ մյուսն էլ՝ հունաց թագավորը»: Կատաղած Շապուհը հրամայում է Վասակին մաշկազերծ անել, սպանել և խոտով լցնել ու դնել Արշակի առջև:

Արշակի հավատարիմ պալատական Դրաստամատին նույնպես Պարսկաստան էին տարել, որը արևելյան քոչվորների դեմ տեղի ունեցած մի ճակատամարտում փրկել էր Շապուհին: Այդ պատճառով Շապուհը նրան թույլ էր տվել այցելել Արշակին բանտում: Դրաստամատը արքայավայել ընթրիք է կազմակերպում, որի ժամանակ մեծ արժանապատվության տեր Արշակը քաղցրավենիքի համար նախատեսված դանակը խրում է սիրտն: Դրաստամատը նույնպես ինքնասպան է լինում:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, IV, 54:

§ 4. ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

Մեծ Հայքի թագավորությունը Խոսրով IV–ի և Վռամշապուհի օրոք: 385 թ. պարսից արքան հայ Արշակունիների տոհմից Խոսրով IV–ին (385–388 թթ.) ուղարկեց Հայաստան: Արշակ III–ը ստիպված էր հեռանալ Մեծ Հայքի թագավորության արևմտյան մասը: 387 թ.՝ Արշակ III–ի մահվանից հետո, Մեծ Հայքի արևմտյան մասի կառավարումը կայսրը հանձնում է կուսակալներին: Այսպիսով՝ Մեծ Հայքի թագավորությունը բաժանվում է Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև: Արևմտյան Հայաստանի հյուսիսային մասը հռոմեական աղբյուրներում շարունակում է կոչվել *Մեծ Հայք* կամ *Ներքին Հայք,* իսկ

ՀԱՅԱՍՏԱՆԸ 387–428 ԹԹ.


ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Մեծ Հայքի սահմանները 387 թ.
Այլ պետությունների սահմանները 387-428 թթ.
Բյուզանդական Կայսրության պրովինցիաների սահմաններ
Ինքնավար սատրապությունների սահմաններ
Հայկական մարզպանության տարածքը
Արևելա-Հայկական թագավորության մեջ նախկինում մտնող տարածքները
Ներքին Հայքի կամ Կոմեական Հայաստանի տարածքը
387 թ. Հայաստանից անջատված և Պարսկաստանին միացված տարածքները
Դվին Մայրաքաղաքներ
Վան Մոշ Վարչկենտրոններ, այլ քաղաքներ
Անփիր Ամրոցներ
ՊՈՆՏՈՍ ՊՈՂԵՄՈՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
Մասշտաբ 1:5 500 000
(1 սմ = 55 կմ)
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ (395-ից ԲՅՈՒԶԱՆԴԻԱԿԱՆ) ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՎԵԼԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ԱՍՈՐԻՍՏԱՆ (ԱԴԻԱԲԵՆԵ)
ԱՍՍԱՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ԱՐՎԱՍՏԱՆ
ԿՈՂՔԻՄ
ՄՑԽԵԹ
ԳՈՒԳԱՐՔ
ԳՈՒԳԱՐՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԿՂԱՐՋՔ
ՏԱՅՔ
ԱՅՐԱՐԱՏ
ԳԱՐԴՄԱՆ
ՀԱՇՏԻՇՔ
ԱՂՎԱՆՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՏՈՒՌՆ
ԱՐՇԱՄՈՒՆԻՔ
ՄՈԿՔ
ՍԱՍՈՒՆՔ
ՄԱՍՏԱՑՔ
ՄԱՍՏԱՑՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՏՈՓՔ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՈՂԹՆ
ԳԱՐԵՆԻԿ ՇԱՀԱՍՏԱՆ
Դարբանդ (Ճորա պահակ)
Ջոր (Ճոր)
Կապաղակ
Ցոր
Դերբենդ
Տիգրանակերտ
Վարդանակերտ
Փարեպկարան
Բագավան
Նախճավան
Զարեհավան
Բաղաբերդ
Վայոց ձոր
Գեղարքունիք
Գեղամա ծով
Սևանա լիճ
Սևան
Մասիսի
Արտաշատ
Դվին
Գառնի
Օշական
Գարգարան
Գեղարդ
Գարնի
Գարնի ամրոց
Կարս
Կոմայրի
Էրեբունի
Արտաշատ
Արտաշատ
Վաղարշապատ
Վաղարշավան
Բլուր
Ոստան
Ոստանի
Ոստանի ամրոց
Ոստանի ամրոց
Ոստանի ամրոց

հարավարևմտյան մասում պահպանվում են հայ նախարարների ինքնուրույն իշխանությունները:

Հայաստանի ավելի մեծ՝ արևելյան մասում գահակալող Խոսրով IV–ը, հարկ վճարելով կայսրությանը, որոշ ժամանակ իշխում էր նաև Հայաստանի արևմտյան՝ ավելի փոքր մասի վրա: Առանց պարսից արքունիքի հետ համաձայնեցնելու Խոսրովը Սահակ Պարթևին հայոց կաթողիկոս էր նշանակել: Խոսրով թագավորի ինքնուրույն քայլերն առաջացնում են Շապուհ III–ի դժգոհությունը: Նրա հրամանով պարսիկ պաշտոնյաները ձերբակալում են Խոսրովին: Վերջինիս ազատելու հայ նախարարների փորձը հաջողություն չի ունենում:

Խոսրով IV–ին փոխարինում է եղբայրը՝ Վռամշապուհ արքան, որն իմաստուն քաղաքական գործիչ էր: Նրա թագավորության տարիները (388–414 թթ.) խաղաղ էին ու արգասավոր: Վռամշապուհը նույնպես ամեն ջանք գործադրում էր երկիրը միավորելու ուղղությամբ: Հաջողվում է ստանալ պարսից արքունիքի համաձայնությունը ՝ Սահակ Պարթևի դստեր ամուսնուն՝ ***Համազասպ Մամիկոնյանին*** նշանակելու հայոց սպարապետ: Նաև վերադարձվում են Խոսրովի ազատման համար պայքարած նախարարների տիրույթները, որոնք բռնազավթվել էին պարսից արքունիքի կողմից:

Վռամշապուհին հաջողվում է միավորել Մեծ Հայքի երկու մասերը Արևելահռոմեական կայսրությանը Բյուզանդիային և Պարսկաստանին հարկ վճարելու գնով:

Վռամշապուհ արքայի պետական գործունեությամբ վերելք ապրեց հայ մշակույթը: Արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը (405 թ.), որով սկսվում է Հայոց Ոսկեդարյան գրականությունը:

Հայ Արշակունիների արքայատոհմի անկումը: Վռամշապուհի մահից հետո հայ նախարարների խնդրանքով պարսից արքունիքը կրկին Հայոց թագավոր է հաստատում Խոսրով IV–ին, սակայն

ութ ամիս անց նա մահանում է (415 թ.): Պարսից արքան հայոց գահին բազմեցնում է իր որդուն՝ Շապուհին (416–420 թթ.), որի վարքն առաջացնում է հայ ժողովրդի խիստ դժգոհությունը: Հայ նախարարները ջախջախում են Հայաստան մտած պարսից զորագնդին: Հայոց գահին հաստատվում է Վռամշապուհի որդին՝ ***Արտաշեսը*** (422–428 թթ.): Նա եղավ հայ Արշակունի վերջին արքան Մեծ Հայքի թագավորության գահին: 428 թ. հայ Արշակունյաց թագավորությունն անկում ապրեց:

Ըստ Եղիշեի՝ «Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»: ***Հայկական պետականությունը պահպանվում էր նախարարական համակարգի միջոցով:***

«Հայոց այբուբենը»
(հեղինակ՝ Գրիգոր Խանջյան)

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք Մանվել Մամիկոնյանի գործունեությունը: Երբ և ինչո՞ւ Արշակ III–ը հեռացավ Հայաստանի արևմտյան մասը:
2. Ո՞վ էր Վռամշապուհը և ե՞րբ է թագավորել: Ի՞նչ քաղաքականություն էր վարում նա: Համառոտ ներկայացրե՛ք նրա վարած քաղաքականության հիմնական ուղղություններն ու հետևանքները:
3. Ովքե՞ր հաջորդեցին Վռամշապուհին հայոց գահին:
4. Քաղաքական և հոգևոր ի՞նչ մթնոլորտ էր Մեծ Հայքում Արտաշես Արշակունու օրոք:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԸ ՁԻՐԱՎԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«Պապ թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և սուրբ Ներսեսը իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով, խնդրում էր Տիրոջից, որ խնայե իր ուխտին և սուրբ եկեղեցիներին... Մինչդեռ նա աղոթում էր Աստծուն, հայոց բոլոր զորքերի ճակատը կրակի նման գնում էր Պարսից զորքերի դեմ...»:

Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, V, Դ:

ԳԼՈՒԽ III

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ V ԴԱՐՈՒՄ

§ 1–2. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հազկերտ II–ի դրամներից

Հայ նախարարական համակարգը մարզպանական շրջանում: Հայաստանի արևելյան և արևմտյան մասերում նախարարները մնում էին իրենց տիրույթների տերերը: Հազարապետի պաշտոնում Վահան Ամատունին էր, իսկ սպարապետը Վարդան Մամիկոնյանն էր: Այդ նախարարական համակարգը հզոր ուժ էր: Սասանյան և հռոմեական նվաճողները ձգտում էին թուլացնել այդ միասնությունը: Սասանյանները նպատակ էին դրել Արևելյան Հայաստանը դարձնելու իրենց տերության վարչաքաղաքական միավորներից մեկը՝ մարզպանություն: Վռամ արքան որպես մարզպան Արևելյան Հայաստան ուղարկեց մի պարսիկ պաշտոնյայի, իսկ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին, որ այդ ժամանակ Տիզբոնում էր, արգելափակեց պարսից պալատում: Վռամը Հայաստան ուղարկեց տարբեր դրածոների, սակայն հայ հոգևորականները նրանցից ոչ մեկին չընդունեցին: Հայ հոգևորականները դիմեցին պարսից արքային՝ պահանջով թույլ տալ Սահակ Պարթևին վերադառնալ Հայրենիք: Վախենալով հայերի ընդվզումից՝ Վռամը բավարարեց նրանց պահանջը: Սահակ Պարթևը վերադարձավ Հայաստան, սակայն սահմանափակված իրավունքներով: Նա կարող էր զբաղվել միայն կրթական գործով, իսկ եկեղեցու գլուխ պարսից արքան կարգում է մի ասորու, որը չընդունվեց ո՛չ հոգևորականության, ո՛չ ժողովրդի կողմից:

Պարսկաստանում Հազկերտ II–ի գահակալությամբ հայ ժողովրդի վիճակը Հայաստանում կտրուկ վատթարանում է: Պարսից տերության սահմանները պաշտպանելու և միևնույն ժամանակ Հայաստանի ռազմական հզորությունը թուլացնելու նպատակով

Հազկերտը հայոց գնդերն ուղարկեց Արևելք՝ քոչվոր հոների դեմ պատերազմելու: Հազկերտը ծրագրել էր նաև հայերի կրոնափոխությունը:

439 թ. սեպտեմբերի 7–ին վախճանվեց Սահակ Պարթևը: Նրա աճյունը հողին հանձնվեց Տարոն գավառի Աշտիշատ գյուղում: 440 թ. փետրվարի 17–ին Վաղարշապատում մահացավ Մեսրոպ Մաշտոցը: Հազարապետ Վահան Ամատունին նրա աճյունը հողին հանձնեց իր կալվածքում՝ Օշականում: Մեսրոպ Մաշտոցի դամբարանի վրա նա կառուցեց գմբեթավոր եկեղեցի: Հայ եկեղեցին Սահակ Պարթևին ու Մեսրոպ Մաշտոցին դասեց սրբերի շարքին:

Պարսից գերիշխանության սասպկացումը: Հազկերտի հրամանով 447 թ. Արևելյան Հայաստան է գալիս պարսից պաշտոնյա ***Դենշապուհը:*** Նա անում էր ամեն ինչ պարսկական ազդեցությունը Հայաստանում ուժեղացնելու համար: Նա իբր հարկերը կարգավորելու նպատակով հողերի և բնակչության հաշվառում՝ ***աշխարհագիր*** է անցկացնում: Վահան Ամատունուն պաշտոնից հեռացնում են: Նրա փոխարեն նշանակվում է մի պարսիկ պաշտոնյա: Իսկ երկրի դատավորությունը, որ ժառանգաբար հայոց կաթողիկոսի իրավունքն էր, հանձնում է մի մոգպետի: Դենշապուհը կտրուկ բարձրացնում է հարկերը, նույնիսկ հարկատու է դարձնում հոգևորականությանը: Ապա Հազկերտը հատուկ հրովարտակով հայերից պահանջում է հրաժարվել քրիստոնեությունից:

Արտաշատի ժողովը: 449 թ. Արտաշատում Հովսեփ կաթողիկոսը եկեղեցական ժողով է գումարում: Նախարարների ու ամբողջ ժողովրդի համաձայնությամբ մերժվում է պարսից պահանջը: Հազկերտը, տեղեկանալով մերժման մասին, Տիզբոն է կանչում մարզպան ***Վասակ Սյունուն,*** սպարապետ Վարդան Մամիկոնյանին, Վահան Ամատունուն, Գուգարքի բդեշխ Աշուշային և այլ անվանի նախարարների, ինչպես նաև՝ Վիրքի ու բուն Աղվանքի նախարարներին: Հազկերտ II–ը պարտադրում էր դավանափոխ լինել՝ սպառնալով

մերժման դեպքում զրկել ժառանգական իրավունքից և աքսորել Պարսկաստանի խորքերը: Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանն աներկյուղ պատասխանում է. «Ցանկանում եմ մեռնել, քան թե ապրել ուրացությամբ, առանց Աստծո»:

Ապստամբության գործը կազմակերպելու նպատակով նախարարները որոշում են առերես կատարել Հազկերտի պահանջը: Վարդանը նախ մերժում է, սակայն իմանալով նախարարների՝ հայրենիք վերադառնալու և ապստամբության գործը ստանձնելու վճիռը՝ համաձայնվում է: Հազկերտը մոգերին հրամայում է իրենց ուղեկցող զորքի և հայերի հետ գնալ Հայաստան: Հազկերտ II–ը Աշուշա բդեշխին և Սյունյաց Վասակ իշխանի երկու զավակներին պատանդ է պահում: Հայ նախարարները և հայկական գունդը, նրանց հետ Հազկերտ II–ի ուղարկած մոգերի և պարսից զորքի հետ գալիս են Այրարատ նահանգի Ծաղկոտն գավառի ***Անգղ գյուղաքաղաքը:*** Այնտեղ տարբեր վայրերից շատ հայեր էին հավաքվել: Մոգերն իրենց ուղեկցող պարսից զորքով փորձում են ջարդել եկեղեցու դռները, իսկ նրանց հետ եղած կանայք պատառոտում են աղոթք անող հայ կանանց զգեստները: Սակայն ***Ղևոնդ Երեցի*** գլխավորությամբ հայերը փրկում են եկեղեցին պղծումից և ավերումից ու դագանակներով քշում են մոգպետին ու մոգերին:

Ապստամբության ծավալումը: Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը խորհրդակցություն է հրավիրում: Բոլորը տեղեկանում են, որ նախարարների ուրացումը կեղծ է եղել: Ապստամբության սկիզբն ազդարարվում է նախարարների ու հոգևորականների միահամուռ երդմամբ՝ հավատարիմ լինել հայրենիքի ազատագրման և քրիստոնեական հավատքի պաշտպանության սուրբ գործին: Ժողովուրդը քանդում է պարսից մոգերի կառուցած ատրուշանը: Մոգերին ***Զարեհավանում*** մահապատժի են ենթարկում: Երկիրը մաքրվում է պարսից կայազորներից:

Շուտով բուն Աղվանքից լուր է ստացվում, որ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ (450–451 ԹԹ.)


ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Պետությունների սահմաններ
Սասանյան Պարսկաստանի մարզ-պանությունների սահմաններ
Բյուզանդական Կայսրության պրովինցիաների սահմաններ
Հայկական մարզպանության տարածքը 428-451 թթ.
Մեծ Հայքի թագավորությունից անջատված տարածքներ
Մցխեթ
Դվին
Յողկերտ
Անձիտ
Մայրաքաղաքներ
Խոշոր քաղաքներ, այլ բնակավայրեր
Վանքեր, ամրոցներ
Բագրատիան
Հայոց զորքի մարտական գործողությունները
Պարսից զորքի մարտական գործողությունները
Մասշտաբ 1:5 500 000
(1 սմ = 55 կմ)
Արդ երկնք
Հիմա Հայ
ՀԱՅԱՍՏԱՆ
ՎՐԱՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՂՎԱՆՔԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԵՆԻԱԿ
ԱՍՈՐԻՔ (ԱՍՈՒՐԻՔ)
ԱՍՈՐԵՍՏԱՆ (ԱԴԻԱԲԵՆԵ)
ԵՐԱՆՇԱՀՐ
ԱՄԱՍԻՔ
ԱՐՔԱՅԱՆ
ԱՐՔԱՅԱՆ
ԱՐՔԱՅԱՆ

Ավարայրի ճակատամարտը (մանրանկար)

պարսից բանակը ներխուժել և բռնություններ է գործում: Հայ զորականները խոստանում են օգնել:

Հայ ապստամբները հույս ունեին օգնություն ստանալու քրիստոնյա Բյուզանդիայից: Սակայն բյուզանդական կայսրը հրաժարվում է օգնելուց: Ավելին, նա պարսիկների հետ դաշինք է կնքում: Հայերը պետք է ապավինեին միայն սեփական ուժերին:

Հայոց զորքը երեք զորագնդի է բաժանվում: Առաջինը ***Ներշապուհ Արծրունու*** գլխավորությամբ պաշտպանելու էր Հայոց աշխարհի հարավը Ատրպատականի կողմից: Երկրորդ գունդը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ գնալու էր Ճորա պահակ: Երրորդը՝ Վասակ Սյունու գլխավորությամբ մնաց երկրի ամրություններում:

Վարդան Մամիկոնյանի զորագունդը Կուր գետի անցման տեղում անսպասելի հանդիպում է պարսից զորքին: Հայոց արքայական հինավուրց ձմեռանոցի՝ ***Խաղիաղ*** քաղաքի մոտ **450 թ.** տեղի է ունենում ճակատամարտ: Հայերը խիզախորեն գրոհում և ջախջախում են թշնամուն: Հաղթանակած հայոց ուժերը, անցնելով գետի ձախ ափը, ազատագրում են բուն Աղվանքը: Այնուհետև արշավելով Ճորա պահակի վրա՝ քանդում են այնտեղի ամրությունները և ոչնչացնում թշնամուն: Սակայն անսպասելիորեն լուր է ստացվում, որ Վասակ Սյունին հրաժարվել է ապստամբությունից և փորձում է պարսից արքունիքի հետ հաշտության եզրեր գտնել: Վասակի այդ քայլին խիստ բացասական գնահատական է տալիս պատմիչ Եղիշեն: Վարդան Մամիկոնյանը վերադառնում է Հայաստան: Վասակը քաշվում է իր կալվածքը՝ Սյունիք:

Ավարայրի ճակատամարտը և դրա նշանակությունը: Վարդան Մամիկոնյանը երկրի կառավարումն ու զորքերի հրամանատարությունը վերցնում է իր ձեռքը: Հազարապետի պաշտոնն անցնում է Վահան Ամատունուն, մեծ դատավորինը՝ Հովսեփ կաթողիկոսին:

Ապստամբ հայերի դեմ Հազկերտը զորքեր է

Ավարայրի ճակատամարտ (հեղինակ՝ Գրիգոր Խանջյան)

ուղարկում: Վարդան զորավարի վաթսունվեց հազարանոց Հայոց զորքը շարժվում է Արտազ գավառ և բանակում ***Ավարայրի դաշտում՝ Տղմուտ*** գետի ափին: Սպարապետը հայրենաշունչ կոչով դիմում է հայոց զորքին:

Ղևոնդ Երեցը մկրտում է մինչ այդ չմկրտված հայ ռազմիկներին: Վարդան զորավարը հայոց զորքը բաժանում է չորս զորագնդի:

451 թ. մայիսի 26-ի լուսաբացին սկսվում է Ավարայրի ճակատամարտը: Հայոց հեծելագունդը, քաջ Վարդանի գլխավորությամբ, անցնելով Տղմուտ գետը, անակնկալի է բերում թշնամուն: Հայոց զորքը հակառակորդի շարքերում մեծ խուճապ է առաջացնում: Պարսիկները սկսում են փախչել: Նրանք ստիպված ռազմի դաշտ են մտցնում մարտական փղերին: Կռիվը սաստկանում է. Վարդան Մամի-

կոնյանն իր զինակիցների հետ հայտնվում է շրջապատման մեջ: Նա իր քաջ նիզակակիցներով հերոսաբար կռվում է: Սակայն ուժերը քանակապես անհավասար էին: Քաջ Վարդանը մարտի դաշտում զոհվում է: Նրա հետ նահատակվում են նաև ութ նախարարներ: Հայոց զորքից զոհվում է 1036 զինվոր, իսկ պարսիկներից՝ 3544: Հայ եկեղեցին Ավարայրի ճակատամարտում հերոսաբար զոհվածներին դասել է հայրենիքի և հավատքի պաշտպանությանն իրենց կյանքը պարգևած սուրբ նահատակների շարքը: Նրանց հիշատակի օրը նշվում է որպես եկեղեցական տոն՝ ***Սուրբ Վարդանանց տոն*** անունով:

Հայրենիքի և հավատքի պաշտպանության համար մղված զինված պայքարը և Ավարայրի ճակատամարտը հաղթանակ էր ընդդեմ բռնակալության, դավանափոխության, մահվան: Եղիշեն այսպես է բնութագրել սուրբ Վարդանանց անձնուրաց նահատակությունը. «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»: Ավարայրի հերոսամարտը ոգեշնչման և հայրենիքը կյանքի գնով պաշտպանելու ոգեղեն գաղափարի աղբյուր դարձավ հետագա հայրենասեր սերունդների համար:

Ապստամբներից շատերը, ամրանալով անառիկ ամրոցներում, շարունակեցին կռվել պարսից զորքերի դեմ: Հազկերտը, իր անհաջողությունները բարդելով մարզպան Վասակի վրա, նրան Տիզբոնի ատյանում դատապարտում է մահվան: Արևելյան Հայաստան ուղարկված պարսից մարզպանը խաբեությամբ իր մոտ է հրավիրում Հովսեփ կաթողիկոսին, Ղևոնդ Երեցին և մյուս հոգևորականներին և կապանքներով ուղարկում Պարսկաստան, որտեղ էլ նրանք նահատակվում են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք իրավիճակը Հայաստանի Արևելյան և Արևմտյան մասերում V դ. I կեսին: Համառոտ ներկայացրե՛ք նախարարական համակարգի էությունը: Ինչ բացասական հետևանքներ ունեցավ ավատատիրական հարաբերությունների զարգացումը: Ինչ էր պահանջվում ժողովրդին համախմբելու և հայրենիքը պաշտպանելու համար:

2. Արևելյան Հայաստանում հայ նախարարներն ինչ պաշտոններ էին շարունակում վարել:
3. Ինչ էին ծրագրել Սասանյանները հայ Արշակունիների անկումից հետո:
4. Ինչ պայմաններով Վռամը համաձայնեց Սահակ Պարթևին թույլատրել վերադառնալ հայրենիք: Ինչպե՞ս է ներկայացնում Խորենացին Սահակ Պարթևին:
5. Ինչպե՞ս էր Հազկերտը փորձում թուլացնել Հայաստանի ռազմական հզորությունը:
6. Ինչպե՞ս է Հայ առաքելական եկեղեցին հավերժացրել Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հիշատակը:
7. Հազկերտի հրովարտակը հայերից ինչ էր պահանջում: Երբ հրավիրվեց և ինչ որոշում ընդունեց Արտաշատի ժողովը:
8. Ինչ քայլեր ձեռնարկեց Հազկերտը նպատակին հասնելու համար: Ինչպե՞ս դա ընդունեցին նախարարները:
9. Երբ է տեղի ունեցել և ինչպե՞ս է ավարտվել Խաղխաղի ճակատամարտը: Ինչ հետևանք այն ունեցավ:
10. Ինչո՞վ եք բացատրում Վասակի նոր դիրքորոշումը: Ինչ փոփոխություններ կատարվեցին սպարապետի՝ Հայաստան վերադառնալուց հետո:
11. Հոգևոր ինչ արարողություն կատարվեց Ավարայրի դաշտում: Ճակատամարտից առաջ ինչ զորաբաժանում կատարեց սպարապետը:
12. Երբ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը. նկարագրե՛ք այն: Հայոց եկեղեցին ինչպե՞ս է հավերժացրել Վարդանանց հիշատակը: Ինչ նշանաբանով էր մղվում ճակատամարտը:
13. Պատմական ինչ կարևոր հետևանք ունեցավ ճակատամարտը: Ինչ փոփոխություններ կրեց պարսից արքունիքի քաղաքականությունը: Գնահատե՛ք Վասակի դիրքորոշումը: Գեղարվեստական ինչ ստեղծագործություններում է պատկերված Վարդանանց պատերազմը: Ներկայացրե՛ք Վարդանի կերպարը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Համեմատե՛ք Վարդան Մամիկոնյանի և Վասակ Սյունու դիրքորոշումը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վահան Ամատունի, Վարդան Մամիկոնյան, Վասակ Սյունի, Սահակ Պարթև, Արևելյան Հայաստան, Արտաշատի ժողով, «Յանկանում եմ մեռնել, քան թե ապրել ուրացությամբ, առանց Աստծո», Անգղ ավան, Ղևոնդ Երեց, Խաղխաղի ճակատամարտ, Ավարայրի ճակատամարտ, Տղմուտ գետ, Սուրբ Վարդանանց տոն, «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»

ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐԻ ԽՈՍՔԸ ՆԱԽՔԱՆ ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

«Իմ քա՛ջ նիզակակիցներ... չերկնչենք ու չվախենանք... եթե Տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը, իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, էջ 204–207:

ԵՂԻՇԵՆ ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՄԱՍԻՆ

«Հայոց զորքն անցավ գետը և ձի նստած՝ մեծ զորությամբ հարձակվեց: Ուժգին թափով իրար զարկվելով՝ երկու կողմից էլ բազմաթիվ վիրավորներ, գետին ընկած, գալարվում էին... Քաջ Վարդանը... մեծ ուժով հարձակվեց... և պարսից զորքի աջ թևը ջարդելով՝ քշեց գազանների կողմը և շուրջը պտտելով՝ ջախջախեց մինչև նույն տեղը: Եվ այնպիսի տագնապ և իրարանցում գցեց նրանց մեջ, որ մինչև անգամ Մատյան գնդի ամուր պատրաստությունը քայքայվեց–ցրիվ եկավ, և նա... փախուստի դիմեց... Իսկ կորովի Վարդանն իր քաջ նիզակակիցներով շատերին ջախջախեց այնտեղ, ուր և հենց ինքն էլ արժանի եղավ կատարյալ նահատակության»:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, էջ 236–238:

ԵՂԻՇԵՆ ՆԱՀԱՏԱԿՎԱԾ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՄՆԵՐԻ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

«Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորակների մեջ, շարունակ բոբիկ ու ոտքով էին գնում աղոթատները՝ առանց ձանձրանալու ուխտելով և խնդրելով, որ կարողանան դիմանալ այն մեծ նեղությանը... Մոռացան իրենց կանացի տկարությունը և առաքինի այրեր դարձան հոգևոր պատերազմի մեջ. կռվեցին կարևոր մեղքերի դեմ, կտրեցին և դեն գցեցին նրա մահաբեր արմատները»:

Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, էջ 404–407:

§ 3. ՎԱՀԱՆԱՆՑ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Վահանանց ապստամբությունը: Հայրենասեր հայ նախարարներն սկսեցին համախմբվել Վարդան սպարապետի եղբորորդու՝ ***Վահան Մամիկոնյանի*** շուրջը: Պարսից արքան սկսեց պաշտոններ բաժանել զրադաշտական դարձած հայ նախարարներին, բաժան–բաժան անել հայկական կալվածքները:

Այդ նույն ժամանակաշրջանում Արևելյան Վրաստանում ապստամբում է ***Վախթանգ Գորգասալ*** թագավորը: Նա սպանում է պարսից արքայի դրածո, ուրացող Վազգեն բդեշխին:

481 թ. Շիրակում կայանում է հավաք, որտեղ հայ նախարարները որոշում են ապստամբել: Նրանց վճիռն էր՝ «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»: Խուսափելով հայ ապստամբների հետապնդումից՝ պարսից մարզպանը փախչում է Ատրպատական: Սկսվում է Վահանանց պատերազմը:

Արևելյան Հայաստանում կազմվում է կառավարություն. մարզպան է նշանակվում ասպետ Սահակ Բագրատունին, իսկ սպարապետ՝ Վահան Մամիկոնյանը: Իմանալով որ պարսից բազմաքանակ զորքն անցել է Երասխ գետը՝ հայոց չորս հարյուր մարտիկներից կազմված զորագունդը կանգ է առնում Մասիս լեռան լանջին գտնվող ***Ակոռի*** գյուղի մոտ և այնտեղից անսպասելի հարվածում է հակառակորդին: Ճակատամարտում պարսից հիմնական ուժերը ջախջախվում են, սպանվում է նաև մարզպանը:

Դվինի ավերակներն այսօր

Մարզպան Սահակ Բագրատունին (մանրանկար)

Հայաստան ներխուժած պարսից նոր զորքին հայերը խոշոր պարտության են մատնում Ներսեհապատի ճակատամարտում:

Մինչ հայոց զորքը հանգստանում էր Ծաղկոտն գավառում, Վախթանգից լուր է ստացվում, որ պարսկական մի մեծ գունդ մտել է Վիրք: Վախթանգը, փախչելով Հայոց լեռներ՝ Գուգարաց աշխարհում, օգնություն է խնդրում՝ հավաստիացնելով, որ միացյալ ուժերը բավարար են պարսիկներին հաղթելու համար: Վահանը փոքրաթիվ գնդով շտապում է օգնության: ***Ճարմանայի դաշտում***՝ Կուրի գետահովտում, տեղի է ունենում ճակատամարտ: Սակայն այն ողբերգական ելք է ունենում. զոհվում են ասպետ Սահակ Բագրատունին և քաջ Վասակ Մամիկոնյանը: Հայոց գնդի մնացած ուժերով Վահան Մամիկոնյանը վերադառնում է Դվին:

484 թ. Հայաստան ներխուժած պարսից զորքերը, հասնելով Դվինի մոտ, ռազմական կարգով դասավորվում են Խոսրովակերտ անտառից մինչև Ջրվեժի լեռնալանջերը: Հայոց հեծելագունդը կռվում է քաջասրտորեն: Մարտի ընթացքում զոհվում են երկու նախարարներ: Մարտադաշտում աչքի է ընկնում Հովհան Մանդակունի կաթողիկոսը: Պարսկաստանից անսպասելի լուր է ստացվում, որ պարսից զորքերը Միջին Ասիայում պարտություն են կրել քոչվորներից, և Պերոզ արքան սպանվել է: Պարսից զորքը վերադառնում է Պարսկաստան:

Վահան Մամիկոնյանը հայոց զորագնդով վերադառնում է Դվին: Պարսից արքա Վաղարշը փորձում է հայերին սիրաշահելով ենթարկել իրեն:

Նվարսակի պայմանագիրը: Պարսից պաշտոնյա Նիխորը, Վաղարշի հանձնարարությամբ գալով Հայաստան, կանգ է առնում Հեր գավառի Նվարսակ գյուղում: Դեսպանների միջոցով նա Վահանին առաջարկում է բանակցություններ սկսել: Վահանն առաջադրում է իր պայմանները.

1) հարգել նախարարների ժառանգական իրավունքները,

2) ոչ մի հայի կրոնափոխ չանել,
3) արդարությամբ գնահատել ազնիվ նախարարներին, անպիտաններին պաշտոններ չտալ և այլն:

484 թ. Նվարսակում կնքվում է հայ–պարսկական պայմանագիրը, որից հետո Վահան Մամիկոնյանը վերադառնում է Դվին: Մի քանի օր անց Վահանը նախարարների հետ Հայոց այրուձիի ուղեկցությամբ մեկնում է Տիզբոն: Արքունի մեծ դահլիճում Վահան Մամիկոնյանի հետ հանդիպման ժամանակ Վաղարշ թագավորը հայտնում է իր գոհունակությունը, Նվարսակի պայմանագիրը հաստատում է արքայական գրով ու կնիքով, և ասում. «Դուք բնավ ոչինչ համարեցիք այս աշխարհը. քաջաբար մեռան նրանք, որ մեռան, և առավել քաջաբար ապրում եք դուք»: Նա համաձայնվում է բավարարել Վահանի բոլոր պահանջները, և Վահանին ճանաչում է Մամիկոնյանների տանուտեր և հայոց սպարապետ: Վահան Մամիկոնյանը, վերադառնալով Հայաստան, մեկնում է հայոց ոստան՝ Դվին: Վաղարշի հատուկ հրովարտակով հայոց սպարապետ ու Մամիկոնեից տեր Վահանը հաստատվում է *Տանուտերական իշխանության* կառավարչի՝ մարզպանի պաշտոնում:

Վաչագան Բարեպաշտ: V դ. 80–ական թթ. հայոց ապստամբական շարժման արդյունքներից էր Մեծ Հայքի Արցախ, Ուտիք նահանգներում և դրանց հարակից տարածքներում հայկական թագավորության վերականգնումը: Թագավորության հիմնադիրն էր Հայկազուն–Սիսակյան Առանից տոհմից սերող ***Վաչագան Բարեպաշտը*** (484 թ.–VI դ. առաջին կես): Վաչագան թագավորը սուրբ նահատակների վայրերն այցելելիս գնում է Ամարաս, որտեղ մանուկ Գրիգորիսի գերեզմանն էր: Նրա բարենորոգչական գործունեության շնորհիվ բարգավաճում են եկեղեցաշինությունը և դպրոցաշինությունը: Վաչագան Բարեպաշտ արքան ստեղծում է ***«Սահմանադրություն կանոնական»***–ը, որը եպիսկոպոսների, քահանաների և ազատների համաձայնությամբ

ընդունվում է ***Աղուենի*** կանոնադիր ժողովում: Այն համաշխարհային և հայ իրավագիտության պատմության մեջ վաղ կանոնագրություններից է:

Վարդան Մամիկոնյանի և Վահան Մամիկոնյանի գլխավորած ազատագրական պայքարի արդյունքում ***Մեծ Հայքի արևելյան մասում վերականգնվեց հայոց ինքնուրույն պետությունը՝ ի դեմս Տանուտիրական իշխանության և Արցախի թագավորության:***

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ Պերոզը ընդունեց Վահանի գերակայությունը հայ նախարարների շրջանում:
2. Ե՞րբ և որտե՞ղ հայ նախարարները որոշում ընդունեցին ապստամբելու Պասրկաստանի դեմ: Ո՞ր իրադարձությունը առիթ հանդիսացավ դրա համար:
3. Ներկայացրե՛ք ապստամբության սկիզբը, Ակոռիի դեպքերը:
4. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Ճարմանայի ճակատամարտը:
5. Ինչո՞վ ավարտվեց Վահանանց պատերազմը:
6. Ներկայացրե՛ք Նվարսակի պայմանագիրը:
7. Ո՞վ էր Վաչագան բարեպաշտը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑ

Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Պարսից Վաղարշ արքան փորձում սիրաշահել հայերին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վահանաց ապստամբություն, Վահան Մամիկոնյան, Սահակ Բագրատունի, Ակոռիի ճակատամարտ, Ճարմանայի ճակատամարտ, Նվարսակի պայմանագիր, Վաչագան բարեպաշտ

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅԱՍՏԱՆԸ VI–IX ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ VI ԴԱՐՈՒՄ

Բյուզանդական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում: Բյուզանդական կայսրության ազդեցության ոլորտում գտնվող Արևմտյան Հայաստանն ընդգրկում էր Մեծ Հայքի արևմտյան մասը և Փոքր Հայքը: ***Հուստինիանոս I կայսրը (527–565 թթ.)*** կայսրության կենտրոնական կառավարումն ուժեղացնելու նպատակով մի շարք միջոցառումներ է իրականացնում: Նա ռազմավարչական բաժանումներ կատարեց Արևմտյան Հայաստանում: Խախտելով հայկական իշխանական տների համակարգը՝ կայսրը կառավարումը հանձնեց բյուզանդական զինվորական պաշտոնյաներին, վերացրեց Արևմտյան Հայաստանում պահպանվող հայկական հինգ ինքնուրույն իշխանությունները: Դրանց փոխարեն ստեղծվեցին Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք նահանգները: Այդ ընթացքում Հուստինիանոսն օրենք հրապարակեց, որով, խախտելով միայն արական (հորից որդու) գծով նախարարական կալվածքները ժառանգելու կարգը, այդ իրավունքը տվեց նաև կանանց ու աղջիկներին: Դրա հետևանքով նախարարական հողային տիրույթները մասնատվում էին: Այդ ամենը ծանրացրեց հայ ժողովրդի վիճակն Արևմտյան Հայաստանում:

Հուստինիանոս I կայսրը (միջնադարյան խճանկար)

Արտաքին Արշակունու գլխավորած ապստամբությունը: Վիճակն ավելի է վատթարանում, երբ կայսերական պաշտոնյաները բռնություններ են գործադրում հայ իշխանների նկատմամբ, ծանրացնում հարկերը: Ի պատասխան այդ քաղաքականության՝ 539 թ. հայերն ապստամբում ու սպանում են բյուզանդական կառավարչին: Հուստինիանոսը պատժիչ զորք է ուղարկում: Տե-

Խոսրով I Անուշիրվանի պատկերով կնքադրոշմ

ղի ունեցած ճակատամարտում բյուզանդական զորավարին նիզակով սպանում է ապստամբության ղեկավար ***Արտավան Արշակունին:*** Կայսեր ուղարկած նոր զորքի նոր հրամանատարը դավադրաբար սպանում է իր մոտ գնացած ***Հովհաննեսին***՝ Արտավանի հորը: Ապստամբներն օգնության համար դիմում են պարսից արքային: Օգտվելով առիթից՝ պարսիկները պատերազմ են սկսում Բյուզանդիայի դեմ:

Արտավանն իր եղբոր հետ ստիպված հեռանում է Բյուզանդիա՝ կայսեր մոտ ծառայության: 548 թ. նա մասնակցում է կայսրության մայրաքաղաքում զորավար ***Արշակ Արշակունու***՝ Հուստինիանոսի դեմ կազմակերպած խռովությանը: Սակայն խռովությունը բացահայտվեց եկեղեցական մասնակից բյուզանդացիների մատնությամբ: Հուստինիանոսը, ի թիվս մյուսների, Արտավանին պաշտոնանկ է անում և արգելափակում պալատում հետագա պատերազմներում օգտագործելու նպատակով:

Քաղաքական իրավիճակն Արևելյան Հայաստանում: Վահան Մամիկոնյանից հետո իշխանությունն անցավ եղբորը՝ Վարդ Պատրիկին: Նրա օրոք հայոց կաթողիկոս Բաբգեն Ա–ն 506 թ. գումարեց եկեղեցական ժողով, որով ուղենշվեց Հայ եկեղեցու դավանաբանական ինքնուրույնությունը:

Հայոց կաթողիկոս Ներսես Բ Բագրևանդցու ջանքերով հրավիրվեց Դվինի 554 թ. ժողովը, որն ընդունեց *Հայոց աշխարհի միաբանության ուխտը:* Դրանով վերջնականապես հաստատվեց Հայ առաքելական եկեղեցու ազգային ինքնուրույնությունը:

Հայոց ապստամբությունը և պարսկա–բյուզանդական պատերազմը: 564 թ. Հայաստանում մարզպան նշանակված պարսիկ Սուրենի օրոք ավելի ծանրացան հարկերն ու տուրքերը, սաստկացան կրոնական հալածանքները: Դվինում Սուրենը փորձեց հիմնել մի ատրուշան, իսկ Ս. Գրիգոր եկեղեցին վերածեց պահեստի: Նա սպանեց Մանվել Մամիկոնյանին: 571 թ. հայ ժողովուրդը ապստամբեց Մանվելի եղբոր՝ Վարդան

ՀԱՅԱՍՏԱՆԸ 527–591 ԹԹ.

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Պետությունների սահմանները Հայաստանի 591 թ. բաժանումից հետո
Սասանյան Պարսկաստանի մարզպանությունների սահմանները
Բյուզանդական Կայսրության պրովինցիաների սահմանները
Ինքնավար սատրապությունների սահմանները
Հայկական մարզպանության տարածքը
Արևելյա-Հայկական թագավորության մեջ նախկինում մտնող տարածքները
Հայերի 539 թ. հակարյուզանդական ապստամբությունը
Դվին
Վան
Մուշ
Անձիտ
Բագավան
Մայրաքաղաքներ
Վարչկենտրոններ
Այլ քաղաքներ
Ամրոցներ
Վանքեր
Մասշտաբ 1:5 500 000
(1 սմ = 55 կմ)
Արևելք
Արևմուտք
Հարավ
Հյուսիս
ՀԱՅՔ
ՄԱՍԻՍ
ՄՈՒՍԱ
ՄԱՆԱՍԵՀ

Մորիկ կայսեր դրամներից

Մամիկոնյանի (Վարդան Կրտսեր) գլխավորությամբ: Կռվի ժամանակ Սուրեն մարզպանը սպանվեց Դվինում: Բյուզանդական կայսեր ուղարկած զորքի օգնությամբ Վարդանը ջախջախեց պարսից զորքի մնացորդները:

Պարսից արքան պատժիչ զորք է ուղարկում: Սակայն պարսիկները նորից պարտություն են կրում: Վերսկսված պարսկա–բյուզանդական պատերազմի ընթացքում պարսիկները ներխուժում են Հայաստան: Նրանց դեմ դուրս է գալիս Վարդանը և պարտության մատնում:

Հայաստանի 591 թ. պարսկա–բյուզանդական բաժանումը: 591 թ. Հայաստանը բաժանվում է Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև:

Այդ բաժանումով երկրի մեծ մասն անցնում է Բյուզանդիային: Արևմտյան Հայաստանի տարածքներից կազմավորում է 5 խոշոր նահանգներ:

Նվաճողները ծրագրել էին հայոց զորքերը օգտագործել իրենց տերությունների հեռավոր սահմաններն օտար ներխուժումներից պաշտպանելու նպատակով: Սակայն հայ զինվորականները ապստամբում էին և հրաժարվում հայրենիքից դուրս կռվելուց: Նրանցից էր ***Սմբատ Բագրատունին:*** Նա ազատագրական շարժում էր սկսել հայրենիքում: Կայսեր հրամանով Սմբատին դավադրաբար ձերբակալում են և ստիպում կրկեսում մենամարտել գազանների հետ: Բռունցքի հարվածով նա սպանում է արջին, ապա խեղդում է առյուծին, այնուհետև փախուստի մատնում ցլին: Հանդիսականների պահանջով կայսրը նրան ազատ է արձակում:

Հայաստանի բյուզանդական տիրապետության տակ անցած մասում՝ Ավանում, բյուզանդացիները քաղկեդոնական հակաթոռ «կաթողիկոսություն» են հիմնում և պայքար ծավալում Դվինում գտնվող Հայ առաքելական եկեղեցու կաթողիկոսական աթոռի դեմ: Սակայն հայերին քաղկեդոնականություն պարտադրելու ծրագիրը խափանվում է, քանի որ, ըստ Սեբեոսի, «շատերն արհամարհեցին հրամանը, ամուր մնացին իրենց տեղում»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նպատակով և ինչ միջոցառումներ իրականացրեց Հուստինիանոս I–ը. ինչ հետևանքներ դրանք ունեցան:
2. Ներկայացրե՛ք հակաբյուզանդական ապստամբությունն ու խռովությունը:
3. Ինչ գիտեք 554 թ. գումարված Դվինի ժողովի մասին:
4. Ինչ քաղաքականություն էին վարում պարսիկները հայերի նկատմամբ. ինչ բռնություններ ու ապօրինություններ էին գործում:
5. Ներկայացրե՛ք 571–572 թթ. ապստամբության ընթացքը:
6. Որտեղո՞վ էր անցնում պարսկա–բյուզանդական սահմանագիծը: Վարչական ինչ փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանում 591 թ–ից հետո: Որտե՞ղ հիմնվեց հակաթոռ կաթողիկոսությունը: Ինչ նպատակ էր հետապնդում կայսեր այդ ձեռնարկումը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուստինիանոս I, Արևմտյան Հայաստան, Արտաքին Արշակունի, հակաբյուզանդական ապստամբություն, Հայոց աշխարհի միաբանության ուխտ, Հայաստանի 591 թ. բաժանում

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ VII ԴԱՐՈՒՄ

Պարսկա–բյուզանդական պատերազմի վերսկսումը: VII դ. սկզբներից վերսկսվեց պարսկա–բյուզանդական պատերազմը: Պարսից զորքերը ներխուժում են Արևմտյան Հայաստան, որտեղ հայ ժողովրդի պայքարը գլխավորում է **Վահան իշխանը**: Տարոն–Սասունի հայությունը ջախջախիչ հարվածներ է հասցնում թշնամու զորքերին:

614 թ. գրավելով Երուսաղեմը՝ պարսիկները ոսկու և արծաթի հետ որպես ավար տանում են նաև ***Խաչափայտը***՝ Հիսուս Քրիստոսի խաչելության փայտը: 615 թ. պարսից Խոսրով II արքան գումարում է Տիզբոնի ժողովը: Մասնակիցների թվում էին պարսից տիրապետության տակ հայտնված երկրների հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչներ: Հայերից ներկա էր Կոմիտաս Մամիկոնյան եպիսկո-

Խոսրով II Փարվեզի ոսկեդրամներից

պոսը: Ժողովը մերժում է 451 թ. Քաղկեդոնի ժողովի որոշումը: Խոսրովի հրամանով այն բոլոր քրիստոնյաները, ովքեր իր իշխանության ներքո էին, պետք է հետևեին հայոց հավատին: Հայաստան վերադառնալով՝ Կոմիտաս Մամիկոնյանը պաշտոնապես օծվում է հայոց կաթողիկոս (615 — 628 թթ.) և կառուցում հոյակերտ Ս. Հռիփսիմեի եկեղեցին (618 թ.):

Պարսկա–բյուզանդական պատերազմում հետզհետե հաղթանակներ են տանում բյուզանդացիները: Շուտով հաշտություն է կնքվում: Հերակլ կայսրը ***631 թ. սեպտեմբերի 14–ին*** Խաչափայտը վերադարձնում է Երուսաղեմ: Այդ օրն էլ նշվում է Խաչվերացի եկեղեցական տոնը:

Հայաստանի քաղաքական վիճակը: Արևելյան Հայաստանում մարզպան է նշանակվում ***Վարազտիրոց Բագրատունին (628–632 թթ.),*** որը սկսել էր երկրի անկախացման գործը: Նա փորձում է այդ հարցում ստանալ Հերակլ կայսեր աջակցությունը և մեկնում է նրա մոտ: Սակայն կայսրը նրան ուղարկում է Կոստանդնուպոլիս: Փաստորեն, դա «պատվավոր աքսոր» էր, որի հետ չհաշտվելով՝ նա մասնակցում է Հերակլի դեմ կազմակերպած դավադրությանը: Հերակլը դավադրությունը բացահայտելուց հետո բոլոր մասնակիցներին դաժանորեն պատժում է՝ բացի Վարազտիրոցից, որին աքսորում է:

Այդ ժամանակ Արևմտյան Հայաստանում հայրենասեր ուժերը համախմբվում են իշխան Դավիթ Սահառունու շուրջը: Դավիթը ստանձնում է երկրի զորավարությունը: Հերակլը նրան ճանաչում է որպես *Հայոց իշխան:* Այդ քայլով կայսրը փորձում է օգտագործել հայկական ուժերը Բյուզանդիայի քաղաքական ճգնաժամը հաղթահարելու և Արաբական խալիֆայության հնարավոր հարձակումները կանխելու համար:

Դավիթ Սահառունին մինչև VII դարի 30–ական թթ. վերջը գլխավորում էր Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորման գործը, որը շարունակում է **Թեոդորոս Ռշտունին:**

Հայաստանը արաբական ներխուժումների սկզբնական ժամանակաշրջանում: Օրեցօր հզորացող Արաբական խալիֆայության զորքերը 636 թ. պարտության մատնեցին բյուզանդական, իսկ հաջորդ տարում՝ պարսից զորքերին: Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունին, օգտվելով Բյուզանդիայի և Պարսկաստանի թուլացումից, 639 թ. վերամիավորեց Հայաստանի արևմտյան և արևելյան մասերը ինքնուրույն իշխանապետության մեջ: Երկրի պաշտպանությունը նա ղեկավարում էր իր նստավայրից՝ Աղթամար կղզուց:

640 թ. սկսվում են արաբական զորքերի ներխուժումները Հայաստան: Նրանք հարձակվում են Դվինի վրա: Չնայած բնակիչների համառ դիմադրությանը՝ արաբները գրավում, ավերում ու թալանում են քաղաքը, իսկ բնակիչներից մի մասին սպանում են, իսկ տասնյակ հազարավորներին՝ գերեվարում:

Բյուզանդական կայսրը, չհաշտվելով Թեոդորոս Ռշտունու վարած ինքնուրույն քաղաքականության հետ, նրան կեղծ մեղադրանքով ձերբակալում է: Կարճ ժամանակով Հայոց իշխան է դառնում Վարազտիրոցը: Հայաստանը կայսրության ազդեցության տակ պահելու նպատակով Վարազտիրոցի



Դվինի կաթողիկոսարանի և շրջակա փարածքի վերակազմությունը

մահվանից հետո կայսրը ազատում է Թեոդորոս Ռշտունուն և նրան ճանաչում Հայոց իշխան:

Շուտով խալիֆայության զորքերը ներխուժում են Հայաստան, Վիրք ու բուն Աղվանք և մեծ ավերածություններ գործում: Հայաստանում նրանք հանդիպում են հայ ժողովրդի դիմադրությանը: Հայաստանի բերդերում արաբները ուժգին հարվածներ են ստանում: Կոգովիտ գավառում Արծափ ամրոցի պաշտպաններին իր զորքով օգնության հասած Թեոդորոս Ռշտունին գլխովին ջախջախում է արաբներին: Արաբական զորքերը պաշարում են ***Նախիջևանի բերդը:*** Սակայն չկարողանալով այն գրավել՝ հարձակվում են Խրամի բերդի վրա: Արաբական զորքը անխնա կոտորում է պաշտպաններին և գերեվարելով կանանց ու երեխաներին՝ մեծ ավարով հեռանում Հայաստանից:

Հայ ժողովուրդը դիմադրություն էր ցուցաբերում խալիֆայությանը: Իսկ երբեմնի հզոր Սասանյան Պարսկաստանը մի քանի տարվա ընթացքում լրիվ ջախջախվում ու կործանվում է: Բյուզանդական կայսրությունը, փոխանակ ընդհանուր ճակատ ստեղծելու արաբների դեմ, շարունակում է նվաճողական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ:

Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունը: Ստեղծված բարդ իրավիճակում Թեոդորոս Ռշտունին փորձում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել անընդհատ հզորացող արաբների հետ: 652 թ. պայմանագիր է կնքում Ասորիքի և Վերին Միջագետքի կառավարիչ Մուավիայի հետ: Հայոց իշխանը դրանով ձգտում էր Հայաստանը զերծ պահել Արաբական խալիֆայության հարձակումներից: Արաբները, որ նոր նվաճումների համար դաշնակիցների կարիք ունեին, համաձայնում են: Ըստ պայմանագրի՝ խալիֆայությունը 3 տարի հարկ չէր գանձելու, իսկ դրանից հետո հայերը այնքան էին վճարելու, որքան կամենային: Գանձվող հարկերի հաշվին հայերը պետք է պահեին 15 հազարանոց այրուձի, որը պետք է պատրաստ լիներ գործելու այլ տեղերում: Հայաս-

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ


ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Պետությունների սահմանները Հայաստանի 591 թ. բաժանումից հետո
Սասանյան Պարսկաստանի մարզ-պանությունների սահմաններ
Բյուզանդական Կայսրության պրովինցիաների սահմաններ
Հայք անվանումը կրող Բյուզանդական Կայսրության պրովինցիաներ
Հակկական մարզպանությունից դուրս գտնվող Սասանյան Պարսկաստանի հայկական տարածքներ
Տիգրանակերտ Մայրաքաղաքներ
Վան Վարչկենտրոններ
Մուշ Այլ քաղաքներ
Անահիտ Ամրոցներ
Բագավան Վանքեր
Մասշտաբ 1:5 500 000
(1 սմ = 55 կմ)
Արկ երկայնք
Հայ լայնք
ՀԱՅՔ
ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԱՍ
ԱՐՄԵՆԻԱ
ՍՅՈՒՆԻՔ
ՏՈՒՐՈՒՊԵՐԱՆ
ՄԱՍՅԱՑ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ
ՄԻՋԱԳԵՏՔ
ՍՅՈՒՆԻՔ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՄԱՍՅԱՑ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

տանում արաբ զորք չէր լինելու: Բյուզանդացիների ներխուժման դեպքում խալիֆայությունն այնքան զորք էր ուղարկելու, որքան կամենային հայերը:

Հայ–արաբական դաշինքը խիստ անհանգստացնում է բյուզանդացիներին: Նրանք 100 հազարանց բանակով ներխուժում են Հայաստան: 652 թ. դաշնագրի համաձայն՝ արաբները ներխուժում են Հայաստան և հետապնդում բյուզանդական զորքին:

Թեոդորոս Ռշտունին գնում է Դամասկոս՝ Մուավիայի մոտ, և որպես Հայոց իշխան՝ Հայաստանի հետ միաժամանակ իշխանություն է ստանում նաև Վիրքի ու բուն Աղվանքի վրա մինչև Ճորա պահակն ընկած տարածքները:

Խալիֆայական զորքերի ասպատակությունը և բյուզանդական ներխուժումը մեծ ավերածություններ պատճառեցին երկրին: Հայաստանից արաբները հեռացան մեծ ավարով և բազում գերիներով, որոնց կամովին միացավ Թեոդորոս Ռշտունին: Նա մահացավ 656 թ. օտարության մեջ: Նրա մարմինը բերվեց և թաղվեց հայրենի Ռշտունիք գավառում: Սակայն Թեոդորոս Ռշտունու քաղաքականությունն անհետևանք չմնաց: Այն իր արդյունքները տվեց հաջորդ տարիներին:

VII դ. երկրորդ կեսը նշնավորվեց Հայաստանի վերականգնված անկախության պահպանմամբ և երկրի բարգավաճմամբ:

Հայաստանի տարածքային ամբողջականության և անկախության վերականգնումը: Թեոդորոս Ռշտունուն հաջորդեց Համազասպ Մամիկոնյանը: Համազասպն առաքինի, ընթերցասեր և ուսումնասեր այր էր, միևնույն ժամանակ՝ քաջ զինվորական: Նրա իշխանության տարիները խաղաղ էին: Այդ ընթացքում հայոց կաթողիկոս ***Ներսես Գ Տայեցին*** (Իշխանցի) ավարտում է Ձվարթնոցի տաճարի կառուցումը:

Հայոց հաջորդ իշխան ***Գրիգոր Մամիկոնյանի*** (661–685 թթ.) կառավարման ժամանակաշրջանը նույնպես խաղաղ և բարգավաճ էր: Նա կարգ ու կանոնի հետևող բարեպաշտ առաջնորդ էր: Հա-

յաստանի տարածքային ամբողջականության և անկախության վերականգնումը հսկայական նշանակություն ունեցավ Հայոց աշխարհի քաղաքական կյանքի, տնտեսության ու շինարարական աշխատանքների վերելքի համար: Գրիգոր Մամիկոնյանն Արուճ ավանում ձեռնարկեց Ս. Գրիգոր եկեղեցու, իսկ կողքին՝ իշխանական պալատի կառուցումը: Հայաստանի կախումը խալիֆայությունից ձևական բնույթ ուներ, իսկ վճարվող հարկը չնչին էր՝ 500 դահեկան: 680 թ. վերջից Հայաստանը դադարեց հարկերի վճարումը խալիֆայությանը:

685 թ. հյուսիս–արևելքից ներխուժած խազարների դեմ մղած պայքարում զոհվեց Գրիգոր Մամիկոնյանը: Հայոց իշխանի պաշտոնն անցավ ***Աշոտ Բագրատունուն*** (686–689 թթ.): Նրա օրոք Հայաստանի վիճակը վատթարացավ խալիֆայության և կայսրության զորքերի ներխուժումների հետևանքով: Աշոտ Բագրատունին արաբական զորքի հետ տեղի ունեցած ճակատամարտներից մեկում հաղթանակ տարավ: Սակայն թշնամուն հետապնդելիս նա մարտում զոհվեց: 689 թ. Հայաստան ներխուժեց բյուզանդական զորքը: **Ներսեհ Կամսարականին** կայսրը ճանաչեց *Հայոց իշխան*: Նրա օրոք կառուցվեց Թալինի եկեղեցին:

Մի կողմից՝ բյուզանդացիները ձգտում էին ամրապնդելու կայսրության ազդեցությունը Հայաստանում, իսկ մյուս կողմից՝ արաբներն էին սաստկացնում իրենց հարձակումները: Հայ ժողովրդի հերոսական պայքարը խալիֆայության դեմ գլխավորեց Ներսեհ Կամսարականին հաջորդած ***Սմբատ Բագրատունին:*** Խալիֆայության ճնշումը սաստկանում էր և արդեն լուրջ սպառնալիք էր դառնում Հայաստանի անկախության պահպանման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ ընթացք ունեցավ պարսկա–բյուզանդական հակամարտությունը 620–ական թվականներին:
2. Ո՞վ ավարտին հասցրեց Հայաստանի միավորման գործընթացը:
3. Ներկայացրե՛ք արաբական արշավանքները Հայաստան և դրանց հետևանքները:
4 Ինչպե՞ս էր Թեոդորոս Ռշտունին փորձում պաշտպանել Հայաստանը արաբական հարձակումներից:
5. Ե՞րբ և ի՞նչ պայմաններով կնքվեց հայ–արաբական պայմանագիրը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այդ պայմանագիրը:
6. Նկարագրե՛ք Համազասպ Մամիկոնյանին. ինչո՞ւ Բյուզանդիան նրան ճանաչեց Հայոց իշխան:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տիզբոնի ժողով, Դավիթ Սահառունի, Թեոդորոս Ռշտունի, Հայոց իշխան, Ներսես Գ Տայեցի, Աշոտ Բագրատունի

§ 3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

703 թ. ապստամբությունը: Գրաված Հայաստանի, Վիրքի, Աղվանքի շրջաններից Արաբական խալիֆայությունը 701 թ. կազմեց մեկ ընդհանուր վարչաքաղաքական միավոր՝ *Արմինիա* անունով: Նախապես նրա կենտրոնը Դվինն էր: Այդուհանդերձ հայ նախարարական տները՝ Բագրատունիները, Կամսարականները, Սյունիները, Մամիկոնյանները, Արծրունիները, Արցախի իշխանները, շարունակում էին պահպանել իրենց տիրույթները: *Հայոց իշխանի* և սպարապետի պաշտոնը հիմնականում զբաղեցնում էին Հայաստանում և ամբողջ Արմինիայում մեծ հեղինակություն վայելող հայ Բագրատունյաց տան ներկայացուցիչները: Հայ եկեղեցին այդ ծանրագույն ժամանակաշրջանում շարունակում էր իր ազգապահպան գործունեությունը:

Դարույնքի բերդը (Հին Բայազետը)

Արմինիայի առաջին արաբ ոստիկանի (կառավարիչ) դաժան հարկահանությանը և կրոնական հալածանքներին հայերը 703 թ. պատասխանեցին ապստամբությամբ, որը գլխավորում էր ***Սմբատ Բագրատունին:*** Նախարարների ժողովը որոշում է օգնության խնդրանքով դիմել Բյուզանդական կայսրությանը: Բայց դեպքերն անակնկալ այլ ընթացք են ունենում: Հունվարյան մի ցուրտ օր հայկական 2000–անոց հեծելազունդը հանդիպում է իրեն հետապնդող ավելի քան 5000–անոց արաբական զորքին: Արաքսի հովտում՝ ***Վարդանակերտ*** ավանում բանակած հայկական հեծելազունդը լուսաբացին գրոհում է թշնամու դիրքերը: Ջախջախված արաբները փախուստի են դիմում դեպի գետը: Արաքսի մակերևույթին առաջացած սառույցը ջարդվում է: Արաբներից շատերը խեղդվում են: Իսկ 300 հոգու մեծահոգաբար պատսպարում և բուժում է Կամսարական իշխանուհի ***Շուշանը*** և խնդրում

Հեծյալ հայ ռազմիկներ (մանրանկար)

Սմբատ Բագրատունուն նրանց կենդանի թողնել: Վեհանձնության այս քայլը, ցավոք, չզսպեց խալիֆայությանը հայ ժողովրդի նկատմամբ շատ ոճիրներ գործելուց:

Հաղթանակած հայերը ռազմավարից արաբական ձիեր ուղարկեցին կայսրին, որը շնորհակալություն հայտնեց Սմբատին և *կյուրապաղատի* կոչում շնորհեց նրան: Այնուհետև Սմբատը մեկնում է Հայոց Տայք նահանգը և ամրանում այնտեղ բերդերից մեկում՝ Թուխարք ամրոցում:

Ապստամբությունն ընդգրկել էր Այրարատը, Վանանդը, Վասպուրականը: Ռշտունիք գավառի ***Գուկանք*** գյուղի մոտ հայկական ուժերը ջախջախում են թշնամուն: Իսկ Կամսարական իշխանի հեծյալ գունդը հաղթանակ է տանում Վանանդ գավառ ներխուժած արաբների նկատմամբ:

Սահակ Զորափորցի կաթողիկոսը մի քանի նախարարների հետ գնում է ապստամբների դեմ խալիֆի ուղարկած մեծաքանակ զորքի հրամանատարի մոտ բանակցելու: Ճանապարհին կաթողիկոսը հիվանդանում է և արաբներին հասցեագրած նամակում խնդրում հարգել հայոց հավատը և հետ կանգնել արյունահեղությունից: Արաբ հրամանատարը «գրավոր երդում» է տալիս: Սակայն կաթողիկոսի մահից հետո արաբական զորք է ներխուժում Հայաստան և հետևում հայ նախարարների գործողություններին: Խալիֆը որոշել էր վերացնել հայ նախարարական տոհմերն ու նրանց զինական ուժը:

Կրակի փարի: 705 թ. բյուզանդացիների ուղարկած օգնական 5000–անոց զորքը գալիս և Սմբատ Բագրատունու գլխավորած հայկական զորքի հետ Վանանդ գավառում կռվի է բռնվում արաբական զորքի հետ: Հայ–բյուզանդական ուժերն անհաջողության են մատնվում: Խալիֆի հրամանով արաբ կառավարիչը Հայաստանում այրուձիի հաշվառում կատարելու և ռոճիկ վճարելու պատրվակով բազմաթիվ հայ նախարարների կանչում է իր մոտ: Ապա նրանց զինաթափում է, թալանում և փակելով

Նախիջևանի ու ***Խրամի*** եկեղեցիներում՝ հրկիզում: Այս գազանային ոճրագործության ժամանակահատվածն արաբական մի սկզբնաղբյուրում հիշատակվում է որպես *կրակի տարի*:

Սմբատ Բագրատունին մի քանի նախարարների հետ գնում է Եգեր աշխարհը: Արաբ նորանշանակ ոստիկանը, վախենալով նոր ապստամբությունից, անձի ու գույքի ապահովության երաշխիք պարունակող հրովարտակով նախարարներին համոզում է վերադառնալ: 709 թ. Սմբատ Բագրատունին և նախարարները հայրենիք են վերադառնում:

VIII դարի 20–ական թթ. սաստկանում է խալիֆայության ճնշումը, որն իրականացվում էր Հայաստանում տեղակայված արաբական կայազորների միջոցով:

725 թ. Արմինիա եկած ***Հերթ*** ոստիկանի դաժան բռնություններով անցկացվող «աշխարհագրով» խիստ ծանրանում է հայ ժողովրդի վիճակը: Ոչ մահմեդականներից գանձվող ծխահարկը (ըստ գերդաստանների՝ երդերի) փոխարինվում է գլխահարկով, հողահարկի հետ մեկտեղ: Հարկատու է դառնում նաև հոգևորականությունը: Հարկ վճարողները նույնպես չէին ազատվում նվաստացումներից: Նրանց պարանոցից կապարե կնիքներ էին կախում: Հայ նախարարների տիրույթների մի մասը բռնազավթում էին արաբները՝ ստեղծելով *ամիրայություններ* կոչվող վարչաքաղաքական միավորներ: Խալիֆայության տիրապետության տակ հայտնված երկրներում ոչ մահմեդականները, հատկապես քրիստոնյաները դառնում էին կրոնական բռնության զոհ: Նրանք իրավունք չունեին դատարաններում մահմեդականների դեմ վկայություն տալու և հասարակական վայրերում նրանց հետ նստելու, հագնվելու և այլն: Արաբներին ենթակա բոլոր երկրներում պետական բարձր պաշտոնները տրվում էին մահմեդականներին: Արգելվում էին խաչերով ու սրբապատկերներով երթերը, եկեղեցական զանգեր հնչեցնելը, խաչեր կանգնեցնելը:

Հայաստանում շրջանառված արաբական ոսկեդրամներ

Վասպուրականի 762 թ. ապստամբության հերոսներ Սահակ և Համազասպ Արծրունիների քանդակը Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պատին

774–775 թթ. ապստամբությունը: Արաբական խալիֆայության գերիշխանության դեմ բռնկվում է նոր ու հզոր մի ապստամբություն: Ապստամբական շարժումը Շիրակի Կումայրի գյուղից սկսում է ***Արտավազդ Մամիկոնյանը:*** Նա ռազմական խորամանկությամբ Դվինում գտնվող արաբներից զենք էր ձեռք բերել՝ իբրև թե խալիֆայության թշնամիների դեմ կռվելու համար: Այդ զենքով նա Շիրակում զինում է իր ռազմիկներին և հարձակվում արաբ գլխավոր հարկահանի վրա: Խլելով հավաքված ամբողջ հարկը՝ իր ընտանիքով և զինակից նախարարներով Արտավազդը հեռանում է Մեծ Հայքի հյուսիսարևմտյան շրջանները:

Խալիֆայությունն ավելի է սաստկացնում հարկային ճնշումը: ***Մուշեղ Մամիկոնյանը*** ստանձնում է ապստամբության ղեկավարությունը: Պարտության մատնելով Տարոն ներխուժած արաբական ջոկատին՝ նա ամրանում է Արտագերս ամրոցում: Մուշեղը 260 զինակիցների հետ Բագրևանդ գավառում ոչնչացնում է արաբ հարկահաններին: Դվինը զավթած արաբական կայազորից 4000 հեծյալ գալիս է Բագավան գյուղը, որտեղ Մուշեղի ջոկատը նոր հաղթանակ է տանում: Ապստամբությունը ծավալվում է: Մուշեղի շուրջ հավաքված հայկական ապստամբական ուժեր թվակազմը հասնում է 5000–ի: Մի շարք հայ նախարարների հետ նրանց էր միացել նաև սպարապետ Սմբատ Բագրատունին: Շատերին նույնիսկ թվում էր, թե եկել է խալիֆայության տիրապետության վերջը: Ապստամբները պաշարում են Կարինը:

775 թ. գարնանը ապստամբների դեմ խալիֆի ուղարկած 30–հազարանոց զորքը գալիս է Խլաթ: Հայկական զորքերը գալիս են Բերկրի: Մինչ Արճեշ հասած հայկական ուժերը կռվում էին այն գրաված խալիֆայական կայազորի դեմ, Խլաթից եկած և դարանամուտ եղած արաբական զորքը հարձակվում է նրանց վրա: Ջոհվում են չորս նախարարներ և 1500 ռամիկներ: Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արճեշի ճակատամարտի վախճանի մասին, Մուշեղ Մամիկոնյանի գլխավո-

ՀԱՅԱՍՏԱՆԸ VII–IX ԴԱՐԵՐՈՒՄ

ությամբ շարժվում են դեպի Բագրևանդ գավառի ***Արձնի*** գյուղը: Այնտեղ եկել և բանակ էր դրել խալիֆայության զորքը, որը թվով վեց անգամ ավելի էր հայկական ուժերից:

775 թ. ապրիլի 25-ին Արածանիի ափին՝ Արձնի գյուղի մոտ, տեղի է ունենում վճռական ճակատամարտը: Հայերը, միմյանց քաջալերելով, հերոսաբար կռվում էին: Ճակատամարտի սկիզբը բարեհաջող էր հայ մարտիկների համար: Թշնամին նույնիսկ ստիպված էր նահանջել: Հայ մարտիկները հերոսաբար կռվում էին, սակայն ուժերը բավարար չէին: Ապստամբներից շատերը զոհվեցին: Հայրենիքի ազատության համար իրենց կյանքը զոհաբերեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց տոհմերից նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ երեք հազար մարդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք 703 թ. հակաարաբական ապստամբությունը:
2. Ի՞նչ գիտեք «Կրակի տարվա» մասին:
3. Ի՞նչ հետևանքներ ունեցավ 703 թ. ապստամբությունը:
4. Ինչպիսի՞ քաղաքականություն էին վարում արաբները Հայաստանում 720-ական թվականներին. ի՞նչ հետևանքներ այն ունեցավ:
5. Ներկայացրե՛ք 748–750 թթ. հակաարաբական ապստամբությունը:
6. Որո՞նք էին 774–775 թթ. հակաարաբական ապստամբության պատճառները:
7. Ներկայացրե՛ք այդ ապստամբության սկիզբն ու ընթացքը: Ե՞րբ և որտե՞ղ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

703 թ. ապստամբություն, Վարդանակերտ, կյուրապաղատ, կրակի տարի, ամիրություններ, 748–750 թթ. հակաարաբական ապստամբություններ, 774–775 թթ. ապստամբություն, Արձնիի ճակատամարտ

ՀԱՅ ՔԱՋԱՐԻ ԱՊՍՏԱՄԲՆԵՐԻ ԽՈՍՔԸ ԱՐՁՆԻԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿ

«Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի ու մեր ազգի համար և թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստուծո փառավորման վայրերի ոտից կոխան լինելն ու պղծվելը, այլ թշնամիների սուրը թող նախ և առաջ մեր դեմ ուղղվի… Մեր անձերը զոհենք ճշմարիտ հավատի փոխարեն և ոչ թե երկրավոր կյանքի սիրուն, քանզի այս ժամանակավոր մահվան դիմաց կա հավիտենական կյանք…»:

Ղևոնդ, Պատմություն, ԼԴ

§ 4. ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

Խալիֆայության գերիշխանության վերացման ընթացքը Հայաստանում: IX դ. խալիֆայության թուլացման պայմաններում կրկին հզորանում էին Բագրատունի, Արծրունի, Սյունիքի, Արցախի և այլ հայկական իշխանությունները: Առավել ազդեցիկ դիրքի հասան Բագրատունիները՝ Սպեր և Կոգովիտ գավառների ժառանգական տերերը: Սմբատ Բագրատունու որդին՝ Աշոտ *Մսակերը,* ընդարձակեց իր իշխանությունը Տարոնի, Շիրակի, Բագրևանդի, Տայքի և այլ երկրամասերի վրա և խալիֆայության կողմից 804 թ. պաշտոնապես ճանաչվեց *Հայոց իշխան*: Նրա եղբայրը՝ Շապուհը, նշանակվեց սպարապետի պաշտոնում:

Աշոտ Բագրատունին իր նստավայրը Դարույնքից տեղափոխվում է Ախուրյանի ափին գտնվող ***Բագարան*** բերդաքաղաքը: Հայ Բագրատունիների մի ճյուղն էլ, որ սերում էր Կոգովիտ գավառի տեր հայ իշխան Վասակ Բագրատունու թոռ Աշոտից, խալիֆայությունից ստացավ Վիրքի իշխանությունը: Կայսրությունը Վասակի թոռանը՝ Աշոտին, ***կյուրապաղատի*** պատիվ շնորհեց:

Հայոց իշխանաց իշխանի պաշտոնում Աշոտ Մսակերին հաջորդեց որդին՝ ***Բագարատ Բագրատունին*** (826–851 թթ.): Նա ամբողջ Արմինիայում

մեծ հեղինակություն էր վայելում: Բագարատի մյուս եղբայրը՝ Շիրակի տեր Սմբատ Բագրատունին էլ դարձավ հայոց սպարապետ:

850 թ. հայ նախարարները, Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու գլխավորությամբ, արաբ հարկահավաքներին թույլ չտվեցին անցնել երկրի սահմանը: Հենց այդտեղ էլ հայերը նրան հանձնեցին հարկերը, և արաբ պաշտոնյան վերադարձավ խալիֆայություն: Այդ քայլով Բագրատունյաց իշխանաց իշխանը բացարձակ անհնազանդություն ցուցաբերեց խալիֆայության նկատմամբ:

850–855 թթ. ապստամբությունը: Հայ ժողովրդի պայքարն անկախ պետականության վերականգնման համար նոր փուլ թևակոխեց: 850թ. Բագարատը Աշոտ Արծրունու հետ արաբ նվաճողներին դուրս քշեց Տարոնից: Իսկ արաբների մեկ այլ զորախումբ էլ ջախջախվեց Վասպուրականում: Հայերի ազատատենչ պայքարը կասեցնելու համար խալիֆայությունը դիմեց պատժիչ գործողությունների: 851 թ. Հայաստան ներխուժած արաբական զորաբանակի հրամանատար Յուսուֆը Խլաթում խաբեությամբ ձերբակալեց Բագարատին և ուղարկեց խալիֆայություն:

Հովնան Խութեցու և Բագարատի որդիների՝ Աշոտի և Դավթի գլխավորած սասունցիների ջոկատը Տարոնում հարձակվեց և ոչնչացրեց զավթիչներին: Յուսուֆը, դիմելով փախուստի, թաքնվում է Բագարատ Բագրատունու կառուցած Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթում: Սասունցիները, գտնելով ոճրագործին, մահապատժի են ենթարկում: Ապստամբությունն ավելի է ծավալվում: Հայ ժողովրդի ազատագրական այդ պայքարն արտացոլվել է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» դյուցազներգությունում:

852 թ. խալիֆը հայ ապստամբների դեմ ուղարկեց իր մոտ ծառայության անցած Բուղա անունով մի թուրք վարձկան ավազակապետի: Նա հայտնի էր իր դաժանությամբ: Թշնամու զորքը ասպատակեց հայկական բնակավայրերը բնակչության մի մասին կոտորեց կամ գերեվարեց: Գերիների թվում էին

նաև Հովնան Խութեցին և Բագարատի որդիները:

Վասպուրականցիներն Աշոտ Արծրունու գլխավորությամբ ամրացան ***Նկան*** ամրոցում և հերոսաբար պայքարեցին Բուղայի դեմ: Արաբների դեմ պայքարը շարունակեց Աշոտի եղբայրը՝ Գուրգենը: Բուղայի 15000–հազարանոց զորքի դեմ Գուրգենը կռվում էր 900 ռազմիկներով: **«Արյան լիճ»** կոչվող լեռնային բարձրադիր վայրում տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց հայերի կատարյալ հաղթանակով: Պարտված թշնամին խուճապահար փախուստի դիմեց Վասպուրականից:

Այնուհետև 853 թ. Բուղան ասպատակում է Վիրքը, սակայն հյուսիսում պարտվելով Կովկասի լեռնականներից՝ կրկին ներխուժում է Հայաստան: Նա մի շարք խայտառակ պարտություններ է կրում Արցախում: Հայ նշանավոր իշխան ***Եսայի Աբու–Մուսեն*** մոտ մեկ տարի անառիկ է պահում ***Քթիշ*** (Գտիչ) ամրոցը: Երկարատև կռիվներից հուսահատված արյունարբու Բողան նրան առաջարկում է հանձնվել: Քաջարի իշխանը կտրականապես մերժում է և շարունակում հաղթական կռիվները: Ինչպես հաճախ, այս անգամ էլ նենգ թշնամին խաբեությամբ բանակցելու պատրվակով իր մոտ է հրավիրում անպարտելի իշխանին և ձերբակալելով, ուղարկում խալիֆայություն:

Վասպուրականում ապստամբները Արծրունիների գլխավորությամբ ջախջախում և դուրս են մղում արաբներին: Բուղան, այս պարտություններից հետո վերջնականապես խայտառակվելով, 855 թ. խալիֆի կողմից Հայաստանից հետ է կանչվում:

850–855 թթ. հայոց հզորագույն ապստամբությունը սասանեց արաբական տիրապետությունը Հայաստանում: Երկրի քաղաքական զարգացումն ընթացավ հայոց անկախ պետականության և թագավորության վերականգնման հունով: Դրանում որոշիչ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի պայքարն օտար նվաճողների դեմ: Սմբատ սպարապետի որդին՝ Աշոտ Բագրատունին, 855 թ. ճանաչվեց *Հայոց իշխան* և սպարապետ, իսկ 862 թ.

Հայոց իշխանաց իշխան: Նա իշխեց որպես անկախ տիրակալ, այնուհետև հռչակվեց Հայոց թագավոր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխման սկիզբը: Ի՞նչ ներքին և արտաքին գործոններով էր դա պայմանավորված: Ի՞նչ հետևանքներ ունեցավ այն:
2. Ինչո՞վ էր պայմանավորված հայ իշխանական տների հզորացումը IX դարում:
3. Ո՞ր իշխանական տները հզորացան, և որո՞նք էին նրանց տիրույթները:
4. Ովքե՞ր էին այդ ժամանակաշրջանի նշանավոր Բագրատունիները. ի՞նչ պաշտոններ էին զբաղեցնում:
5. Ի՞նչ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ 850 թ.: Ո՞րն էր 850–855 թթ. ապստամբության նպատակը: Ներկայացրե՛ք այդ ապստամբության ընթացքն ու կարևոր իրադարձությունները:
6. Ինչպե՞ս ավարտվեց ապստամբությունը և ի՞նչ հետևանքներ ունեցավ: Աղյուսակի տեսքով ներկայացրե՛ք հակաարաբական ապստամբությունները, կարևոր իրադարձությունները և ղեկավարներին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բագրատունիներ, Արծրունիներ, Աշոտ Մսակեր, 850–855 թթ. ապստամբություն, Բուղա, Հայոց իշխանաց իշխան

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԱՆԹԻՎ ԹՇՆԱՄՈՒ ԴԵՄ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԵԼՈՒՑ ԱՌԱՋ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԹԻ ԱՀԱՋԱՆԳԸ

Դավիթ մեկ քարի վրա կայնավ, իրիշկեց,
Տեսավ, ինչքան ծառ կա անտառ,
Էնքան մարդ էկած մեջ դաշտին,
Էնքան վրան զարկած են էնտեղ, ասաց.
«Էնոնք տի զարթնեցնեմ, նոր կռվեմ»: Ասաց. — Էյ.
«Ով քնած եք, արթո՛ւն կացեք.
Ա՛խ, հալա արթո՛ւն կացեք,

Ով արթուն եք, ձեր ձիա՛նք թամբեցեք,
Ա՜խ, հալա ձիա՛նք թամբեցեք.
Ով թամբեր եք, էլե՛ք հեծեք,
Ա՜խ, հալա էլե՛ք հեծեք.
Չասեք՝ Դավիթ գող էկավ, գող գնաց,
Ա՜խ, հալա գող գնա»:
Դավիթ քշեց Քուռկիկ Ջալալին,
Շիտկավ թամբքին, կանչեց, ասաց.
«Հիշա Մարութա բարձր Աստվածածին,
Խաչ Պատերազմին վեր Դավթի աջ թևին,
Աջու էրթա, ձախու գա,
Կտրելով, զորք չը թողա»:

Սասունցի Դավիթ, Մաս Բ, 10:

ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆ ԵՍԱՅԻ ԱԲՈՒ ՄՈՒՍԵԻ ԽԻԶԱԽ
ԽՈՍՔԸ ԸՆԴԴԵՄ ԹՇՆԱՄՈՒ

«Արդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ Տեր Աստծո ուժով ու զորությամբ… Եթե հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ»:

Թովմա Արծրունի, Արծրունյաց տան պատմություն, Բ, 10:

ԳԼՈՒԽ V

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ V–IX ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԳՅՈՒՏԸ

Մեսրոպ Մաշտոցի պատմական առաքելությունը: Հազարամյակների խորքից եկող հայկական մշակույթը վաղ միջնադարում մեծ վերելք ապրեց, որին նպաստեց մայրենի լեզվով գիր ու գրականության ստեղծումը, գիտության և ազգային–եկեղեցական ճարտարապետության զարգացումը: Հայ մշակույթը հայրենիքի և հավատքի պահպանության աղբյուրն է:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Աստվածաշունչն ընթերցվում էր ասորերեն ու հունարեն, և եկեղեցական արարողությունների ժամանակ ժողովուրդը ոչինչ չէր հասկանում: Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի հիմնած դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին ասորերենից և հունարենից հայերեն բանավոր թարգմանություն կատարել:

Մեծ Հայքի թագավորության պարսկահռոմեական բաժանումը վտանգել էր հայ Արշակունիների թագավորության գոյությունը: Անհրաժեշտ էր պաշտպանել հայ ժողովրդի հոգևոր կյանքը: Հենց այդ տագնապալի ժամանակաշրջանում Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայ գրերը Վռամշապուհ արքայի և Սահակ Պարթև կաթողիկոսի հովանավորությամբ:

Մեսրոպ Մաշտոցի սկզբնական գործունեությունը: Ծնվել է 361 թ. Տարոն գավառի Հացեկաց գյուղում: Կրթություն ստանալով Տարոնում՝ նա մեկնում է Վաղարշապատ մայրաքաղաքը և Խոսրով IV–ի արքունիքում անցնում զինվորական ծառայության: Մաշտոցը, փայլուն տիրապետելով մայրենի լեզվին, հունարենին, ասորերենին, պարսկերենին, միևնույն ժամանակ աշխատում է արքունի դպիրների խմբում: Այնուհետև նա որոշում է իրեն նվիրել հոգևոր կյանքին:

Մաշտոցը գնում է Նախիջևանի հարևան ***Գողթան*** գավառը և զբաղվում քրիստոնեական քարոզչությամբ: Այդ ընթացքում նա բանավոր հայերեն է թարգմանում Աստվածաշունչը, որը մինչ այդ ընթերցվում էր ժողովրդի համար անհասկանալի օտար լեզուներով: Այդ դժվարությունները հաղթահարելու համար Մաշտոցը մտածում է Աստվածաշնչի հայերեն գրավոր թարգմանության շուրջ: Սակայն դրա համար անհրաժեշտ էր հայկական գիր գործածել: Մաշտոցը, ինչպես գրում է Ղազար Փարպեցին, մտածում էր, որ «գոյություն ունեն հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր է սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»: Այստեղ խոսքը հնում հայերեն գրերի գոյության մասին է: Այդ մասին II–III դարերի օտարալեզու մատենագրությունում հայերը հիշատակված են հին դպրություն ունեցող ժողովուրդների շարքում: Պատմահայրը հիշատակել է նաև նախաքրիստոնեական մեհենական գրականության մասին, որը, սակայն, չէր պահպանվել:

Հայ գրերի գյուտը: Մեսրոպ Մաշտոցը Գողթան գավառից վերադառնում է Այրարատ: Հայ գրեր ունենալու իր մտադրության մասին հայտնում է հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին և ստանում նրա հավանությունը : IV դ. վերջում գումարվում է եկեղեցական ժողով: Որոշվում է՝ «հայ ազգի համար նշանագրեր գտնել»: Վռամշապուհ արքան նույնպես, պետական անհրաժեշտություն համարելով այդ գործը, և խնդրին շուտափույթ լուծում տալու համար աջակցում է Մեսրոպ Մաշտոցին և Սահակ Պարթևին:

Վռամշապուհ արքայի հանձնարարությամբ ***Դանիել*** անունով ասորի մի եպիսկոպոսի մոտից հայերեն համարվող նշանագրեր են բերվում Հայաստան: Երկու տարի դրանցով ուսուցանելուց հետո պարզ է դառնում, որ այդ նշանագրերն անբավարար են հայոց կատարյալ լեզվի հնչյունային համակարգի համար:

Ս. Սահակ Պարթև
(հեղինակ՝ իտալացի նկարիչ Ֆրանչեսկո Մաջուրտո, 1750–1805 թթ.)

Ս. Մեսրոպ Մաշտոց (հեղինակ՝ իտալացի նկարիչ Ֆրանչեսկո Մաջուտտո, 1750–1805 թթ.)

Վռամշապուհի կարգադրությամբ Մեսրոպ Մաշտոցը ձեռնարկում է նշանագրեր ստեղծելու գործը և մի խումբ աշակերտների հետ մեկնում Ամիդ, Եդեսիա և Սամոսատ քաղաքները: Մեսրոպ Մաշտոցն աշակերտների մի խմբին նախատեսել էր ասորական, իսկ մյուսին՝ հունական դպրության համար: Այդ ընթացքում Մաշտոցն, իր ուսումնասիրությունները շարունակելով, անցնում է Եդեսիա, ապա այլ վայրեր: Երկար մաքառումներից հետո նրան հաջողվում է ավարտին հասցնել իր գործը և 405 թ. ստեղծել հայոց գիրը:

Հունարեն գրչության արվեստի խորագիտակ **Հռոփանոսը** գեղագրում է Մեսրոպ Մաշտոցի ստեղծած 36 նշանագրերը, որոնցից յուրաքանչյուրին Հայոց աշխարհի մեծ ուսուցիչն անուն էր տվել՝ *այբ, բեն, գիմ, դա* և այլն: Հայերեն թարգմանված ու գրված առաջին նախադասությունն Աստվածաշնչից էր. «Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը»:

Մեծ Հայք վերադարձող Մեսրոպ Մաշտոցին Երասխի ափին մեծ հանդիսավորությամբ դիմավորում են Վռամշապուհ արքան, Սահակ Պարթև կաթողիկոսը, նախարարները, ժողովրդի բազմությունը և ուղեկցում մայրաքաղաք: Սուրբ Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ է լինում մանուկների ուսուցմանը հայերեն այբուբենով: Նա գրում է հոգևոր ճառեր, երգեր՝ շարականներ: Ս. Սահակ Պարթևը նույնպես գրել է եկեղեցական կանոններ, թղթեր՝ նամակներ, ու հոգևոր երգեր:

Հայ գրերի գյուտի պատմական նշանակությունը: Հայոց լեզվի համար կատարյալ հայերեն այբուբենի ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի պատմական առաքելությունն էր:

Հայ մշակույթի պահպանման և հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ հայերեն նշանագրերի գյուտը: Հայերեն գրերը բոլոր ժամանակներում ազգային արժեհամակարգի պահպանման հզոր միջոցն են եղել:

Հազարամյակների պատմություն ունեցող հա-

յոց լեզուն IV–V դդ. սահմանագլխին այնքան կատարյալ էր, որ Մեսրոպ Մաշտոցի նշանագրերի գյուտին անմիջապես հաջորդեց համաշխարհային գրական և գիտական երկերի թարգմանությունը: Ստեղծվեցին հայ մատենագրության ու գիտության բարձրագույն արժեքները: V դ. հայ գրական ժառանգությունն անվանվում է *ոսկեդարյան*: Ըստ Եղիշեի՝ Հայաստանում լուսավորչական շարժումն ընթանում էր «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով» նշանաբանով:

Հայաստանում լուսավորչական գործունեություն ծավալելուց հետո Մեսրոպ Մաշտոցը նշանագրեր ստեղծեց նաև վրաց և բուն Աղվանքի ցեղերից գարգարացիների լեզուների համար:

Դպրոցը և թարգմանչական գործը: Մեսրոպ Մաշտոցը և Սահակ Պարթևը կրթական աշխատանք ծավալեցին՝ մայրենի լեզվով դպրոցներ հիմնելով նախ Մեծ Հայքի կենտրոնական նահանգում՝ Այրարատում: Վաղարշապատում հիմնադրվեց առաջին վարդապետարանը՝ բարձրագույն դպրոցը, որտեղ պատրաստվում էին վարդապետներ՝ ուսուցիչներ: Սահակ կաթողիկոսը մեծ հոգատարությամբ զբաղվեց նաև իր թոռան՝ հայոց ապագա սպարապետ Վարդան Մամիկոնյանի կրթությամբ: Մաշտոցը հայկական դպրոցներ է հիմնում Արցախում (Ամարասի դպրոցը), Սյունիքում, Գողթան գավառում: Սահակ Պարթևի նամակով Մաշտոցը, Վարդան Մամիկոնյանի հետ ներկայանալով բյուզանդական կայսրին, ստանում է համաձայնություն՝ Արևմտյան Հայաստանում ևս դպրոցներ բացելու մասին: Այսպիսով՝ Մաշտոցը հոգևոր իմաստով վերամիավորում է Հայաստանը:

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն անզուգական երևույթ էր թարգմանչական արվեստի մեջ: Դարեր անց այն համարվեց թարգմանությունների թագուհին: Սուրբ թարգմանիչների ջանքերով հայ ընթերցողը մայրենի լեզվով կարող էր կարդալ համաշխարհային գիտության և գեղարվեստական գրականության նմուշները՝ Արիստոտելի, Եվսե-

Հայոց ոսկեձույլ և աղամանդակուռ այբուբենը (Էջմիածին, Մայր Աթոռի թանգարան)

Ամարաս

բիոս Կեսարացու երկերը և այլն: Հայերեն թարգմանությունների շնորհիվ պահպանվել են համաշխարհային նշանակություն ունեցող որոշ երկեր, որոնց բնագրերը կորել են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ IV դ. վերջում հրատապ խնդիր դարձավ մայրենի գիր ու գրականություն ունենալու հարցը:
2. Ի՞նչ գիտեք Մեսրոպ Մաշտոցի մասին:
3. Ո՞ր քաղաքներում եղան Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները:
4. Ո՞րն է հայերեն առաջին նախադասությունը: Որտեղի՞ց է այն թարգմանված:
5. Որտե՞ղ հիմնվեցին հայոց դպրոցներ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ասպվածաշնչի թարգմանություն, վարդապետարան, գրչության արվեստ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԸ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԻ ՄԱՍԻՆ

«Եվ այսպես նա բազում նեղություններ կրեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան այդ բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագրեր»:

Կորյուն, Վարք Մաշտոցի, Ը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻՆ ՏԵՍԻԼՈՎ ՏՐՎԱԾ ԱՅԲՈՒԲԵՆԸ

«Եվ տեսնում է ո՛չ քնում երազ և ո՛չ էլ արթնության տեսիլ, այլ իր գործող սրտի հոգու աչքին բացված՝ վեմի վրա գրող Աջը: Քանզի վեմը, ինչպես ձյունը պահպանում էր գծագրային հետքերը: Եվ ոչ միայն իրեն երևաց, այլև բոլոր հանգամանքները կուտակվեցին նրա մտքում, ինչպես մի անոթում: Եվ աղոթքից զարթնելով՝ ստեղծեց մեր նշանագրերը»:

Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, 53:

§ 2. ՈՍԿԵԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պատմագրություն: V դարում ստեղծվեց և մեծ վերելք ապրեց հայագիր պատմագրությունը: Հայ դասական պատմագրության հիմնասյունը ***Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն»*** է: Այն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի վախճանի ժամանակաշրջանը: Մովսես Խորենացին իր դարաշրջանի հայ պատմիչներից առաջինն էր, ով ամբողջական շարադրեց հայոց պատմությունը և պատմության մեջ մնաց *Մեծն Քերթող, Քերթողահայր, Պատմահայր* անուններով: Մովսես Խորենացու երկը բաղկացած է երեք գրքից: Առաջին գրքում («Հայոց մեծերի ծննդաբանությունը») Պատմահայրը շարադրել է հայոց նախնի Հայկ Նահապետի (Ք. ա. III հազարամյակ) ու նրան հաջորդած Հայկազուն սերունդների՝ մինչև Երվանդյան Տիգրանի (Ք. ա. VI դ.) և նրա զարմերի ժամանակների հայրենանվեր հերոսությունների ու գործունեության պատմությունը: Երկրորդ գրքում («Մեր նախնիների միջին պատմության շարադրանքը») ամփոփված է Ք. ա. IV դարի վերջին քառորդից մինչև IV դարի երրորդ տասնամյակի սկիզբն ընդգրկող պատմությունը: Երրորդ գիրքը («Մեր հայրենի պատմության ավարտը») ընդգրկում է մինչև 440 թ. ընկած պատմությունը և ավարտվում է Հայաստանում ստեղծված ծանր վիճակը նկարագրող «Ողբով»: Պատմահոր «Հայոց պատմություն» երկը գրված է հայրենաշունչ ոգով: Պատմահայրը գրել է նաև «Աշխարհացույց» երկը, որը VII դարում շարունակել է Անանիա Շիրակացին:

Կորյուն վարդապետը ***«Վարք Մաշտոցի»*** երկը նվիրել է իր ուսուցչի՝ Մեսրոպ Մաշտոցի կյանքին ու լուսավորչական գործունեությանը:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» նվիրված է Ս. Գրիգորի ու Տրդատ Մեծ թագավորի կյանքին ու գործունեությանը, Հայաստանում քրիստո-

Մովսես Խորենացին և նրա մեկենաս մարզպան Սահակ Բագրատունին (մանրանկար)

նեությունն աշխարհում առաջինը պետականորեն ընդունման պատմության լուսաբանմանը:

Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունը» ընդգրկում է Հայոց աշխարհի՝ IV դարի առաջին տասնամյակներից մինչև Մեծ Հայքի թագավորության պարսկա–հռոմեական առաջին բաժանումն ընդգրկող ժամանակաշրջանի պատմությունը: Այն կարևոր տեղեկություններ է պարունակում Հայաստանի քաղաքական ու եկեղեցական կյանքի, օտար զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի մասին:

V դարի կեսերից հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը նկարագրված է ***Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին»*** ու Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» երկերում: Եղիշեի երկը նվիրված է Վարդան Մամիկոնյանի գլխավորած հզոր ժողովրդական ապստամբությանը, որի գագաթնակետն էր Ավարայրի ճակատամարտը: Ղազար Փարպեցին, նույնպես պատմելով Վարդանանց հերոսական պայքարի մասին, մանրամասն ներկայացրել է Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը:

V դ. վարքագրական գրականության նմուշներից է Վարդան Մամիկոնյանի դստեր՝ ***Շուշանիկի*** նահատակությանը նվիրված «*Շուշանիկի վարքը*»:

VI դ. մինչև 661 թ. իրադարձությունները նկարագրված են ***Մեբեռոս Եպիսկոպոսի «Պատմությունում»:*** Հեղինակը հատուկ ուշադրություն է դարձրել հայ ժողովրդի ազատագրական պայքարին և հայոց ամբողջական ու անկախ պետության վերականգնմանն ուղղված հայ գործիչների ջանքերին:

Մովսես Կաղանկատվացին (VII–VIII դդ.) իր ***«Աղվանից աշխարհի պատմություն»–ում*** գրել է Մեծ Հայքի Հայոց Արևելից կողմանց՝ Արցախ և Ուտիք աշխարհների մասին: Այն կարևոր սկզբնաղբյուր է հայոց պետականության և Հայ առաքելական եկեղեցու ենթակայության տակ գտնվող Կուրի ձախափնյա՝ բուն Աղուանքի պատմության վերաբերյալ:

Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմությունը» նվիրված է պարսկական նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարին:

VIII դ. պատմիչ Ղևոնդ Վարդապետն իր «Պատմություն» երկում նկարագրել է հայ ժողովրդի ծանր վիճակը և հերոսական պայքարը Արաբական խալիֆայության տիրապետության և բռնությունների դեմ:

Փիլիսոփայություն: Դեռևս IV դարում համաշխարհային ասպարեզում փիլիսոփայական մտքի նշանավոր ներկայացուցիչ էր ճարտասան ու մանկավարժ ***Պարույր Հայկազնը:*** V դարում Հայաստանում փիլիսոփայության (իմաստասիրություն) ասպարեզում հանդես եկան ***Եզնիկ Կողբացին*** և ***Դավիթ Անհաղթը:*** Եզնիկ Կողբացին իր ***«Աղանդների հերքումը»*** երկում քրիստոնեական հավատքը պաշտպանել է հակադիր ուսմունքներից:

Հայ մեծագույն փիլիսոփա Դավիթ Անհաղթն իր ***«Իմաստասիրության սահմանումներ»*** երկում մեծ տեղ է հատկացրել բնության ճանաչմանը: Նա կատարել է գիտությունների դասակարգում՝ ըստ բնագիտության, թվաբանության և աստվածաբանության: Քննարկելով անտիկ փիլիսոփաների հիմնադրույթները՝ Դավիթ Անհաղթն իր փիլիսոփայական երկերում անդրադարձել է նաև տիեզերագիտական կարգի որոշ դրույթների: Վերջիններս մեծ կարևորություն ունեին բնափիլիսոփայական մտքի զարգացման համար: Տիեզերքի կառուցվածքի մասին Արիստոտելի ուսմունքից բխող (տարրերի, Երկրի և տիեզերական մարմինների գնդաձևության մասին) դրույթներն առկա են Դավիթ Անհաղթի աշխատություններում:

Բնափիլիսոփայություն: Հայ մեծ գիտնական, բնափիլիսոփա, մաթեմատիկոս, տիեզերագետ–աստղագետ, աշխարհագետ, Հայաստանում ճշգրիտ և բնական գիտությունների հիմնադիր ***Անանիա Շիրակացին*** (612–685 թթ.) կարևոր դեր է հատկացրել Երկրի՝ որպես տիեզերական մարմնի ուսումնասիրությանը, որը նոր մակարդակ բարձրացրեց

Դավիթ Անհաղթ (մանրանկար)



Անանիա Շիրակացի

աստղագիտությունը: Անանիա Շիրակացին, իր տիեզերագիտական աշխատություններում ամփոփելով անտիկ և վաղ միջնադարյան Հայաստանի բնափիլիսոփայական մտքի նվաճումները, հիմնավորել է Երկրի և տիեզերական մարմինների գնդաձևության գաղափարը:

Անանիա Շիրակացին քննադատել է աստղագուշակությունը և ցույց տվել աստղային երկնքի ուսումնասիրության կարևորությունը ճանապարհորդությունների և եղանակը կանխագուշակելու համար: Նա գրել է Կենդանակերպի, Ծիր Կաթինի և Խեցգետնի համաստեղության մասին: Շիրակացին հստակ ձևակերպել է նյութական աշխարհի գոյության գաղափարը՝ պայմանավորված հակադրությունների միասնությամբ ու պայքարով՝ «Գոյացումը սկիզբն է քայքայման և քայքայումը սկիզբն է գոյացման, քանզի այս անընդհատ հակառակությունից աշխարհը հարատևում է»:

Շիրակացին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Լուսնի ազդեցության հետ կապված մակընթացությունների ու տեղատվությունների, ինչպես նաև «աստղային երկնքի հետ կապված» երկրաշարժերի մասին: Երկրաշարժերի առաջացման մասին տարերային այս տեսությունը ապացուցվեց XX դարի երկրորդ կեսին: Պարզվեց, որ Արեգակնային համակարգի կենտրոնական աստղի՝ Արեգակի վրա պարբերաբար տեղի ունեցող առավել ուժեղ բռնկումներն ազդեցություն ունեն երկրաշարժերի առաջացման հարցում: Շիրակացու տիեզերագիտական աշխատություններում ամփոփված են վաղմիջնադարյան Հայաստանի բնափիլիսոփայական մտքի նվաճումները:

Աշխարհագրություն: Հայաստանի ամբողջական պատկերը նեկայացնող աշխարհագրական և քարտեզագրական անզուգական երկ է Մովսես Խորենացու (V դ.) և նրա գործը շարունակողի՝ Անանիա Շիրակացու (VII դ.) ***«Աշխարհացոյց»***–ը, որը հին և վաղմիջնադարյան ժամանակներում հայտնի աշխարհի աշխարհագրական նկարագրությու-

նը պարունակող աշխատություն է: Իր դարաշրջանի առումով «Աշխարհացոյց»–ն ահռելի նյութ է պարունակում Հայաստանի և հարևան երկրների մասին:

«Աշխարհացոյց»–ում նկարագրված են Մեծ Հայքի 15 աշխարհները և Փոքր Հայքը: Մեծ տեղ է հատկացված Արևելյան կիսագնդի՝ հասարակածից հյուսիս ընկած տարբեր երկրների վերաբերող աշխարհագրական և քարտեզագրական նյութերին: «Աշխարհացոյց»–ը թե՛ աշխարհագրական ձեռնարկ է, թե՛ քարտեզների ժողովածու՝ «Ատլաս»: «Աշխարհացոյց»–ում տրվում է նաև գլոբուս կազմելու գաղափարը: Շիրակացին մեծ ներդրում ունի նաև մաթեմատիկայի բնագավառում: Նրա կազմված թվաբանության դասագիրքն աշխարհի հնագույն դասագրքերից է:

Տոմար: Դվինի 554 թ. եկեղեցական ժողովն անդրադարձ է կատարել հայկական օրացույցին: *Հայկյան շրջանի* վրա հիմնված *Բուն Հայոց թվականի* (Ք. ա. 2492 թ.) կողքին սահմանվել է *Հայոց Մեծ թվականը*, որի սկիզբը համարվում է ***552 թ. հուլիսի 11–ը:*** Այնուամենայնիվ, Հայաստանում եկեղեցական տոների և ծիսակատարությունների ժամանակը որոշելիս հայկական արեգակնային շարժական օրացույցի հետ, ինչպես այլ քրիստոնյա երկրներում, սկսեցին գործածել հատուկ աղյուսակներ օրացուցային տարբերությունները կարգավորելու համար:

Իրավունք և եկեղեցական կանոնական գրականություն: IV դարից աշխարհիկ իրավունքի կողքին Հայաստանում զարգացավ եկեղեցական՝ կանոնական իրավունքը: Հայ եկեղեցական իրավունքի մեջ կարևոր էին Գրիգոր Լուսավորչի, Սահակ Պարթևի և մյուս սուրբ հայրերի հաստատած կանոններն ու Հայ առաքելական եկեղեցու ժողովներում ընդունված կանոնախմբերը: Ձեզ հայտնի է Հայոց Արևելից կողմանց թագավոր Վաչագան Բարեպաշտի ստեղծած «Սահմանադրություն կանոնական»–ը:

Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ կազմվել է եկեղեցու հայրերի գրվածքներից քաղված ***«Կնիք***

Հռիփսիմեի տաճարը (618 թ., կառուցող՝ Կոմիտաս կաթողիկոս)

հավատո» ժողովածուն: Հայոց կաթողիկոս ***Հովհան Գ Օձնեցին*** կազմել է համաշխարհային պատմության մեջ կանոնական իրավունքի վերաբերյալ առաջին ժողովածուն՝ «Կանոնագիրք Հայոց»-ը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ տեղեկություններ է պարունակում Մեբեռոսի «Պատմությունը»: Ո՞ր շրջանի իրադարձությունների պատմությանն է նվիրված Մովսես Կաղանկատվացու աշխատությունը:
2. Ինչ իրադարձությունների մասին է պատմում Ղևոնդ Վարդապետի աշխատանքը:
3. Ո՞վ էր Անանիա Շիրակացին: Ինչո՞վ է նա հայտնի:
4. Աշխարհագրական բնույթի ինչ աշխատություն է ստեղծվել վաղմիջնադարյան Հայաստանում: Ո՞վ է դրա հեղինակը: Ինչ տեղեկություններ է պարունակում «Աշխարհացույցը»:
5. Դվինի 554 թ. եկեղեցական ժողովն ինչ որոշումներ է կայացրել տոմարի վերաբերյալ:
6. Ինչո՞վ է հայտնի «Կանոնագիրք Հայոց» երկը, ո՞վ է դա կազմել:
7. Պատմագրություն բնագավառում ինչ ձեռքբերումներ եղան: Քանի՞ գրքից է կազմված Խորենացու «Հայոց պատմությունը», ինչ ժամանակագրական սահմաններ է ընդգրկում այն: Ո՞րն է Խորենացու մյուս ստեղծագործությունը:
8. IV–V դդ. ինչ հայ փիլիսոփաներ գիտեք: Ինչ հարցեր են արծարծել հայ փիլիսոփաներն իրենց ստեղծագործություններում: Ներկայացրեք Դավիթ Անհաղթի հայացքները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ պատմագրություն, Փավստոս Բյուզանդ, Եղիշե, Կորյուն, Ղազար Փարպեցի, Մեքենս, Մովսես Կաղանկատվացի, Պարույր Հայկազն, Դավիթ Անհաղթ, «Իմաստասիրության սահմանումներ», Եզնիկ Կողբացի, Անանիա Շիրակացի, «Աշխարհացոյց», Հայոց Մեծ թվական, Հովհան Գ. Օձնեցի, «Կանոնագիրք Հայոց»

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹ

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻՆ ԱՍՏԾՈ ՄԱՍԻՆ

«Երբ մեկը խոսի աներևույթի և նրա հավիտենական զորության մասին… պետք է միտքը հստակի, մտածմունքներ մաքրի, հոգեկան խռովքը վերացնի… Այդպես էլ նա, ով ցանկանում է նայել արեգակի ճառագայթներին, պիտի սրբի ու հեռացնի աչքերի պղտորությունը (առաջացնող) կեղտն ու ճպուռը, որպեսզի այդ աղտոտությունները, որ երևում են բբերի շուրջ, պայծառ լույսին նայելու արգելք չլինեն»:

Եզնիկ Կողբացի, Աղանդների հերքումը, Ա

§ 3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՎԵՍՏ

Ճարտարապետություն և քանդակագործություն: Հնագույն ժամանակներց հայտնի հայ ազգային ճարտարապետությունը վաղ միջնադարից առանձնանում է նոր որակներով քաղաքաշինության և հատկապես եկեղեցաշինության բնագավառներում: Միջնադարի ընթացքում ստեղծվեցին եկեղեցաշինության գլուխգործոցներ, որոնք իրենց տեղն ունեն համաշխարհային շինարարական արվեստի գանձարանում:

Վաղ միջնադարում կառուցապատման աշխատանքներ կատարվեցին Դվինում, Կարինում, Մանազկերտում: Զարգացում ապրեց ամրոցաշինությունը:

Վաղ քրիստոնեական հայկական բազիլիկ տաճարներին (Ծիծեռնավանք, Երերույք) հաջորդեցին կենտրոնագմբեթ հորինվածքով եկեղեցիները: Գմբեթները կառուցվում էին հնուց հայտնի՝ ժողովրդական տների ծածկերի *հազարաշեն* կոչվող ձևի օրինակով: Վաղ միջնադարյան հայկական եկեղեցիներից էին Ս. Էջմիածնի Մայր տաճարը (IV դ. սկիզբ), Ավանի (1590–ական թթ.), Մրենի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Զվարթնոցի (VII դ.) և շատ այլ վայրերում կառուցված եկեղեցիները:

Քանդակագործությունը սերտորոն կապված է ճարտարապետության հետ: Քանդակի հիասքանչ նմուշներ կան Աղձքի դամբարանում, Ս. Էջմիածնում, Երերույքում, Դվինում, Զվարթնոցում և այլ ճարտարապետական հուշարձաններում:

Քանդակագործության մեջ նոր երևույթ էր ***խաչքարը:*** Խաչքարի ստեղծման հիմքում Կենաց ծառը

Էջմիածնի Մայր տաճարը

Երերույքի բազիլիկ տաճարը (IV–V դդ.)

խորհրդանշող կոթողներ կանգնեցնելու վաղեմի ավանդույթն էր: Խաչքարը արտահայտում է Քրիստոսի փրկագործությունը: Ի նշանավորումն ռազմական հաղթանակների, պատմական կարևոր իրադարձությունների, ինչպես նաև ի հիշատակ տաճարների, եկեղեցիների, աղբյուրների, կամուրջների կառուցման կանգնեցվել են խաչքարեր:

Արվեստ: IV–VII դդ. կառուցված եկեղեցիները զարդարում էին խճանկարներով և որմնանկարներով (Քասաղ, Ս. Էջմիածին, Տեկոր, Զվարթնոց, Արուճ):

Ձեռագիր գրքերը մանրանկարներով զարդարելու արվեստը հայ մատենագրության մեջ զարգացել է վաղ միջնադարից և հետագայում մեծ վերելք ապրել: Հայկական առաջին մանրանկարները ավետարանական բովանդակություն ունեցող VI դ. չորս մանրանկարներն են, որոնք պահպանվել են VI դ. փղոսկրյա կազմի տակ «Էջմիածնի Ավետարանի» (989 թ.) ձեռագրի վերջում:

Վաղմիջնադարյան Հայաստանում զարգացել են նաև եկեղեցական երգն ու երաժշտությունը: Եկեղեցական արարողություններին և տոներին կատարվում էին Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Կոմիտաս կաթողիկոսի ստեղծած շարականները:

Զվարթնոցի տաճարը (VII դարի կեսեր, կառուցող՝ Ներսես Գ Տայեցի կաթողիկոս)

Փղոսկրյա կազմ. VI դ., Էջմիածնի Ավետարան

Ուշագրավ էին հայ ոսկերիչների, խեցեգործ վարպետների գործերը, որոնք լայն կիրառություն ունեին դեռևս հնադարից: Արմավիրում, Արտաշատում, Գառնիում և Դվինում հայտնաբերվել են գեղեցիկ զարդեր և բազմագույն անոթներ՝ ջրամաններ, պնակներ, թասեր, կարասներ և ապակուց պատրաստված տարբեր սրվակներ:

Հայկական արհեստագործության գլուխգործոցները հասնում էին արվեստի մակարդակի, իսկ նրանց ստեղծած վարպետների համբավը տարածվում էր Հայաստանի սահմաններից դուրս:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վաղմիջնադարյան քրիստոնեական պաշտամունքային ինչ շինություններ կարող եք նշել: Նկարագրե՛ք դրանք:
2. Ինչ է խաչքարը:
3. Ո՞ր շրջանին են վերաբերվում հայկական առաջին մանրանկարները:
4. Արվեստի էլ ո՞ր ճյուղերն են զարգացել վաղմիջնադարյան Հայաստանում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազարաշեն գմբեթ, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Զվարթնոց եկեղեցիներ, Աղցքի դամբարան, խաչքար, որմնանկար, մանրանկար

ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում III–V–րդ դարերում ձևավորվեցին նոր՝ ավատատիրական կարգեր: Ձևավորվեց ավատատիրական աստիճանակարգը, որի գլուխ կանգնած էր թագավորը: Աշխարհների և գավառների նախկին կառավարիչները դարձան նախարարներ և իշխաններ ու ժառանգական իրավունքով տիրեցին այդ կալվածներին: Նրանք կազմեցին ազատների դասը: Աստիճանակարգի ստորին հարթակում անազատների դասն էր, որը կազմված էր գյուղացիներից և նախկին ստրուկ–մշակներից: Թագավորը երկիրը կառավարում էր արքունիքի և գործակալությունների միջոցով, որոնք հետո դարձան առանձին նախարարական տների մենաշնորհ: Տրդատ Գ Արշակունու օրոք աշխարհում առաջինը քրիստոնեությունը հռչակվեց մեր երկրի պետական կրոն: Ձևավորվեց հայոց եկեղեցու վարչական կառույցը: Եկեղեցին սկսեց մեծ դեր խաղալ պետության կյանքում: Ավատատիրության ժամանակաշրջանին բնորոշ էին զորեղացող նախարարների անջատողական ձգտումները: Նրանք հաճախակի անհնազանդություն էին ցուցաբերում և ապստամբում թագավորական իշխանության դեմ:

Արշակունյաց թագավորության վերացումից հետո Պարսկաստանը ցանկանում էր վերջնականապես իրեն ենթարկել Հայաստանը: Հայաստանի նկատմամբ այն վարում էր կոշտ քաղքականություն: Պարսից արքունիքը պահանջել է, որ հայերը կրոնափոխ լինեն: Դրա դեմ բռնկվեց հուժկու համաժողովրդական ապստամբություն, որը գլխավորեց սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Պարսկաստանը ստիպված էր առժամանակ հրաժարվել իր նկրտումներից: Հայաստանի նկատմամբ խտրական քաղաքականությանը հայերը պատասխանեցին նոր ապստամբությամբ՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, որն ավարտվեց Հայաստանի ներքին ինքնավարության ճանաչմամբ: Հայերի ազատագրական շարժումները և անկախ պետություն ստեղծելու ձգտումները շարունակվեցին նաև հետագա դարերում: Դրանք տվեցին ցանկալի արդյունք՝ ի դեմս ության վերականգնման՝ Բագրատունիների գլխավորությամբ: Հայոց պատմության մեջ դարակազմիկ իրադարձություն էր Մեսրոպ Մաշտոցի կողմից հայոց գրերի գյուտը: Ձևավորվեց և զարգացավ հայ թարգմանական և ինքնուրույն գրականությունը: Մեծ վերելք ապրեցին պատմագրությունը, փիլիսոփայությունը, բնական գիտությունները, երաժշտությունը, կերպարվեստը, ճարտարապետությունը:

1. Ներկայացրե՛ք ավատատիրական աստիճանակարգությունը. ի՞նչ դասերից էր այն կազմված:
2. Որո՞նք էին հողատիրության հիմնական ձևերը. նշե՛ք դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները:
3. Ե՞րբ է քրիստոնեությունը հռչակվել Հայաստանի պետական կրոն: Ո՞վ էր գլխավորում հայոց եկեղեցին:
4. Գնահատե՛ք հայ Արշակունի արքաների վարած ներքին և արտաքին քաղաքականությունը:
5. Ներկայացրե՛ք V դարի ազատագրական պատերազմները: Թվարկե՛ք նշանավոր ճակատամարտերը:
6. Համեմատե՛ք և գնահատե՛ք Վարդանանց և Վահանանց ապստամբությունները: Ի՞նչ պատմական նշանակություն ունեցան այդ ապստամբությունները:
7. Բերե՛ք փաստեր և հիմնավորե՛ք, որ հետագայում ևս հայ ժողովուրդը չի կորցրել սեփական անկախ պետություն ստեղծելու երազանքը և շարունակել է ազատագրական պայքարը նվաճողների դեմ:
8. Ներկայացրե՛ք V–IX դարերի հայ մշակույթի ձեռքբերումները և նշանավոր ներկայացուցիչներին:

ԲԱԺԻՆ
II

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԶԱՐԳԱՑԱԾ ՄԻՔՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ: ԱՇՈՏ I

Հայոց պետականության վերականգնման գործընթացը: VIII դարի ընթացքում և IX դարի առաջին կեսին արաբական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարը տվեց ցանկալի արդյունք: **855 թ.** արաբական խալիֆը, համոզվելով, որ անհնարին է բռնի ճանապարհով հնազանդեցնել հայերին, զորավար Բուղային հետ կանչեց Հայաստանից և այնտեղ կառավարիչ նշանակեց **Աշոտ Բագրատունուն**: Արաբները, բացի Դվինից, լուծարքի ենթարկեցին Հայաստանի իրենց զորակայանները և մյուս քաղաքներից դուրս բերեցին զորքերը: Այդ քայլին նրանք գնացին նաև հայերին իրենց թշնամի Բյուզանդիայից հետ պահելու նպատակով: 862 թ. խալիֆը նոր զիջում կատարեց՝ Աշոտ Բագրատունուն տվեց իշ-

Կարսի բերդը՝ Աշոտ I–ի սպարապետական ամրոցը

խանաց իշխանի և հարկեր հավաքելու պաշտոնները: Խիստ կրճատվեցին խալիֆայությանը վճարվող հարկերը: Հայրենիք վերադարձան Բուղայի կողմից գերեվարված հայ իշխանները:

Շուտով Աշոտ Բագրատունին կարողացավ իր ազդեցությունը տարածել ոչ միայն Արծրունյաց, Սյունյաց, Արցախի և այլ նախարարների, այլև վրաց ու աղվանից իշխանների վրա: Պատահական չէ, որ նա համարվում էր նաև Վրաց և Աղվանից իշխանաց իշխան: Աշոտը վերակազմեց բանակը, նրա թիվը հասցրեց 40 հազարի, իր եղբորը՝ **Աբասին,** նշանակեց սպարապետ: Աշոտի հետ սկսեցին հաշվի նստել արաբական ամիրաները: Բագրատունիների ձեռքն անցավ երկրի ամբողջ վարչական, տնտեսական և ռազմական իշխանությունը: Արաբական տիրապետությունը միայն ձևական էր: Աշոտը թեև չէր կրում արքայական թագ, բայց փաստորեն ինքնավար թագավորության տերն էր՝ Արմինիա փոխարքայության կազմում: **Այսպիսով՝ 855 թ. Հայաստանը ձեռք բերեց փաստական անկախություն. սկսվեց պայքար Բագրատունիների ստեղծած պետականության միջազգային ճանաչման համար, որը տևեց շուրջ 30 տարի:**

IX դարի երկրորդ կեսին հայկական պետականության վերականգնման համար կային նպաստավոր պայմաններ. թուլացել էր Արաբական խալիֆայությունը, նրա հակառակորդ Բյուզանդիան ամեն կերպ խրախուսում էր Հայաստանի անջատողական քայլերը: Անկախությունը վերականգնելու հարցում միակամ էին հայ հասարակության բոլոր խավերը: Այդ գործում մեծ հետաքրքրություն հանդես բերեց և ջանքեր գործադրեց Հայ եկեղեցին: ***869 թ.*** հայոց կաթողիկոս **Զաքարիա Զագեցու** նախաձեռնությամբ հրավիրվեց հայ իշխանների հատուկ ժողով, որտեղ որոշվեց Աշոտ Բագրատունուն հռչակել և Հայաստանը թագավորություն ճանաչելու նպատակով դիմել խալիֆայությանը: Սակայն այդ ժամանակ խնդիրը չլուծվեց: Խալիֆը դեռ շարունակեց ձգձգել կատարված

Բարսեղ (Վասիլ) I կայսեր դրամներից

ԲԱՂԱՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԶՈՏ Ի-Ի ՕՐՈՇ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍԱՍԱՆ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ

փաստի՝ Հայաստանի անկախության ճանաչումը:

Բյուզանդական կայսր **Բարսեղ (Վասիլ) I–ը**, որը հայկական **Մակեդոնական** արքայատոհմի հիմնադիրն էր, որոշեց դաշինք կնքել Հայաստանի հետ: 876 թ. նա հատուկ պատվիրակություն ուղարկեց Աշոտ Բագրատունու մոտ: Հայերին սիրաշահելու նպատակով Բարսեղը հայտնում էր, որ ինքը ծագում է հայ Արշակունիների տոհմից, որոնց Արշակունիների օրոք թագադրում էին Բագրատունիները՝ որպես թագադիր ասպետներ, և ուստի այժմ նրանից ինքը թագ է խնդրում: Ի նշան փոխադարձ բարեկամության՝ Աշոտը թագ է ուղարկում Բարսեղին: Այս խորհրդանշական գործողությամբ ավելի է աճում Բագրատունիների հեղինակությունը տարածաշրջանում:

Թագավորության հռչակումը: Աշոտ I: Արաբական խալիֆայությունը չհաշտվեց ստեղծված իրավիճակի հետ և փորձեց վերականգնել իր դիրքերը Հայաստանում: Հատուկ հանձնարարությամբ խալիֆը Հայաստան ուղարկեց նոր ոստիկանի: Նա արաբ ամիրաների հետ որոշում է բարեկամություն հաստատելու պատրվակով հայ իշխաններին հրավիրել Դվին և ոչնչացնել նրանց: Աշոտ Բագրատունին հանդես է բերում մեծ զգուշություն և հետևում է արաբների բոլոր գործողություններին: Նրա ուղարկած մարդիկ ձերբակալում են ոստիկանի սուրհանդակներին: Արաբների մոտ հայտնաբերվում է ոստիկանի նամակը՝ ուղղված Գանձակի ամիրային, որում բերվում էր Դվինում հայ իշխաններին ծուղակի մեջ գցելու ծրագիրը: Աշոտի խորհրդով Դվին են ներկայանում ոչ թե իշխանները, այլ հայոց զորքը: Սպարապետ Աբասը մտնում է Գանձակի ամիրայի վրանը, և ցույց տալով հայտնաբերված նամակը՝ ձերբակալում է նրան: Ապա հայերը նրան ստորացնելու նպատակով ձիու փոխարեն ջորի են նստեցնում, հասցնում են Հայաստանի հարավային սահմանը և վտարում երկրից: Այսպիսի անփառունակ վախճան է ունենում արաբական վերջին ոստիկանի իշխանությունը Հայաստանում:

Վերջին դեպքերն արաբներին ստիպում են փոխել իրենց վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Խալիֆը ***885 թ.*** թագ է ուղարկում Աշոտ Բագրատունուն և նրան ճանաչում հայոց թագավոր: Այդ փաստը խիստ անհանգստացնում է Բյուզանդիային, ուստի Աշոտին շտապում է թագ և արքայական հանդերձանք ուղարկել նաև կայսր Բարսեղ Ի–ը: 885 թ. ***օգոստոսի 26–ին*** Շիրակ գավառում՝ աթոռանիստ ***Բագարանում,*** Աշոտ Բագրատունին օծվում է Հայաստանի թագավոր՝ ***Աշոտ Ի*** անունով ***(885–890 թթ.):*** Օծումը մեծ հանդիսավորությամբ, օտարերկրյա հյուրերի և հայ իշխանների մասնակցությամբ իրականացնում է կաթողիկոս ***Գևորգ Գառնեցին:***

Այսպիսով՝ դեռևս 855 թ. ձեռք բերված փաստական անկախությունը միջազգային ճանաչում ստացավ միայն 885 թ.: Արշակունիներից հետո ավելի քան 450 տարի անց Բագրատունիների գլխավորությամբ Հայաստանը վերականգնեց իր թագավորությունը:

Բագրատունյաց առաջին արքան խելացի և փորձառու քաղաքական գործիչ էր: Նա մեծ աշխատանք կատարեց երկիրը միավորելու և նրա անվտանգությունը ապահովելու ուղղությամբ: Աշոտ Ի–ը ճնշեց Վանանդի իշխանների ապստամբությունը և նրանց գավառը՝ Կարս կենտրոնով, միացրեց իր պետությանը: Կարսը վերակառուցվեց և դարձավ հայոց սպարապետների նստավայրը: Խաղաղ ճանապարհով Աշոտ Ի–ը կարողացավ իր ազդեցությունն ամրապնդել զորեղ Սյունյաց և Արծրունյաց իշխանների վրա: Աշոտի գերիշխանությունն ընդունեցին նաև Մանազկերտի, Արճեշի, Բերկրիի և այլ շրջանների արաբական ամիրայությունները: Մի քանի արշավանքներից հետո հաջողվեց սանձահարել Վրաստանը և Աղվանքը ասպատակող հյուսիսկովկասյան լեռնականներին: Շնորհիվ այդ հանգամանքի՝ ամրապնդվեցին Աշոտ Բագրատունու բարեկամական կապերը վրացիների ու աղվանների հետ:

Հասկանալով, որ հայ իշխանական տները կա-

րող են նպաստել երկրի հզորացմանը՝ Աշոտ Ի–ը նոր կալվածքներ տվեց թուլացած իշխաններին: Երկրում սկսվեց խաղաղ շինարարական ժամանակաշրջան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրե՛ք Հայոց թագավորության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները:
2. Նախարարական ո՞ր տոհմը գլխավորեց անկախության համար մղվող պայքարը: Վերհիշե՛ք, թե ինչպես վերականգնվեց Հայաստանի ներքին ինքնավարությունը:
3. Ներկայացրե՛ք Աշոտ Բագրատունու գործունեությունը Հայոց թագավորության վերականգնման ուղղությամբ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունի, Զաքարիա Զագեցի, Բարսեղ (Վասիլ) I, Գևորգ Գառնեցի

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՍՄԲԱՏ II–Ի ԵՎ ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ՕՐՈՔ

Սմբատ I–ի պայքարը պետականության պահպանման համար: Աշոտ Ի–ը մահացավ 890 թ. և իր հաջորդ ***Սմբատ I–ին (890–914)*** թողեց ամուր և միավորված երկիր: Նա իր հոր նման խելացի քաղաքական գործիչ էր և շարունակում էր ներքին ու արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը՝ ճկուն դիվանագիտությամբ խուսանավելով Բյուզանդիայի ու խալիֆայության միջև: 892 թ. Սմբատը գրավեց Հայաստանում արաբների վերջին հենակետը՝ Դվինը, ձերբակալեց արաբ ամիրաներին և շղթայակապ ուղարկեց Կոստանդնուպոլիս:

Սմբատն ավարտեց հայկական հողերի միավորման գործը, թագավորությանը միացրեց Տայք, Տարոն, Աղձնիք, Բարձր Հայք նահանգները, Գու-

գարքի Ջավախք գավառը: Ըստ պատմիչ ***Հովհաննես*** կաթողիկոս ***Դրասխանակերտցու***՝ Սմբատի օրոք Հայաստանի սահմաններն արևելքում հասան Ատրպատական, արևմուտքում՝ Եփրատ, հյուսիսում՝ Վրաստան, հարավում՝ Տավրոսի լեռները: 892 թ. Սմբատ I–նն օգնեց վրացիներին և Վրաստանից դուրս վտարեց արաբներին: Նրա օժանդակությամբ վրաց Բագրատունիներից **Ատրներսեհը** դարձավ Վրաստանի թագավոր:

893 թ. Սմբատ I–ը բարեկամության և առևտրական պայմանագիր կնքեց Բյուզանդիայի հետ: Նույն թվականին Դվինում տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ, որից զոհվեցին բազմաթիվ մարդիկ: Այս աղետին գումարվեց Հայաստանի քաղաքական վիճակի շեշտակի վատթարացումը: Հայ–բյուզանդական պայմանագիրն անհանգստացրեց Ատրպատականի արաբական ամիրայությանը: Այնտեղի ***Սաջյան*** տոհմի առաջնորդ ամիրան ներխուժեց Հայաստան, գրավեց Նախճավանը, ապա՝ ավերված Դվինը:

894 թ. Արագածոտն գավառի ***Դոզս*** գյուղում հայոց զորքերը Սաջյան ամիրայի նկատմամբ տանում են փայլուն հաղթանակ և արաբներին վտարում Հայաստանից: Հայկական թագավորությունը վերացնելու արաբների նոր փորձերը ևս ավարտվում են անհաջողությամբ:

Անիի Սմբատաշեն պարիսպները

Ատրպատականի նոր ամիրա ***Յուսուֆը,*** հաջողության չհասնելով ռազմական ճանապարհով, փորձեց օգտագործել հայ իշխանների միջև ծագած վիճելի հարցերը: X դ. սկզբին Վասպուրականի Արծրունի և Սյունիքի Սյունի նախարարական տների միջև վեճ էր ծագել Նախճավան գավառի պատկանելության շուրջ: Սմբատն այդ վեճը լուծեց հօգուտ Սյունյաց նախարարների. Նախճավանը հանձնվեց Սյունիքին: Օգտվելով առիթից՝ ***908 թ.*** Յուսուֆը թագ ուղարկեց դժգոհ Գագիկ Արծրունուն և նրան ճանաչեց Հայաստանի թագավոր: Շուտով Յուսուֆը Գագիկի հետ ներխուժեց Հայաստանի կենտրոնական գավառներ: Տեղի ունեցած ճակատամարտում Սմբատի բանակն անհաջողություն կրեց: Հայոց թագավորը ստիպված փակվեց ***Կապույտ*** բերդում: Համառ պաշտպանությունից հետո հայերի ուժերը սպառվեցին. Սմբատը ստիպված եղավ դադարեցնել դիմադրությունը: Հակաարաբական պայքարը շարունակեց Նախճավանի **Երնջակ** բերդի կայազորը: Յուսուֆը Հայոց թագավորին բերեց Երնջակի պարիսպների մոտ և պահանջեց հրամայել զենքը վայր դնել ու հանձնվել: Բայց քաջարի արքան պաշտպաններին կոչ արեց շարունակելու դիմադրությունը: Գազազած Յուսուֆը Սմբատին մահապատժի ենթարկեց և նրա մարմինը խաչեց Դվինի դարպասներին: Երկրի վրա կախվեց պետականությունը կորցնելու լուրջ վտանգ:

Արաբների դեմ պայքարի հաղթական ավարտը: Աշոտ Երկաթ: Կապույտ բերդի անկումից հետո արաբներն սկսեցին ավերել երկիրը: Հայ ժողովուրդը կրկին ոտքի կանգնեց նորաստեղծ պետականությունը պահպանելու համար: Պայքարի գլուխ անցավ Սմբատի որդին՝ ***Աշոտ II–ը,*** որին քաջության համար ժողովուրդը կոչեց ***Երկաթ (914–928):*** Ատրպատականի ամիրայության դեմ հայ ժողովրդի մղած պայքարը տևեց մեկ տասնամյակից ավելի: Աշոտի շուրջ համախմբվեցին բազմաթիվ հայ իշխաններ: Վերակազմվեց բանակը: Հայերի շրջանում պառակտում առաջացնելու նպատա-

կով արաբները, ի հակադրություն Աշոտ Երկաթի, Հայոց թագավոր ճանաչեցին սպարապետ Աշոտին՝ թագավորի հորեղբոր որդուն: Սակայն Աշոտ Երկաթին հաջողվեց սաստել սպարապետին և նրան հարող իշխաններին:

921 թ. Աշոտ Երկաթը, խուսափելով թշնամուց, ամրացավ ***Սևանա կղզում:*** Արաբ զորավար ***Բեշիրի*** զորքը շրջապատեց կղզին: Հայոց թագավորը հրամայեց հայ զինվորներին նավակներով մոտենալ ափին՝ տպավորություն ստեղծելով, թե իրենք անզեն են և պատրաստվում են անձնատուր լինել: Սակայն դեռ ափ չհասած՝ Աշոտի զինվորները հանեցին իրենց թաքցրած նետ ու աղեղները և նետահարեցին հանկարծակիի եկած արաբներին: Սևանի հաղթանակը մեծ ոգևորություն առաջացրեց երկրում: Սևանից նահանջող արաբները ***Գառնիի*** մոտ նոր պարտություն կրեցին զորավար ***Գևորգ Մարզպետունու*** փոքրաթիվ ջոկատից: Երկու ծանր պարտությունից հետո արաբները մինչև 925 թ. իրենց զորքերն ամբողջությամբ դուրս բերեցին Հայաստանից:

Աշոտ II Երկաթն իր գահակալության մեծ մասն անցկացրեց պատերազմներում, սակայն կարողացավ իրականացնել նաև որոշակի շինարարական աշխատանք: Նա իր թագադրության վայրը՝ ***Երազգավորն,*** ընդարձակեց և դարձրեց մայրաքաղաք: Այս ժամանակաշրջանի դեպքերն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել հայտնի վիպասան ***Մուրացանի «Գևորգ Մարզպետունի»*** պատմավեպում:

Սևանի կղզու խաչքարերից

Կենտրոնական Հայաստանի տարածքն արաբներից մաքրելուց հետո Աշոտն ու նրա եղբայր Աբասն իրենց զորքով մտան Վրաստան և հաղթանակ տարան Թիֆլիսի ամիրայի նկատմամբ: Այս գործողությամբ ավելի ամրապնդվեց հայ և վրաց Բագրատունիների քաղաքական դաշինքը: 922 թ. Բաղդադի խալիֆը ոչ միայն թագ ուղարկեց Աշոտին, այլև նրան ճանաչեց *շահնշահ* (արքայից արքա) Հայոց, Վրաց և Աղվանից: Դա նշանակում էր, որ Հայոց թագավորը գերապատվություն էր ստանում ինչպես հարևան երկրների, այնպես էլ Վասպուրականի թագավորի և արաբական ամիրայությունների նկատմամբ: Աշոտի գահակալության վերջում երկրում սկսվեց խաղաղ շինարարական ժամանակաշրջան:

Աշոտ Երկաթ

Հարցեր և առաջադրանքներ

1. Փաստացի ե՞րբ է Աշոտ Բագրատունին հռչակվել հայոց թագավոր: Ինչո՞ւ Բարսեղ I կայսրը շտապեց ճանաչել Աշոտի գահակալությունը և թագ ուղարկեց նրան:
2. Պաշտոնապես ե՞րբ է վերականգնվել Հայոց թագավորությունը: Ո՞վ և որտե՞ղ օծեց Աշոտին որպես թագավոր:
3. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Աշոտ I արքան պետության ամրապնդման նպատակով:
4. Ե՞րբ է գահակալել Սմբատ I–ը:
5. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Սմբատ I–ը երկրի կենտրոնացման ուղղությամբ:
6. Ներկայացրե՛ք հայ–բյուզանդական և հայ–արաբական հարաբերությունները Սմբատ I Բագրատունու օրոք:
7. Ինչո՞ւ Գագիկ Արծրունին պայքարի դուրս եկավ Սմբատ I-ի դեմ: Նշե՛ք այդ հակամարտության հետևանքները Հայաստանի համար:
8. Ո՞վ էր Աշոտ Երկաթը, ինչպե՞ս նա կարողացավ հաղթել արաբներին: Ե՞րբ նա ճանաչվեց շահնշահ: Բնութագրե՛ք Աշոտ Երկաթին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սմբատ I, Հովհաննես Դրասխանակերտցի, Սաջյան տոհմ, Ատրներսեհ, Յուսուֆ, Դողսի ճակատամարտ, Կապույտ բերդ, Գագիկ Արծրունի, Աշոտ II Երկաթ, Բեշիր, Երազգավորս, Գևորգ Մարզպետունի, շահնշահ

§ 3. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼՔԸ X ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XI ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Անիի Կուսանաց վանքը, երկհարկ կամրջի ավերակներն ու միջնաբերդը (հեռվում)

Հայոց թագավորության վերելքի սկիզբը: Աշոտ Երկաթի օրոք արաբների դեմ տարած հաղթանակներն ամրապնդեցին Հայաստանի անկախությունը: Վերացավ արտաքին հարձակումների վտանգը, և երկիրը թևակոխեց երկարատև խաղաղության ու շինարարության մի ժամանակաշրջան: Աշոտին փոխարինեց եղբայրը՝ ***Աբասը (928–953),*** որը մինչ այդ Կարսի կառավարիչն էր: Նա երկրի մայրաքաղաքը Երազգավորսից տեղափոխեց իր նստավայրը՝ Կարս, որը կարճ ժամանակում կառուցապատվեց, ընդարձակվեց և դարձավ Հայաստանի կարևոր քաղաքներից: Աբասը հայ եկեղեցու կենտրոնաձիգ ուժն օգտագործելու համար կաթողիկոսական աթոռը 948 թ. ***Անանիա Մոկացի*** կաթողիկոսի օրոք Աղթամարից տեղափոխեց Կարս: Այստեղ կառուցվեց նշանավոր ***Առաքելոց եկեղեցին,*** որը կանգուն է առ այսօր:

Աբասին փոխարինեց որդին՝ ***Աշոտ III–ը (953–977),*** որն իր բարի գործերի, աղքատների նկատմամբ ցուցաբերած հոգատար վերաբերմունքի համար ստացավ ***Աշոտ Ողորմած*** անունը: Աշոտն ավելի ամրապնդեց բանակը, այն դարձրեց մշտական և վերջ տվեց հյուսիսկովկասյան լեռնականների ասպատակություններին: Երկրում տարվեց մեծ ծավալի շինարարական աշխատանք: 961 թ. Աշոտ III–ը որոշեց մայրաքաղաքը Կարսից տեղափոխել Շիրակի ***Անի*** քաղաքը: Այնտեղ էլ նա օտարերկրյա հյուրերի և հայ իշխանների ներկայությամբ մեծ հանդիսավորությամբ թագադրվեց Անանիա Մոկացու ձեռքով: Նոր մայրաքաղաքը աշխարհագրական նպաստավոր տարածքում էր: Ախուրյան գետը երեք կողմից շրջափակում էր քաղաքը, դարձնում այն անառիկ: Առևտրական ճանապարհների վրա գտնվելու հանգամանքը նպաստեց քաղաքի զարգացման արագ բարձրացմանը:

Խոսրովանույշ թագուհու նախաձեռնությամբ հիմնադրվեցին միջնադարյան հայ ճարտարապետական գլուխգործոցներից ***Սանահինի*** և ***Հաղպատի*** վանքերը, որոնք թագավորից ստացան ընդարձակ կալվածքներ:

Երկրում շինարարական աշխատանքն ավելի մեծ չափեր ընդունեց ***Սմբատ II Տիեզերակալ*** թագավորի օրոք ***(977–990):*** Աշոտ Ողորմածը 963–964 թթ. կառուցել էր Անիի աշտարակներով պարիսպների առաջին գիծը, որի ներսում արդեն քաղաքն ընդարձակվելու հնարավորություն չուներ: Սմբատը կառուցեց Անիի պարիսպների երկրորդ գիծը:

Սմբատ Տիեզերակալի գահակալության շրջանում հանկարծակի Շիրակի վրա հարձակվեց Դվինի ամիրան, որը վաղուց ի ենթական էր և թվում էր այլևս երկրի համար ոչ մի վտանգ չի ներկայացնում: Սմբատը ոչ միայն կարողացավ կասեցնել նրա հարձակումը, այլև 987 թ. վերջ տալ այդ ամիրայության գոյությանը: Սմբատ թագավորն Այսրկովկասում այնքան մեծ հեղինակություն էր վայելում, որ դարձավ հաշտարար–միջնորդ վրաց–աբխազական հարաբերություններում:

Թագավորության հզորացումը Գագիկ I–ի օրոք: Բագրատունյաց Հայաստանն իր քաղաքական ու տնտեսական վերելքի գագաթնակետը թևակոխեց ***Գագիկ I–ի*** օրոք **(990–1020)**: Մինչև Գագիկի գահակալումը Հայաստանի տարբեր շրջաններում ստեղծվել էին ինքնուրույն հայկական թագավորություններ: Վերջինս կարողացավ նրանց ստիպել ընդունել իր գերիշխանությունը: Գագիկը կրում էր ***շահնշահ հայոց*** պատվատիտղոսը: Դա նշանակում էր, որ հայկական բոլոր թագավորների նկատմամբ նա ուներ գերադասելի դիրք: Առանց շահնշահի՝ արքայից արքայի մյուս թագավորներն իրավունք չունեին ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնելու ուրիշ երկրների հետ: Նույնիսկ կաթողիկոսի ընտրությունը կատարվում էր Բագրատունյաց թագավորի կարգադրությամբ:

1001 թ. Տաշիր–Զորագետի (Լոռի) թագավոր ***Դա-***

Խոսրովանույշ թագուհու շիրմաքարը Հաղպատում

Սպարապետ Վահրամ Պահլավունու գերեզմանը Մարմաշենի տաճարի բակում

վիթն ապստամբեց Գագիկ Ի–ի դեմ և հրաժարվեց ճանաչել Անիի Բագրատունիների գերիշխանությունը: Գագիկը հարձակվեց այդ թագավորության վրա և կարճ ժամանակում գրավեց այն: Դավիթը դիմեց փախուստի: Քանի որ Գագիկ Ի–ը վերջինիս զրկեց իր հողերից, պատմիչները նրան հիշատակում են ***Դավիթ Անհողին*** անունով: Շուտով Դավիթը զղջաց իր արարքի համար և ներում խնդրեց Գագիկից: Շահնշահը ներեց նրան և վերադարձրեց նրա տիրույթները:

Գագիկի օրոք կարճ ժամանակով խախտվեց երկրի խաղաղությունը: ***998 թ.*** Հայաստան ներխուժեց Ատրպատականի ամիրան: Թագավորը հայոց սպարապետ, նշանավոր զորավար ***Վահրամ Պահլավունու*** հետ ***Ապահունիք*** գավառում կանգնեցրեց թշնամուն: Հայկական զորքին միացան նաև վրացիները: Ճակատամարտը տեղի ունեցավ ***Ապահունիքի Ծումբ*** գյուղի մոտ: Հայ–վրացական զորքերը տարան փայլուն հաղթանակ, որից հետո արաբները մեկընդմիշտ հրաժարվեցին Հայաստանի ու Վրաստանի նկատմամբ իրենց ոտնձգություններից:

Պահլավունիների Ամբերդ ամրոցը

Գագիկը շարունակեց իր նախորդների շինարարական լայն գործունեությունը: Նրա ժամանակ Անին հասավ նոր ծաղկման: 1001 թ. ավարտվեց Անիի հոյակերտ Մայր տաճարի՝ ***Կաթողիկեի*** կառուցումը, որի նախաձեռնողը հայոց թագուհի ***Կապրամիդեն*** էր՝ Սյունյաց ***Վասակ*** թագավորի դուստրը: Շուտով ավարտվեց նաև Անիի Ձվարթնոցատիպ (Գագկաշեն) եկեղեցու շինարարությունը: Այս հոյակերտ տաճարների հեղինակը հռչակված ճարտարապետ ***Տրդատն*** էր:

Գագիկի ժամանակ իրենց շինարարական գործունեությամբ աչքի ընկան հատկապես ***Պահլավունիները:*** Վահրամ Պահլավունու ջանքերով կառուցվեցին ***Բջնիի*** նշանավոր ամրոցն ու եկեղեցին: Արագածի լանջին Պահլավունիների հիմնադրած ***Ամբերդը*** դարձավ Հայաստանի ամուր բերդերից մեկը: Ախուրյանի ձախ ափին նրանք կառուցեցին ***Մարմաշենի*** նշանավոր եկեղեցին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քաղաքականություն էր վարում Աբաս թագավորը: Ներկայացրեք Աշոտ III–ի կառավարման շրջանում երկրի ունեցած հաջողությունները:
2. Ինչով է հայտնի Խոսրովանույշ թագուհին:
3. Պարզաբանեք Սմբատ II–ի ներքին և արտաքին քաղաքականության արդյունքները:
4. Ձեր կարծիքով՝ ինչու Բագրատունիները կառուցեցին նոր մայրաքաղաք: Երբ և ում օրոք Անին հռչակվեց մայրաքաղաք:
5 Փաստերով հիմնավորեք, որ իրոք Գագիկ I–ի օրոք Բագրատունյաց թագավորությունը հասել էր իր հզորության գագաթնակետին: Իշխանական ո՞ր տոհմը նշանակալի դիրքերի հասավ նրա օրոք:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աբաս, Անանիա Մոկացի, Աշոտ III, Խոսրովանույշ, Սմբատ II Տիեզերակալ, Գագիկ I, Դավիթ Անհողին, Վահրամ Պահլավունի, Ծումբի ճակատամարտ, Անիի մայր տաճար, Կապրամիդե, Տրդատ ճարտարապետ, Բջնի, Ամբերդ, Մարմաշեն

§ 4. ԱՆԻԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՐՈՀՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Գագիկ Արծրունի թագավոր, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի

Հայկական նոր թագավորությունների առաջացումը: Ավատատիրական հարաբերությունների խորացման հետ մեկտեղ ուժեղանում էին խոշոր իշխանների անջատողական ձգտումները: Իրենց կալվածքներում հայ իշխաններն հաճախ այնքան էին հզորանում, որ հաշվի չէին նստում հայոց թագավորների հետ: Նրանց անջատողական քայլերը խրախուսվում էին հարևան թշնամական պետությունների կողմից: Խալիֆայությունը չէր հրաժարվում Հայաստանը վերանվաճելու իր մտադրությունից, իսկ Բյուզանդիան, իրեն ներկայացնելով հայերի շահերի պաշտպան, իրականում ձգտում էր յուրացնելու հայկական տարածքները: Այս ամենի հետևանքով X դարի սկզբից ի հայտ եկան Բագրատունյաց թագավորության մասնատման երևույթներ:

Հայկական պետության առաջին տրոհողները դարձան ***Վասպուրականի*** Արծրունիները: Դժգոհ մնալով Սմբատ I–ից Նախճավանը Սյունյաց իշխաններին տալու համար՝ Գագիկ Արծրունին 908 թ. թագ ստացավ Ատրպատականի ամիրայից: Նա թեև չկարողացավ դառնալ Հայոց թագավոր, սակայն Վասպուրականը հռչակեց թագավորություն: Այն հետագայում դարձավ առաջացած թագավորություններից ու իշխանություններից ուժեղագույնը: Նրա տարածքն ընկած էր Վանա և Ուրմիա լճերի շրջանում՝ քարավանային ճանապարհների վրա: ***Գագիկ I Արծրունու*** օրոք Վասպուրականը հասավ տնտեսական ու քաղաքական նոր աստիճանի: Այդ ժամանակ ***Մանուել*** ճարտարապետի ձեռքով կառուցվեց Աղթամար կղզու Ս. Խաչ նշանավոր եկեղեցին: Այստեղի վերջին թագավոր ***Սենեքերիմի*** գահակալության շրջանում ***(968–1021)*** Վասպուրականում կար 8 քաղաք, 72 ամրոց, հազարավոր գյուղեր, հարյուրից ավելի վանք: Բնակչության թիվը հասնում էր 1 միլիոնի: Վախենալով Արևելքից արշավող սելջուկ–թուրքերի աշավանքնե-

ից՝ Սենեքերիմը 1021 թ. Վասպուրականը կտակեց Բյուզանդիային, ինքը տեղափոխվեց Սեբաստիա:

Անին մայրաքաղաք դարձնելուց հետո Կարսը մնաց Աշոտ III–ի եղբոր՝ սպարապետ ***Մուշեղի*** տրամադրության տակ: 962 թ. Մուշեղը հրաժարվեց ենթարկվել թագավորին և 963 թ. Կարսը հռչակեց ինքնուրույն թագավորություն: Այն հայտնի է նաև ***Վանանդի թագավորություն*** անունով: Կարսի Բագրատունիների պետությունը գոյատևեց մոտ 100 տարի: Այն զգալի վերելք ապրեց հատկապես Մուշեղի հաջորդ **Աբասի** օրոք:

Շուտով Կարսի Մուշեղ Բագրատունու օրինակին դիմեցին ***Սյունյաց*** իշխանները: Գահերեց իշխան ***Սմբատը*** 987 թ. Սյունիքը հռչակեց թագավորություն: Վերջինս ունեցավ ամենաերկար կյանքը՝ գոյատևելով մինչև ***1170 թ.***: Սկզբում նրա մայրաքաղաքը ***Սյունի*** ավանն էր՝ այժմյան Սիսիանը, ապա տեղափոխվեց ***Կապան:*** Ուստի թագավորությունը հայտնի էր նաև ***Կապանի*** կամ ***Բաղաց թագավորություն*** անուններով: Սյունիքը մեծ վերելք ապրեց ***Վասակ*** թագավորի օրոք ***(998–1040):*** Սյունիքում ևս կային շատ բնակավայրեր, եկեղեցիներ ու վանքեր:

Բացի Կարսից՝ Բագրատունիների մի ճյուղը հաստատվեց նաև ***Տաշիր–Զորագետում: 972 թ.*** Տաշիրի կառավարիչ նշանակվեց Աշոտ III թագավորի որդի ***Գուրգենը:*** 978 թ. Սմբատ II–ը հատուկ հրովարտակով իր եղբորը՝ Գուրգենին, շնորհեց թագավորի տիտղոս: Հիմնադրելով ***Լոռու*** կամ ***Տաշիր–Զորագետի*** թագավորությունը՝ Բագրատունիները նպատակ ունեին երկրի հյուսիսը պաշտպանելու Թիֆլիսի և Գանձակի ամիրայությունների հարձակումներից: Հետագայում Գուրգենի անունից այս թագավորությունը ստացավ նաև ***Կյուրիկյան*** անունը (Լոռիում Գուրգենին անվանում էին Կյուրիկե): Լոռու թագավորությունը գոյություն ունեցավ մինչև ***1113 թ.:*** Կյուրիկյանները հզորացան ***Դավիթ Անհողինի*** օրոք **(989–1048)**: Տաշիր–Զորագետի կենտրոնը ***Լոռի*** ամրոցն էր՝ այժմյան Ստեփանավանի մերձակայքում:

Բագրատունիների շառավիղներն իրենց իշխանությունն էին ստեղծել նաև Տարոնում: Այս իշխանությունը դարձավ Բյուզանդիայի նվաճողական ծրագրերի առաջին զոհը. 966 թ. Տարոնը զավթվեց բյուզանդացիների կողմից:

Հայաստանի հյուսիս–արևմուտքում՝ ***Տայքում***, 930–ական թթ. առաջացել էր մի փոքրիկ իշխանություն, որը Բյուզանդիայի կողմից ճանաչվեց իբրև ինքնուրույն պետություն, իսկ նրա կառավարիչ ***Դավիթը*** ստացավ կյուրապաղատի կոչում: Բյուզանդացիները կարողացան Դավթին համոզել, որ 1000 թ. նա իր իշխանությունը կտակի Բյուզանդիային:

Հայաստանի հյուսիս–արևելքում՝ Ուտիք և Արցախ աշխարհներում, կազմավորվեց ***Փառիսոսի*** կամ ***Խաչենի թագավորությունը:***

Անիի թագավորությունը վերջին Բագրատունիների օրոք: Հայկական բոլոր թագավորություններն ու իշխանություններն ընդունում էին իրենց կախվածությունը կենտրոնական՝ **Անիի** կամ **Շիրակի** թագավորությունից և համարվում էին նրա ենթակաները: Սակայն Անիի Բագրատունիներին չհաջողվեց միավորել երկիրը: Հայկական հողերը զավթելու Բյուզանդիայի քաղաքականությունը կործանարար եղավ Հայաստանի համար:

Շուտով՝ Գագիկ I–ի մահից հետո, երկրի մասնատման գործընթացն ընդգրկեց նաև Անիի թագավորությունը: Գահի շուրջ պայքար սկսվեց Գագիկի որդիների՝ ***Հովհաննես–Սմբատի և Աշոտի*** միջև: Սպարապետ Վահրամ Պահլավունու և կաթողիկոսի միջնորդությամբ կնքվեց հաշտություն, ըստ որի՝ Հովհաննես–Սմբատն ավագության իրավունքով ստանալու էր Անի ամրոցն ու Շիրակը, իսկ եռանդուն զորավար Աշոտը՝ շրջակա գավառները: Ավագ եղբոր մահից հետո Աշոտը ստանալու էր նաև Անին ու Շիրակը:

1022 թ. Տրապիզոնում վրաց–բյուզանդական բանակցությունների ժամանակ բյուզանդական կայսր **Բարսեղ II–ը** հայոց Պետրոս կաթողիկոսից պահանջեց Անիի թագավորությունը հանձնել իրեն:

Արքունիքում ուժեղացած բյուզանդասեր ուժերի ճնշման տակ Հովհաննես–Սմբատը կտակ գրեց՝ իր մահվանից հետո Անին Բյուզանդիային հանձնելու մասին: Այդ կտակը դավաճանաբար ուղարկվեց կայսր Բարսեղին: Փաստորեն Հովհաննես–Սմբատը խախտեց եղբոր հետ կնքած համաձայնագիրը՝ իր մահվանից հետո ամբողջ թագավորությունը Աշոտին թողնելու վերաբերյալ:

1041 թ. անհայտ հանգամանքներում մահացավ եղբայրներից կրտսերը՝ Աշոտ IV–ը, որը գլխավորում էր երկրի միավորման համար մղվող պայքարը: Ամենայն հավանականությամբ ինչպես Աշոտ IV–ը, քիչ անց՝ նաև Հովհաննես–Սմբատը զոհ դարձան բյուզանդացիների կազմակերպած խարդավանքներին: Պատահական չէ, որ անմիջապես բյուզանդական կայսրը զորք ուղարկեց Անի՝ պահանջելով կտակի համաձայն քաղաքը հանձնել իրեն: Սակայն 30 հազար անեցիներ Վահրամ Պահլավունու ղեկավարությամբ ջախջախեցին բյուզանդացիներին և վտարեցին երկրից: Պահլավունու ջանքերով գահ բարձրացավ Աշոտ IV–ի 16–ամյա որդին՝ ***Գագիկ II–ը (1042–1045):*** Չնայած իր երիտասարդ տարիքին՝ Գագիկը կարողացավ կարգ ու կանոն հաստատել երկրում, բանակը վերակազմավորել և ընդդեմ Բյուզանդիայի ուժեղ ճակատ ստեղծել: Կայսրը նոր զորքեր ուղարկեց Անին գրավելու համար: Կայսերական բանակների նոր արշավանքները ևս ձախողվեցին:

Մասնատված փոքրիկ Հայաստանը երկար չէր կարող դիմադրել հզոր Բյուզանդիային: Արքունիքում ավելի ու ավելի էր ամրապնդվում այն տեսակետը, որ երկիրը կարելի է փրկել հայկական հողերը քրիստոնյա բյուզանդացիներին զիջելու եղանակով: 1044 թ. Գագիկը հայ հոգևոր և աշխարհիկ մեծամեծների հորդորներով մեկնեց Կ.Պոլիս՝ կայսեր մոտ: Սակայն Գագիկին արգելեցին վերադառնալ հայրենիք և աքսորեցին Կիլիկիայի սահմանագլխին ընկած մի քաղաք: Ապա բյուզանդասեր իշխանները թշնամու առջև բացեցին Անիի դար-

պասները: Այսպես 1045 թ. կործանվեց Բագրատունիների ստեղծած պետական կազմավորումներից ամենաուժեղը՝ Անիի թագավորությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որո՞նք էին Բագրատունյաց կենտրոնացված պետության թուլացման պատճառները:
2. Ե՞րբ, որտե՞ղ և ո՞ւմ կողմից ստեղծվեցին ենթակա թագավորությունները: Դրանցից ո՞րն էր ամենահզորը:
3. Ի՞նչ քաղաքականություն էր վարում Բյուզանդիան Հայաստանի նկատմամբ: Հայաստանի ո՞ր տարածքները նվաճեց Բյուզանդիան X դ. երկրորդ կեսին և XI դ. սկզբներին:
4. Ներկայացրե՛ք Անիի թագավորության թուլացման պատմությունը:
5. Ո՞վ էր Գագիկ II-ը:
6. Ի՞նչ հետևանքներ ունեցավ Անիի թագավորության անկումը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անիի թագավորության փրոհում և անկում, Վասպուրականի, Վանանդի, Կապանի կամ Բաղաց, Տաշիր Զորագետի և Փառիսոսի թագավորություններ, Մանուել, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի, Սենեքերիմ, Սյունի ավան, Կյուրիկյան, Լոռի ամրոց, Հովհաննես–Սմբատ, Բարսեղ II, Աշոտ IV, Գագիկ II

§ 5. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայաստանի տնտեսական կյանքի վերելքը IX–XI դարերում: Բագրատունիների օրոք Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերը մեծ վերելք ապրեցին: Բարձր զարգացման հասավ գյուղատնտեսությունը: Հողագործության մակարդակով աչքի էին ընկնում Արարատյան, Տարոնի, Բագրևանդի, Բասենի, Վանանդի և Շիրակի դաշտերը:

Երկրագործության զարգացմանը մեծապես

նպաստում էր ջրանցքների ու առուների անցկացումը: Ոռոգելի հողերի տարածքն օրեցօր աճում էր: Մշակելի հողատարածքների ընդարձակումը խոպան հողերի հաշվին լայն տարածում ստացավ: Այդ հողերը կոչվում էին ***«Նորք»:*** Գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից էին բանջարաբուծությունն ու այգեգործությունը:

Անասնապահությամբ զբաղվում էին ավելի շատ նախալեռնային ու լեռնային հարուստ արոտավայրեր ունեցող շրջաններում՝ Արագածի, Բյուրականյան լեռների ստորոտներում, Սյունիքում, Տարոնում, Տաշիրում, Վասպուրականում և այլուր: Ժամանակակից պատմիչի վկայությամբ՝ Աշոտ Ի–ը հայոց կաթողիկոսին նվիրում էր ձիերի երամակներ, տավարի նախիրներ և ոչխարի հոտեր: Վերջինս այդ նվիրատվությունների հաշվին դարձել էր խոշոր հողատեր: Միայն ***Տաթևի*** վանքը X դ. սկզբին ուներ իրեն ենթակա 22 գյուղ:

Արհեստների հետագա զարգացումը հանգեցրեց նոր մասնագիտությունների հանդես գալուն: Դարբնությունից անջատվեցին պայտառությունը, զինագործությունը: Արհեստավորները քաղաքներում զբաղեցնում էին առանձին թաղամասեր: Անին հայտնի էր իր «Դարբնափողոց», «Նալբնդնոց», «Կոշկակարանոց» թաղամասերով: Միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին ***եղբայրությունների կամ համքարությունների*** մեջ իրենց շահերը պաշտպանելու նպատակով: Պղնձի մշակությամբ մասնագիտացել էին Սյունիքը և Տաշիրը: Հայաստանը ճանաչված էր նաև կաշեգործությամբ, մանածագործությամբ, կավագործությամբ, գինեգործությամբ:

Առևտուրը Հայաստանի տնտեսության կարևորագույն ճյուղերից էր: Երկիրն առևտրական կապերով կապված էր Արաբական խալիֆայության, Պարսկաստանի, Չինաստանի, Հնդկաստանի, Ռուսիայի և այլ պետությունների հետ: Հայաստանն արտահանում էր գործվածքներ, մետաղներ, ներկեր, գորգեր, Վանա տառեխ ձուկ, գինի:

X դ. Հայաստանում հաշվվում էր 40 մեծ և փոքր քաղաք: Քաղաքների աճը հետևանք էր արհեստների ու առևտրի շեշտակի վերելքի: Հայաստանով անցնում էին միջազգային առևտրական երկու ճանապարհներ: ***Հյուսիսայինը*** ձգվում էր Նախիջևան, Դվին, Անի, Կարին, Արծն, Երզնկա քաղաքներով, իսկ **Հարավայինը**՝ Բերկրիով, Վանով, Մանազկերտով, Խլաթով և Բաղեշով:

Քաղաքների կենտրոնում սովորաբար ***միջնաբերդն*** էր, որն ուներ առանձին պարիսպ: Նրա շուրջը ***շահաստանն*** էր՝ իր պարիսպներով: Վերջինիս շուրջը ***արվարձանն*** էր: Միջնաբերդում ապրում էին իշխանները, շահաստանում՝ մեծահարուստների խանութներն ու առևտրական շենքերն էին: Արվարձաններում արհեստավորներն ու առևտրականներն էին:

Դվինի, Արտաշատի կողքին հանդես եկան նոր խոշոր քաղաքներ: Անին ավելի քան 100 հազար բնակչություն ունեցող խոշոր կենտրոն էր: Այն հռչակված էր իր եկեղեցիներով: Խոշոր քաղաքներ էին նաև Կարսը, Արծնը և Կարինը: Նրանք ունեին 20–ից մինչև 100 հազար բնակիչ: Նշանավոր քաղաքական ու մշակութային կենտրոն էր նաև Վասպուրականի թագավորության մայրաքաղաք Վանը:

Պետական կարգը: IX–XI դարերում Հայաստանը միջնադարյան տիպի միապետություն էր: Պետության գլուխ կանգնած էր թագավորը՝ անսահմանափակ իշխանությամբ: Երկրի համար վճռական նշանակություն ունեցող բոլոր հարցերում թագավորը խորհրդակցում էր արքունիքի հետ: Անիում նստող Բագրատունիներին ենթակա էին հայկական բոլոր թագավորներն ու իշխանները, ինչպես նաև արաբ ամիրաները:

Թագավորը պետությունը կառավարում էր բարձրաստիճան հատուկ պաշտոնյաների և գործակալությունների միջոցով: Բարձրաստիճան պաշտոնները տրվում էին արքունիքին մոտ կանգնած իշխաններին ու արքայական տան անդամներին:

Տաթևի վանքը

Իշխանաց իշխանի գործակալությունն իրականացնում էր կապը թագավորի և իշխանների միջև, հսկում թագավորական կալվածքները, պետական գանձարանը, կազմակերպում հարկերի սահմանումն ու գանձումը: Իշխանաց իշխանի նշանակած ***բերդապահները*** հսկում էին պետական կարևորագույն բերդերն ու ամրոցները: Այս պատասխանատու պաշտոնը սովորաբար վարում էին թագավորի եղբայրները կամ արքայորդիները: X դ. կեսերից այն անցավ Պահլավունիների ձեռքը:

Հայոց սպարապետը երկրի բոլոր ռազմական ուժերի հրամանատարն էր: Արշավանքների ժամանակ ենթակա թագավորների զորքերը ևս անցնում էին սպարապետի տրամադրության տակ:

Բագրատունյաց պետության մեջ հատուկ դեր ուներ բանակը, որի թիվը հասնում էր 80–100 հազար զինվորի: Բանակը կազմված էր ***արքունական*** և ***մարզպանական*** գնդերից: Մարզպանական գունդը կազմվում էր իշխանների զորքերից: Խաղաղ ժամանակ պահվում էր փոքրաթիվ բանակ: Բանակը բաղկացած էր հեծելազորից և հետևակից:

Գլխավոր դատավորի պաշտոնը նախկինի նման զբաղեցնում էր հայոց կաթողիկոսը:

Ավատատիրական հասարակությունը բաժան-

վում էր ***ազատների*** և ***անազատների*** կամ ***հարկատուների*** դասերի: Ազատներ էին իշխաններն ու բարձրաստիճան հոգևորականությունը: Հողի գերագույն սեփականատերը համարվում էր թագավորը: Հարկատու դասի մեջ մտնում էին շինականները և քաղաքի արհեստավորներն ու առևտրականները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տնտեսության ո՞ր ճյուղերը վերելք ապրեցին զարգացած միջնադարում: Գյուղատնտեսության բնագավառում ի՞նչ նորություններ ի հայտ եկան:
2. Արհեստների ի՞նչ նոր տեսակներ զարգացան Հայաստանում: Ի՞նչ է եղբայրությունը:
3. Ներկայացրե՛ք երկրի ներքին և արտաքին առևտուրը: Արտաքին շուկայում ինչո՞վ էր հայտնի Հայաստանը:
4. Թվարկե՛ք զարգացած միջնադարի հայկական քաղաքները: Նկարագրե՛ք այդ ժամանակի քաղաքը: Համեմատե՛ք այն ժամանակի եվրոպական քաղաքի հետ:
5. Գծապատկերի միջոցով ներկայացրե՛ք Բագրատունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը: Համեմատե՛ք այն վաղ միջնադարի կառավարման համակարգի հետ:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նորք, Տաթևի վանք, եղբայրություն կամ համքարություն, Արծն, Երզնկա, Բերկրի, Մանազկերտ, արքունական և մարզպանական գնդեր

ԳԼՈՒԽ II

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ: ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐ

§ 1. ՍԵԼՋՈՒԿ–ԹՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Սելջուկյան առաջին արշավանքները Հայաստան: Ալթայից Միջին Ասիա ընկած ընդարձակ տափաստաններում ապրում էին քոչվոր թյուրքական ցեղեր: X դ. երկրորդ կեսին նրանց մի մասը, միավորվելով իրենց առաջնորդ Սելջուկի շուրջ, ստեղծեց սելջուկ–թուրքական պետությունը: Սելջուկները ռազմատենչ ցեղեր էին, հարձակումներ էին գործում հարևան ժողովուրդների վրա, ավերում ու կողոպտում էին իրենց ճանապարհին ընկած շեն բնակավայրերը, դաժան ու անխնա կոտորում խաղաղ բնակչությանը: Սկզբում փոքր խմբերով, իսկ XI դարից՝ խոշոր ցեղախմբերով նրանք շարժվեցին դեպի արևմուտք, ներխուժեցին Ատրպատական, Հայաստան ու Փոքր Ասիա:

Սելջուկ–թուրքերն ավար ձեռք բերելու նպատակով XI դ. սկզբին ներթափանցեցին Վասպուրական: Հայ բնակչությունը համառ դիմադրություն ցույց տվեց թշնամուն: Սակայն ի վերջո, Սենեքերիմ թագավորը որոշեց չշարունակել պայքարը և իր բազմաթիվ տոհմակիցներով հեռացավ Սեբաստիա: Վասպուրականն անցավ բյուզանդացիներին: Բայց Բյուզանդիան էլ լուրջ քայլեր չձեռնարկեց ինչպես այդ, այնպես էլ հայկական մյուս երկրամասերը սելջուկների դեմ ամուր հենակետերի վերածելու ուղղությամբ: Ավելին, կայսրությունը շարունակեց հայկական հողերը զավթելու, երկիրը թուլացնելու, հայ իշխաններին Հայաստանից հեռացնելու, հայերի զինական ուժերը ցիրուցան անելու իր քաղաքականությունը: Հայ բնակչության վրա դրվեցին ծանր հարկեր: Հալածանքներ սկսվեցին հայ եկեղեցու դեմ: Ինչպես հետագայում կյանքը ցույց տվեց, թուլացնելով քրիստոնյա Հայաստանը, Բյուզանդիան խոցելի դարձրեց կայսրության

Անիի Ս. Փրկիչ եկեղեցին (1034–1036 թթ.)

արևելյան սահմանները արշավող զորեղ թշնամու՝ սելջուկ–թուրքերի արշավանքների նախօրյակին:

XI դ. կեսերին՝ Անիի Բագրատունյաց թագավորության անկումից մի քանի տարի անց, սելջուկյան բանակները ներխուժեցին Հայաստան: Վասպուրականում բյուզանդացիները փաստորեն որևէ փորձ չկատարեցին թուրքերին կանգնեցնելու համար: Սելջուկները գրեթե անարգել հասան Հայաստանի կենտրոնական գավառներ, և զորքը բաժանելով մասերի՝ սկսեցին ասպատակել երկիրը: Նրանք հայ բնակչության սոսկալի կոտորած կազմակերպեցին Բարձր Հայքում՝ ***Մանանաղի*** գավառում: ***1048 թ.*** նրանք նույն դաժանությամբ վարվեցին Կարինի մոտ գտնվող **Արծն** քաղաքի բնակչության հետ: Այդ քաղաքը հռչակված էր իր աշխույժ վաճառականական շուկաներով: Չունենալով պաշտպանական պարիսպներ՝ քաղաքի բնակիչները որևէ դիմադրություն չցուցաբերեցին սելջուկներին: Սակայն դա նրանց չփրկեց. Արծնը հիմնահատակ ավերվեց, բնակչությունը կողոպտվեց կամ գերի տարվեց:

Հայ ժողովրդի հերոսական պայքարը սելջուկ–թուրքերի դեմ: Բյուզանդացիները, հասկանալով, որ սելջուկների դեմ պայքարում իրենց անհրաժեշտ են դաշնակիցներ, սկսեցին սիրաշահել հայերին ու վրացիներին, որոշ չափով օժանդակել նրանց զինական ուժի ամրապնդմանը: Շուտով բյուզանդական զորքը ստացավ հայ–վրացական ջոկատների աջակցությունը և փորձեց համատեղ հակահարված հասցնել թուրքերին: Սակայն ***Բասենի ճակատամարտում*** թշնամու գերակշիռ ուժերը հաջողություն ունեցան: Այդուհանդերձ, թշնամու դեմ հայ ժողովրդի անհավասար պայքարը շարունակվեց:

1054 թ. սելջուկյան հերթական արշավանքը գլխավորեց նրանց պետության առաջնորդ ***Տուղրիլը:*** Այս անգամ ահեղ թշնամուն դիմադրելու համար հայերը նախապատրաստական աշխատանք էին տարել: Սելջուկ–թուրքերը համառ դիմադրության հանդիպեցին **Կարին** քաղաքում և ստիպված եղան դադարեցնել քաղաքի պաշտպանությունը:

Նրանք փորձեցին գրավել Հայաստանի մեկ այլ հայտնի բերդաքաղաք՝ Վանանդի թագավորության մայրաքաղաք Կարսը: Բայց այստեղ էլ թշնամին անակնկալի եկավ՝ հանդիպելով կարսեցիների կատաղի դիմադրությանը: Մարտում իր քաջությամբ աչքի ընկավ քաղաքի երիտասարդ պաշտպաններից ***Թաթուլ Վանանդեցին,*** որը մահացու վիրավորել էր Տուղրիլի մերձավորներից մեկին: Թշնամուն հաջողվում է գերի վերցնել քաջ հայորդուն: Սելջուկների առաջնորդը հրամայում է նրան մահապատժի ենթարկել: Թաթուլի օրինակով հայ զինվորներն ամենուր շարունակում են հերոսական պայքարը թշնամու դեմ:

Կարինի ու Կարսի անհաջողություններից կատաղած սելջուկները որոշում են իրենց վրեժը լուծել ***Մանազկերտի*** բնակիչներից: Այստեղ նրանք պարիսպներին մոտեցնում են պաշարողական մեքենա՝ բաբան: Սակայն պաշտպաններից մեկը, որին «Փռանգ» էին անվանում, շտապ հասնում է պաշարողական մեքենային, իր հետ վերցրած նավթով հրկիզում այն և հեծնելով ձին՝ անվնաս վերադառնում է ամրոց: Ըստ պատմիչ Արիստակես Լաստիվերցու՝ քաղաքի պաշտպաններին օգնում էր Տուղրիլի բանակում գտնվող մի անձնավորություն, որն անընդհատ դեպի քաղաք արձակած նետերին ամրացրած գրություններով պաշտպաններին տեղեկացնում էր թշնամու գործողությունների մասին: Մանազկերտը մեկամյա դիմադրությունից հետո ևս մնում է անառիկ: Հայերի դիմադրական մարտերը հաջողությամբ իրականացվեցին նաև Մամիկոնյանների առաջնորդությամբ Տարոնում ու Սասունում:

Այսպիսով՝ Կարինի, Կարսի ու Մանազկերտի և այլ բնակավայրերի հերոսական դիմադրական մարտերը ձախողեցին այդ ժամանակ Հայաստանը հպատակեցնելու սելջուկների ծրագիրը: Թշնամու հրոսակներն իրենց կրած խայտառակ պարտության վրեժը կրկին լուծեցին նենգ միջոցներով՝ խաղաղ բնակչության կողոպուտով, կոտորածով ու գերեվարությունով:

Մեկ տասնամյակ անց սելջուկները հսկայական բանակով նորից հայտնվեցին Հայաստանում: Բյուզանդացիներն այս անգամ էլ երկիրը թողեցին անպաշտպան: Միայն ***1071 թ.*** բյուզանդական կայսրը մեծ բանակով մտավ Հայաստան և բանակ դրեց ***Մանազկերտի դաշտում:*** Սակայն թուրքերը տարան հաղթանակ, կայսրը իր բազմաթիվ զինվորների հետ գերի ընկավ: Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիների կրած ծանր պարտությունը վճռեց Հայաստանի բախտը: Երկիրն ընկավ սելջուկ–թուրքերի տիրապետության տակ: Հայ բնակչության արտագաղթը մեծ չափեր ընդունեց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ քայլեր ձեռնարկեց Բյուզանդիան Հայաստանում Անիի թագավորության անկումից հետո:
2. Ովքե՞ր էին սելջուկ–թուրքերը:
3. Թվարկե՛ք նրանց արշավանքները, ցո՛ւյց տվեք դրանց հետևանքները:
4. Ներկայացրե՛ք հայերի հերոսական պայքարը սելջուկների դեմ:
5. Որտե՞ղ և ե՞րբ տեղի ունեցավ վճռական ճակատամարտը բյուզանդացիների և սելջուկների միջև, ի՞նչ արդյունք ունեցավ այն:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սելջուկ–թուրքեր, Մանանաղի գավառ, Տուղրիլ, Թաթուլ Վանանդեցի, Մանազկերտի 1071 թ. ճակատամարտ

§ 2. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բագրատունիների և հայկական մյուս պետական կազմավորումները: Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայկական պետականությունը չվերացավ: Բազմաթիվ թագավորություններ ու իշխանություններ շարունակեցին պահպանել իրենց գոյությունը: Այդ կազմավորումները հնարավորություն տվեցին երկրի տարբեր շրջաններում շա-

ռունակելու պայքարը Բյուզանդիայի ու սելջուկ–թուրքերի զավթողական քաղաքականության դեմ: Թեև թշնամիների համեմատությամբ հայության ուժերն անհավասար էին, սակայն ժողովուրդը չէր կորցրել իր հավատը նաև միասնական, համահայկական պետականությունը վերականգնելու հարցում:

Պետականության համար պայքարում կրկին կարևոր դեր ունեին Բագրատունիները: Բյուզանդացիների կողմից Անիի զավթումից հետո նրանք շարունակում էին իշխել հարևան Կարս–Վանանդում և Տաշիր–Զորագետում:

Կարսի թագավորության ազդեցիկ դիրքը պահպանվեց ***Գագիկ Աբասյանի*** օրոք (1029–1065 թթ.): Նա կարողացավ ամուր կապեր հաստատել վրաց Բագրատունիների հետ, Տուղրիլ բեկի հրոսակների հարձակումներից անառիկ պահել Կարս մայրաքաղաքը: Պատահական չէ, որ Անիի Բագրատունիներից հետո *շահնշահի* տիտղոսն անցավ Գագիկ Աբասյանին:

Տաշիր–Զորագետի (Լոռու) Կյուրիկյան թագավորությունն ուներ ընդարձակ տարածքներ և նույնպես հաջողությամբ պայքար էր մղում բյուզանդացիների զավթողական քաղաքականության դեմ: Դավիթ Անհողինի որդին կարողացավ իր ազդեցությունը տարածել Վրաստանի տարածքում՝ Կախեթում, որտեղ զգալի թիվ էր կազմում հայ բնակչությունը: Կյուրիկյանները ջանքեր գործադրեցին նաև Անին բյուզանդացիներից ազատագրելու և մասնական թագավորությունը վերականգնելու համար: Սակայն այդ պայքարը հաջողություն չունեցավ սկսված սելջուկյան արշավանքների պատճառով: Մինչև XII դ. սկիզբը Բագրատունյաց այս թագավորությունն ապրեց խաղաղ շինարարական ժամանակաշրջան:

Արևելյան Հայաստանում հայկական պետականության պահպանման համար պայքարում առաջատար դեր ունեցավ անմատչելի ու անտառապատ տեղանք ունեցող Սյունիքի ու Արցախի հայությունը: Պատահական չէ, որ այդ նահանգներում հայկա-

Դավիթ IV Շինարար Բագրատունի (Բագրատիոնի)

կան պետականությունը շատ ավելի երկար կյանք ունեցավ: Վասակ թագավորից հետո (1040 թ.) Սյունիքի թագավորությունը կարողացավ հաջող պայքար մղել Գանձակի ամիրայության և սելջուկ–թուրքերի դեմ և գոյատևել մինչև XII դարի երկրորդ կեսը: Արցախում իրենց իշխանությունը պահպանեցին Առանշահիկների տոհմի ներկայացուցիչները:

Հայկական վերոհիշյալ թագավորություններից բացի իրենց կիսանկախ վիճակը պահպանում էին բազմաթիվ այլ իշխանություններ ու կազմավորումներ ***Տայքում, Սասունում, Վասպուրականում, Սպեր–Բաբերդում, Համշենում*** և այլուր: Լեռնային Սասունում իշխում էին Թոռնիկյանները, անտառապատ Համշենում՝ Համամ իշխանի հաջորդները: Հայկական կազմավորումները XI դ. երկրորդ կեսին և XII դ. համառ պայքար էին մղում մահմեդական զանազան իշխանությունների դեմ:

Սելջուկների դեմ պայքարի նոր փուլը: XII դ. սելջուկ–թուրքերի դեմ պայքարում ձևավորվեց հարևան քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի ու վրացիների ռազմական դաշինքը: Հայ–վրացական զինակցությունը նոր փուլ թևակոխեց վրաց Բագրատունի թագավոր ***Դավիթ Շինարարի օրոք (1089–1125):*** Վրաց արքունիքն սկսեց շահագրգռել հայ աշխատասեր բնակչությանը, մասնավորապես իշխանական տներին, որպեսզի տեղափոխվեն Վրաստան: Հայաստանից արտագաղթած հայերի համար Դավիթ թագավորը Կուր գետի ափին կառուցել տվեց ***Գորի*** քաղաքը, հայ իշխաններից ոմանց հանձնեց պատասխանատու պաշտոններ: Հայերի մեջ ամրապնդվեց քրիստոնյա Վրաստանի օգնությամբ սելջուկներից ազատագրվելու գիտակցությունը:

Օգտվելով Վրաց թագավորության նկատմամբ հայ բնակչության բարյացակամ վերաբերմունքից՝ XII դ. սկզբին Դավիթ Շինարարի զորքերը մտան Լոռի և Տաշիր–Զորագետի թագավորությունը միացրին վրաց պետությանը: 1124 թ. վրաց թագավորը հայ իշխանների աջակցությամբ մտավ նաև Անի, որի բնակչությունն ապստամբել էր մահմե-

դականների դեմ և օգնության խնդրանքով դիմել Վրաստանին: Հայ պատմիչները ոգևորությամբ պատմում են, որ Անիի Կաթողիկե մայր տաճարի վրա, որը մահմեդականները վերածել էին մզկիթի, կրկին բարձրացվեց քրիստոնեական խաչը:

Սակայն ամբողջ XII դ. ընթացքում ինչպես Անիի, այնպես էլ ամբողջ Հյուսիսային Հայաստանի համար պայքարը շարունակվեց: Անի քաղաքը քանիցս ձեռքից ձեռք անցավ: Սամվել Անեցի պատմիչի վկայությամբ 1126 թ. Անիի պաշտպանությանը մասնակցած աշխարհազորայինների մեջ կային նաև կանայք: Նրանցից աչքի էր ընկել հերոսուհի ***Այծեմնիկը,*** ով, արհամարհելով նետերից ստացած վերքերը, շարունակում էր պարիսպներից քարեր նետել թշնամու վրա:

Հայ–վրացական զինակցությունն ավելի խորացավ XII դ. երկրորդ կեսին: Հայ Արծրունիները ստացան Տփղիսի (հետագայում՝ Թիֆլիս) քաղաքագլխի պաշտոնը: Վրաստանում ***Գեորգի III–ի (1156–1184)*** դեմ բարձրացված խռովության ժամանակ վերոհիշյալ Արծրունիների փեսա, հայ իշխան Սարգիս Զաքարյանը (Սարգիս Մեծ) պաշտպանեց արքային: Վրաց թագավորն այդ քայլի համար հայ իշխանին վարձահատույց եղավ. 1170–ական թթ. նրան հանձնեց Անի քաղաքն ու Շիրակի գավառը:

Զաքարյանների իշխանապետությունը: Վրաց **Թամար** թագուհին (1184–1207), շարունակելով իր հոր քաղաքականությունը, մահմեդական իշխանությունների դեմ պայքարում սերտորեն համագործակցեց հայերի հետ: Նա 1185 թ. ***Սարգիս Զաքարյանին*** վստահեց սպարապետի՝ ամիրսպասալարի պաշտոնը: Հոր մահից հետո այդ պաշտոնն անցավ Սարգսի ավագ որդուն՝ ***Զաքարե Զաքարյանին:*** Վերջինիս կրտսեր եղբայր ***Հովհաննեսը (Իվանե)*** դարձավ աթաբեկ՝ թագաժառանգի խնամակալ: Թամարի բանակում զգալիորեն աճեց հայ զինվորականության թիվը:

XII դ. վերջին Զաքարեի գլխավորած հայ–վրացական զորքերը թշնամուց ազատագրեցին Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ շրջաններ՝ Արագա-

Վրաց Բագրատունի (Բագրատիոնի) Թամար թագուհին և Գեորգի III արքան (որմնանկար)

Զաքարյան–Արղությանների զինանշանը

ծոտն գավառը, Ամբերդ ամրոցը, քանիերորդ անգամ՝ նաև Անին ու Շիրակը, ապա՝ Արցախը, Սյունիքը, Արարատյան դաշտը: XIII դ. սկզբին հայկական հողերի ազատագրման գործը նոր թափ ստացավ. սելջուկները վտարվեցին նաև Հայաստանի կենտրոնական գավառներից, հայ–վրացական ուժերը մոտեցան Վանա լճի հյուսիսային ափերին:

Սելջուկներից ու մահմեդական այլ իշխանություններից ազատած հայկական հողերը վրաց արքունիքը ճիշտ համարեց հիմնականում հանձնել իրենց մեծ ծառայություններ մատուցած Զաքարյաններին և նրանց ենթակա հայ իշխանական մյուս տներին: Այսպես՝ Գուգարքի մի մասը, Անին ու Շիրակը տրվեցին Զաքարեին, Այրարատ նահանգի արևելյան մասը՝ Դվին կենտրոնով՝ Հովհաննեսին և այլն: Այդ հողերում հայ իշխանները Վրաստանի հովանավորությամբ ստացան ներքին լայն ինքնուրույնություն և փաստորեն ստեղծեցին իրենց իշխանապետությունը: Իրենց կալվածքներում նրանք պահում էին զորք,

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ունեին սեփական կալվածքներ, տնտեսական ազատ գործունեություն ծավալելու իրավունք և այլն:

Զաքարյաններն այնքան ազդեցիկ էին իրենց տիրույթներում, որ անգամ պահում էին կախյալ իշխանություններ: Հայաստանի հյուսիս–արևելքում՝ ***Տավուշում*** և շրջակա գավառներում, Սարգիս Զաքարյանի եղբայր **Վահրամը** հիմնադրել էր **Վահրամյանների իշխանությունը՝ Գագ** կենտրոնով: Զաքարյանների մի ճյուղն էլ իշխում էր ***Զավախքում*** (կենտրոնը՝ Թմուկ բերդը): Նման ենթակա իշխանություններ կազմավորեցին **Պռոշյանները, Վաչուտյանները, Օրբելյանները, Հասան–Ջալալյանները, Պահլավունիները** և այլք: Երկիրը քաղաքական ու սոցիալ–տնտեսական բուռն վերելք էր ապրում: ***Զաքարյանների օրոք փաստորեն վերականգնվել էր հայոց պետականությունը***:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայկական ինչ թագավորություններ և իշխանություններ կային Հայաստանում XI–XII դարերում:
2. Ինչպե՞ս զարգացան հայ–վրացական հարաբերությունները Դավիթ Շինարարի օրոք:
3. Ե՞րբ և ո՞ւմ օրոք երկու երկրների միջև զինակցությունը հասավ իր գագաթնակետին:
4. Ներկայացրե՛ք Զաքարյանների ազատագրական պայքարի արդյունքները:
5. Հայաստանում Զաքարյաններից կախյալ ինչ իշխանություններ ստեղծվեցին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գագիկ Աբասյան, Առանշահիկների տոհմ, Սպեր–Բաբերդ, Համշեն, Թոռնիկյաններ, հայ–վրացական զինակցություն, Դավիթ Շինարար, Այծեմնիկ, Տփղիս (Թիֆլիս), Սարգիս Զաքարյան, Թամար թագուհի, ամիրսպասալար, Հովհաննե (Իվանե) Զաքարյան, Վահրամյաններ, Գագ, Զավախք, Թմուկ բերդ, Պռոշյաններ, Վաչուտյաններ, Օրբելյաններ, Հասան–Ջալալյաններ

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՄՈՆՂՈԼՆԵՐԸ: ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՏԱՐ ՆՎԱՃՈՂՆԵՐԻ ԴԵՄ XIII–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Չինգիզ խան

Պայքար մոնղոլ զավթիչների դեմ: XIII դ. սկզբին մոնղոլական տափաստանների ռազմաշունչ քոչվոր ցեղերը, միավորվելով իրենց առաջնորդ ***Չինգիզ խանի*** շուրջ, իրականացրին ընդարձակ նվաճումներ: Նրանք հարևան Չինաստանից հետո ներխուժեցին Միջին Ասիա, Իրան և հասան Հայկական լեռնաշխարհի սահմաններին: Մոնղոլները դաժան դատաստան էին տեսնում նվաճված երկրների բնակչության հետ:

1220 թ. աշնանը մոնղոլական զորքերն անցան Արաքսը և մտան Զաքարյան Հայաստանի տարածքը: Ապա նրանք Արցախի հարավարևելյան սահմանով ներթափանցեցին Վահրամյաններին ենթակա գավառներ և շարժվեցին դեպի Վրաց մայրաքաղաք Տփղիս: Թշնամու դեմ դուրս եկան Վրաց զորքերն արքա ***Գեորգի Լաշայի*** և մահացած եղբոր՝ Զաքարեի փոխարեն նոր ամիրսպասալար նշանակված Հովհաննես Զաքարյանի գլխավորությամբ: Վրացական բանակում դարձյալ զգալի թիվ էին կազմում հայերը: Շուտով Գեորգիի բանակին միացան նաև զուտ հայկական ջոկատներ՝ ***Վահրամ Գագեցու*** առաջնորդությամբ:

Մոնղոլները, դիմելով կեղծ նահանջի, հայ–վրացական ուժերին ծուղակի մեջ գցեցին ***Կուրմանի դաշտում:*** Գեորգի Լաշայի զորքերն անակնկալի եկան և նահանջեցին: Սակայն աջ թևում կռվող Վահրամ Գագեցու զորամասը ոչ միայն խուճապի չմատնվեց, այլև անցավ հակագրոհի: Այդուհանդերձ, ընդհանուր առմամբ մոնղոլները Կոտմանի ճակատամարտում հաղթանակ տարան: Շուտով նրանք ասպատակեցին Զաքարյանների տիրույթները: Այսրկովկասի տարածքը վերածվեց ինչպես մոնղոլների, այնպես էլ այլ նվաճողների ավերիչ արշավանքների թատերաբեմի: Զանազան թշնա-

մինների դեմ մղված պայքարում հատկապես աչքի ընկան Զաքարյաններն ու նրանց ենթակա հայկական իշխանությունները: Նրանք հիմնականում կարողացան պահպանել իրենց ինքնիշխան վիճակը:

1236 թ. տեղի ունեցավ Հայաստանի վրա մոնղոլական մեծաքանակ զորքերի ու քոչվոր ցեղերի ավերիչ մի նոր արշավանք: Օգտվելով Այսրկովկասում քաղաքական մասնատվածությունից՝ մոնղոլները կարողացան մաս–մաս հպատակեցնել երկրամասը: Թշնամուն ուժեղ դիմադրության ցուցաբերեցին Շամքոր քաղաքի, Վահրամյանների Գագ և Տավուշ բերդերի բնակիչները: Մոնղոլների դեմ պայքարն Արցախում գլխավորեց տեղի նշանավոր իշխաններից ***Հասան Ջալալ Դոլան: Խոխանաբերդում (Իշխանաբերդ)*** հայերի կազմակերպած համառ դիմադրությունը ստիպեց քոչվորներին բանակցություններ սկսել: Մոնղոլները հարկադրված համաձայնեցին հայ իշխանի առաջարկի հետ՝ ճանաչել Արցախի հյուսիսային հատվածի՝ Խաչենի ինքնավարությունը: Հայերը պարտավորվում էին հարկեր վճարել և ցուցաբերել ռազմական օգնություն: Հայ–մոնղոլական այդ համաձայնությունը հնարավորություն տվեց երկրա-

Խոխանաբերդ (Իշխանաբերդ)

մասը փրկելու ավերածություններից և ծավալելու լայն շինարարական աշխատանք:

Ձաքարյանների տիրույթները գրավելուց հետո մոնղոլական մի զորաջոկատ շրջապատեց Անին: Անեցիները հրաժարվեցին անձնատուր լինելուց և 12 օր քաջաբար դիմադրեցին: Նրանք նույնիսկ հարձակվեցին ու սպանեցին մոնղոլ բանագնացներին: Կատաղած թշնամին անցավ գրոհի, գրավեց քաղաքը և իրականացրեց բնակչության կոտորած ու գերեվարություն: Ծաղկուն քաղաքը ստացավ ծանր հարված: Մոնղոլները նման դաժանությամբ վարվեցին Արևելյան Հայաստանի մի շարք քաղաքների բնակիչների հետ:

Վեց տարի անց մոնղոլական զորքերն ու նրանց հետևող բազմաքանակ քոչվոր ցեղերն ուղղություն վերցրին դեպի Հայաստանի արևմտյան ու հարավային գավառներ: Երկու ամիս տևեց Կարինի բնակչության պաշտպանությունը: Նվաճողներն, այնուհանդերձ, կարողացան գրավել նաև Երզնկան, Կեսարիան ու այլ քաղաքներ: Երկու տարի անց՝ ***1244 թ.,*** ավարտվեց ամբողջ Հայաստանի գրավումը մոնղոլների կողմից: Երկիրը մտցվեց մոնղոլական ընդարձակ կայսրության կազմի մեջ:

Ինքնավարության վերականգնման համար պայքարի արդյունքները: Նվաճված հողերը մոնղոլները խլում էին տեղական բնակչությունից ու եկեղեցուց և հանձնում արևելքից եկած քոչվորներին: Որպես վաչկատուն անասնապահներ նրանք մեծ հարված հասցրին քաղաքային տնտեսությանը՝ արհեստներին ու առևտրին, բերրի դաշտերն ու բանջարանոցները վերածեցին արոտավայրերի: Քրիստոնյաները ենթարկվեցին ծանր հարկման: Մշտապես շարունակվող պատերազմներին հարկադրաբար մասնակից էին դառնում հայոց և վրաց զինական ջոկատները՝ տալով զգալի կորուստներ:

Հայ իշխանական շրջանները և Վրաց արքունիքը փորձում էին միասնական ճակատ ստեղծել նվաճողների դեմ և պահպանել իրենց ինքնավար կարգավիճակը: Մոնղոլների դեմ բարձրացված

ապստամբություններից ուժեղագույնը տեղի ունեցավ ***1259 թ.:*** Պատճառը հայ–վրացական զինական ուժերը հերթական անգամ իրենց երկրներից դուրս, այս անգամ Եգիպտոս ուղարկելն էր: Մոնղոլական պատժիչ ջոկատներն արյան մեջ ճնշեցին ապստամբությունը: Մահապատժի ենթարկվածների թվում էին Արցախի իշխան Հասան Ջալալը, ամիրսպասալար ***Զաքարե Կրկսերը*** և ուրիշներ:

Այդուհանդերձ, արդեն XIII դ. կեսերից այդ պայքարի առանձին դրվագներ պսակվում էին հաջողությամբ: Մոնղոլներն իրենց բազմաթիվ թշնամիների դեմ պատերազմելիս կարիք ունեին դաշնակիցների: Իկոնիայի սուլթանության դեմ նրանք օգտագործեցին Երզնկայի հայությանը և նպաստեցին Հայաստանի արևմտյան այդ շրջանում հայկական իշխանության ստեղծմանը՝ ***Տեր–Սարգիս եպիսկոպոսի*** գլխավորությամբ: Երկրի հարավում, հատկապես Վանա լճի ավազանում գրված հողերը նրանք հանձնեցին Հովհաննես Զաքարյանի դստերը՝ ***Թամթային:*** ***1266 թ.*** Հայաստանի հյուսիսում՝ Տայքում և Գուգարքում, կազմավորվեց հայ–վրացական ուժեղ մի իշխանություն՝ ***Սամցխե–Զավախք*** անունով, որը գոյատևեց ավելի քան երեք դար: Կիսանկախ հայկական իշխանություններ պահպանվեցին նաև Արցախում, Սյունիքում, Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում:

Հայաստանը XIV դ–ում: Հայկական իշխանական տները: XIV դ. Հայաստանը թևակոխեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններում: Օտար տիրապետությանը գումարվեց 1319 թ. ավերիչ երկրաշարժը. հիմնահատակ ավերվեց ու անմարդաբնակ դարձավ Բագրատունիների երբեմնի փառահեղ մայրաքաղաք Անին:

Մոնղոլական տերության հետագա թուլացումը դարի կեսերին հանգեցրեց նրա կործանմանը: Սակայն արևելքից զանազան ցեղախմբերի ներխուժումները Հայաստան չդադարեցին: Մոնղոլներին փոխարինեցին թուրքմենական ցեղերը: Երկրի համար հատկապես աղետալի հետևանքներ ունե-

ցան Միջին Ասիայից Լենկ Թեմուրի ասպատակությունները: ***1386 թ.*** արշավանքի ժամանակ թեմուրյանները պաշարեցին հինավուրց Վան քաղաքը: Վանեցիները պատսպարվեցին բերդում և համառ դիմադրություն կազմակերպեցին: Ծանր կորուստների գնով քաղաքը գրավելուց հետո դաժան տիրակալը հրամայեց գերի ընկած պաշտպաններին վայր նետել բերդի պարիսպներից: Հայ պատմիչի վկայությամբ պարիսպներից վայր նետվածների թիվն այնքան մեծ էր, որ ներքևում առաջացել էր դիակների հսկայական կույտ, ուստի վերջին ընկածներն այլևս չէին մահանում: Դարավերջին Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքները կրկնվեցին:

Նույնիսկ այսպիսի դժոխային պայմաններում հայ ժողովուրդը պետականության վերականգնման հույսը չէր կորցրել: Նրան թեպետ չէր հաջողվում վերականգնել հայկական թագավորությունը, սակայն կիսանկախ իշխանություններ ստեղծելով՝ կարողանում էր լուծել ազգի գոյատևման խնդիրը: Այսպես՝ XIV դ. Արցախում շարունակում էին իրենց ազդեցությունը պահպանել Հասան–Ջալալյանները, Սյունիքում՝ Օրբելյանները, Սասունում՝ Թոռնիկյանները և այլն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մոնղոլական ցեղերը ե՞րբ միավորվեցին և ո՞ւմ գլխավորությամբ:
2. Ի՞նչ տարածքներ նվաճեցին մոնղոլները:
3. Ե՞րբ մոնղոլները մտան Հայաստան: Ովքե՞ր էին ղեկավարում մոնղոլների դեմ դիմադրությունը:
4. Ինչո՞ւ մոնղոլներին հաջողվեց հպատակեցնել երկրամասը:
5. Ի՞նչ համաձայնության եկան հայերը և մոնղոլները: Ինչո՞ւ հայերը գնացին այդ համաձայնությանը:
6. Ե՞րբ և ո՞ր տարածքների գրավումով ավարտվեց նվաճումը մոնղոլների կողմից:
7. Ներկայացրե՛ք Հայաստանի վիճակը XIV դարում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չինգիզ խան, Գեորգի Լաշա, Կոտմանի դաշտ, Հասան Ջալալ Դոլա, Խոխանաբերդ (Իշխանաբերդ), Սամցիխե–Ջավախք

ԳԼՈՒԽ III

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

§ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Հայերը Կիլիկիայում: Բագրատունյաց թագավորության անկումից հետո առաջացավ հայկական նոր պետականություն՝ Կիլիկիա անունով: Կիլիկիան Փոքր Ասիայի հարավ–արևելքում էր: Հարավից սահմանակից էր Միջերկրական ծովին, հյուսիսում նրա սահմանները հասնում էին մինչև Տավրոսի լեռները:

Կիլիկիայի տարածքը բաժանված էր երեք մասի. հյուսիս–արևելքը կոչվում էր ***Լեռնային Կիլիկիա,*** հարավարևելյան շրջանները հայտնի էին ***Դաշտային Կիլիկիա*** անունով, իսկ արևմտյան մասը՝ ***Քարուտ Կիլիկիա:***

Կիլիկիա. Ջեյհան գետի հովիտը

Վաղ ժամանակներից սկսած՝ հայերը բնակություն են հաստատել Կիլիկիայում, իսկ X դ. արդեն զգալի թիվ էին կազմում:

XI դ. կեսերից հայ բնակչության զանգվածային արտագաղթ է սկսվում՝ կապված թուրք–սելջուկների արշավանքների և Բյուզանդիայի վարած քաղաքականության հետ:

Հայաստանից արտագաղթեց նաև Արծրունիների և Բագրատունիների մի մասը:

Արդեն XI դ. երկրորդ կեսին, Եփրատ գետից արևմուտք ընկած հայաբնակ շրջաններից բացի, հայերը մեծամասնություն էին կազմում նաև Կիլիկիայի, Կապադովկիայի, Ասորիքի և Հյուսիսային Միջագետքի մի շարք գավառներում: Կիլիկիայում ապրում էին նաև հույներ, ասորիներ, արաբներ, հրեաներ:

Հայկական կարճատև իշխանությունները: Կիլիկիայում և հարակից շրջաններում հաստատված հայ իշխանների մի մասը ծառայության էր անցնում Բյուզանդական կայսրությունում: Որոշակի տարածքների կառավարումը հանձնվում էր նրանց: Այդ կերպ

Գագիկ II արքայի կնիքը գահընկեցությունից հետո՝ իբրև բյուզանդական կառավարիչ

Բյուզանդիան աշխատում էր ամրապնդել կայսրության արևելյան սահմանները: Այդ իշխաններից էր ***Ապլղարիպ Արծրունին:*** 1042 թ. նա նշանակվեց Կիլիկիայի կառավարիչ (ստրատեգոս): Նրան էին հանձնվել ***Ադանա, Մսիս, Տարսոն*** քաղաքները և ***Լամբրոն*** ու ***Պապկեռոն*** բերդերը: Հետագայում Ապլղարիպ Արծրունին Լամբրոնը և շրջակա գյուղերը նվիրում է Գանձակից Կիլիկիա տեղափոխված ***Օշին*** իշխանին: Նրանից էլ սերում է ***Հեթումյան*** իշխանական տունը:

Անիի Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II–ը հաստատվել էր Կիլիկիայի ***Պիզու*** քաղաքում:

Կիլիկիայում և սահմանամերձ շրջաններում հաստատված հայ իշխանները, օգտվելով Մանազկերտի ճակատամարտից հետո Բյուզանդիայի թուլացումից, փորձեցին վերականգնել հայոց պետությունը:

Բյուզանդական բանակում ծառայող իշխան ***Փիլարտոս Վարաժնունին*** Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի արևելյան շրջաններում հիմնադրեց ուժեղ և ընդարձակ հայկական իշխանություն (1072–1090 թթ.)՝ Մարաշ կենտրոնով: Փիլարտոսը կարողացավ որոշ ժամանակ կանգնեցնել սելջուկների առաջխաղացումը: Նրա իշխանության անկումից հետո էլ այստեղ շարունակեցին իրենց գոյությունը պահպանել հայկական մի քանի փոքր իշխանություններ:

Հյուսիսային Ասորիքում և Արևելյան Կիլիկիայում ընդարձակ հայկական մեկ այլ իշխանություն հիմնադրեց ***Գող Վասիլը՝ Քեսուն*** կենտրոնով (1082–1117 թթ.):

Հայկական այս իշխանությունները, չնայած կարճատև կյանք ունեցան, սակայն որոշ ժամանակ խոչընդոտեցին սելջուկների ներթափանցումը Կիլիկիա, որը հնարավորություն տվեց Լեռնային Կիլիկիայի հայերին համախմբվելու և ձեռնամուխ լինելու հայկական նոր իշխանության ստեղծմանը:

Ռուբինյան իշխանության առաջացումը: Հայաստանից դուրս ստեղծված հայկական պետական կազմավորումներից ամենակենսունակը եղավ ***Ռուբինյան իշխանությունը:*** *1080 թ.* հայ իշխան ***Ռուբենը*** Լեռնային Կիլիկիայում հիմնադրեց հայկա-

կան նոր իշխանություն, որը նրա անունով կոչվեց ***Ռուբինյան:*** Նա ապստամբություն բարձրացրեց Բյուզանդիայի դեմ և կարճ ժամանակահատվածում բյուզանդացիներից ազատագրեց Լեռնային Կիլիկիայի մի մասը:

Ռուբենին հաջորդեց նրա որդի ***Կոստանդինը*** (1095–1100 թթ.): Այսպես նորաստեղծ հայկական իշխանության շրջանակներում լուծվեց քաղաքական կարևորագույն մի խնդիր՝ գահաժառանգության հարցը: *1098 թ.* Կոստանդինը բյուզանդացիներից խլեց Լեռնային Կիլիկիայի ամենանշանավոր՝ ***Վահկա բերդը*** և դարձրեց իշխանության կենտրոն:

Ռուբինյաններին սպառնացող արտաքին ուժերը: Ռուբինյան իշխանության գոյությանը սպառնում էին ինչպես Բյուզանդիան, այնպես էլ սելջուկները: Կոստանդինը ստիպված էր պայքարել երկու թշնամիների դեմ: Սակայն խաչակրաց առաջին արշավանքը որոշ ժամանակով նրանց ուշադրությունը շեղեց Կիլիկիայից: Դա հնարավորություն տվեց հայերին ամրապնդելու և ընդարձակելու նորաստեղծ իշխանությունը:

Խաչակիրների հետ սկսեցին համագործակցել Կիլիկիայում հաստատված հայ իշխանները: Սակայն խաչակիրների և հայերի փոխհարաբերությունները միշտ չէ, որ բարեկամական էին:

Մանազկերտի ճակատամարտից հետո սելջուկների մի մասը հաստատվեց Փոքր Ասիայում, որտեղ ստեղծեց նոր պետություն՝ Իկոնիայի սուլթանությունը: Սելջուկները և այդ տարածքում հաստատված թուրքմենական տարբեր ցեղեր Կիլիկիայի համար դարձան վտանգավոր հարևաններ:

Դաշտային Կիլիկիան նվաճելուց հետո խաչակիրները շարժվեցին դեպի Ասորիք և Պաղեստին: Այնտեղ նրանք հիմնեցին չորս խաչակրաց պետություններ (կրկնե՛ք համաշխարհային պատմության համապատասխան դասը):

Եթե Իկոնիայի սուլթանության և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները թշնամական էին, ապա խաչակիրների հետ առնչություններն

Փիլարտոս Վարաժնունու կնիքը

Մնավարզա բերդը

ավելի բարդ ու խճճված էին: Առաջին արշավանքի ընթացքում խաչակիրները գրավեցին և կործանեցին հայկական մի շարք իշխանություններ, որից հետո հայ–խաչակրաց ռազմական բախումները կապված էին Դաշտային Կիլիկիայի հետ: Սակայն խաչակրաց պետությունների թուլացմանը զուգահեռ հայ–խաչակրաց հարաբերություններում առավել գերակշռող էին դառնում դաշնակցային փոխհարաբերությունները, քանզի մահմեդական վտանգը հավասարապես սպառնում էր երկու կողմերի գոյությանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Որտե՞ղ էր Կիլիկիան և աշխարհագրական ի՞նչ շրջանների էր բաժանվում:
2. Ո՞ր դարում մեծացավ հայերի հոսքը դեպի Կիլիկիա, ուրիշ ի՞նչ ժողովուրդներ էին ապրում Կիլիկիայում:
3. Ներկայացրե՛ք Կիլիկիայում հայկական պետության ստեղծման նախադրյալները: Ի՞նչն առիթ դարձավ Փիլարտոս Վարաժնունու հայկական իշխանության ստեղծման համար: Ուրիշ ի՞նչ հայկական իշխանություն ստեղծվեց:
4. Հայաստանից դուրս ստեղծված պետական կազմավորումներից ո՞րն էր ամենակենսունակը. ո՞վ և ե՞րբ է այն հիմնադրել: Ինչպիսի՞ հարաբերություններ ձևավորվեցին խաչակիրների հետ:
5. Արտաքին ի՞նչ վտանգներ էին սպառնում Ռուբինյան իշխանությանը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դաշտային, Լեռնային և Քարուր Կիլիկիաներ, Ապլղարիպ Արծրունի, Ադանա, Մսիս, Տարսոն, Լամբրոն, Պապեռոն, Օշին, Պիզու, Փիլարտոս Վարաժնունի, Գող Վասիլ, Ռուբեն իշխան, Ռուբինյան իշխանություն, Վահկա բերդ, հայ–խաչակրաց հարաբերություններ

§ 2. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Պայքար Դաշտային Կիլիկիայի համար: Լեռնային Կիլիկիայում ձևավորված Ռուբինյան պետության հետագա գոյատևման համար կարևոր էր Դաշտային Կիլիկիայի նվաճումը: Անհրաժեշտ էր ձեռք բերել գյուղատնտեսության համար կարևոր կենսական տարածքներ և առևտրական ճանապարհների վրա գտնվող քաղաքներ, ինչպես նաև Միջերկրական ծովի ափերի նավահանգիստները: Հակառակ դեպքում լեռներում ծվարած հայկական փոքրիկ պետությունը չէր կարող երկար գոյություն ունենալ: Այս խնդիրները լուծելու համար Ռուբինյանները պայքարի մեջ մտան Բյուզանդիայի, խաչակիրների և սելջուկների դեմ:

Կոստանդինին հաջորդեց նրա որդի ***Թորոս I-ը*** (1100–1129 թթ.): Նա Կիլիկյան Հայաստանի սահմաններն ընդարձակեց դեպի հարավ, *1104 թ.* գրավեց ***Միս և Անավարզա*** (Անաբարզա, Անարզաբա) քաղաքները՝ վերջինս դարձնելով մայրաքաղաք:

Թորոսի և Գող Վասիլի միացյալ զորքերը ծանր պարտության մատնեցին 1107 թ. Կիլիկիա ներխուժած Իկոնիայի սելջուկներին և դուրս քշեցին երկրից:

Թորոսին հաջորդեց նրա եղբայր ***Լևոն I-ը*** (1129–1137 թթ.): Նա ձեռնամուխ եղավ Դաշտային Կիլիկիայի նվաճմանը: Այստեղ հայերը բախվեցին խաչակիրների և բյուզանդացիների հետ: Խաչակիրներն առաջին արշավանքի ժամանակ Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանները խլել էին սելջուկներից և հաստատվել այնտեղ:

Լևոնը բյուզանդացիներից գրավեց Մսիս, Ադանա և Տարսոն քաղաքները: Երկարատև ու համառ պայքարից հետո Կիլիկյան Հայաստանի սահմանները հարավում հասան մինչև Միջերկրական ծով:

Բյուզանդիան չէր կարող հաշտվել Կիլիկիայի և Ասորիքի կորստի հետ: *1137 թ.* գարնանը բյուզանդական մի մեծ բանակ կայսեր գլխավորությամբ գրավեց Դաշտային Կիլիկիայի մի շարք քաղաքներ: Լևո-

Ռուբեն I-ի դրամներից

Թորոս I-ի դրամներից

Վահկա բերդը

Թորոս II–ի դրամներից

նը հայկական փոքրաթիվ ուժերի հետ ամրացավ Վահկա բերդում, որի պաշտպանությունը տևեց վեց ամիս: Ի վերջո Վահկան ևս հանձնվեց: Լևոնը կնոջ և երկու որդիների՝ Ռուբենի ու Թորոսի հետ շղթայակապ տարվեց Կոստանդնուպոլիս:

Կիլիկիայում ստեղծված հայկական պետությունը մի քանի տարով դադարեց գոյություն ունենալուց:

Ռուբինյան իշխանության վերականգնումն ու ամրապնդումը: Գերված Լևոնը մահացավ բանտում, իսկ Ռուբենին կայսեր հրամանով մահապատժի ենթարկեցին: Թորոսը փախուստի դիմեց, վերադարձավ Կիլիկիա և գլխավորեց հայ ժողովրդի ազատագրական պայքարը: Նրան միացան նաև երկու եղբայրները՝ Մլեհը և Ստեփանեն, ովքեր բյուզանդական արշավանքի ժամանակ Հալեպում էին ու կարողացել էին խույս տալ գերությունից:

Թորոս II–ը (1145–1169 թթ.) իր շուրջը համախմբված հայկական փոքրաթիվ զորախմբով պայքար սկսեց բյուզանդացիների դեմ: Մի քանի տարվա ընթացքում

նա գրավեց Վահկան, Անավարզան, Մսիսը, Տարսոնը: ***1152 թ.*** Կիլիկիա մտավ բյուզանդական մի մեծ բանակ, որին միացան նաև Արևմտյան Կիլիկիայի հայ իշխանների տրամադրած զորքերը և պաշարեցին Մսիս քաղաքը: Մթության քողի տակ Թորոսը հակահարձակման անցավ և ջախջախեց բյուզանդական զորքերը:

Թորոս II–ը նշանակալից գործ կատարեց: Նա վերականգնեց հայկական պետությունը և ստեղծեց 30 հազարանոց բանակ: Նրա օժանդակությամբ **1151 թ.** հայոց կաթողիկոսության մշտական նստավայր դարձավ **Հռոմկլա** բերդաքաղաքը (Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո հայոց կաթողիկոսությունը մշտական նստավայր չուներ):

Մլեհ (1169–1175 թթ.): Թորոս II–ին հաջորդեց եղբայրը՝ Մլեհը: Այդ ժամանակ Դաշտային Կիլիկիայի մի մասը դեռևս Բյուզանդիայի տիրապետության տակ էր: Իսկ արևելյան մի քանի շրջաններ պատկանում էին խաչակիրներին: Երկրի հետագա ամրապնդման համար անհրաժեշտ էր ծովեզրյա բոլոր շրջաններն ազատագրել հույներից և խաչակիրներից: Այդ դժվարին խնդիրն իրագործելու համար Մլեհը դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ: Նա խաչակիրներից հետ վերցրեց Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանները, Բյուզանդիայից ազատագրեց Ադանա, Մսիս, Տարսոն քաղաքները և ծովափնյա շրջանները:

Մլեհը բարեկարգեց **Սիսը և 1173 թ.** դարձրեց երկրի մայրաքաղաք: Նրա վարած քաղաքականությունը և կատարած բարեփոխումները նպաստեցին հայոց պետության ամրապնդմանը և հզորացմանը: Սակայն այդ քաղաքականությունից, հատկապես իսլամական երկրների հետ դաշնակցելու քայլերից դժգոհ բարձրաստիճան հոգևորականները և իշխանները դավադրություն կազմակերպեցին և սպանեցին նրան:

Մլեհին հաջորդեց նրա եղբայր Ստեփանեի որդի **Ռուբեն II–ը** (1175–1187 թթ.): Օգտվելով Բյուզանդիայի

Թումլու բերդը

Ռուբեն II–ի դրամներից

և Իկոնիայի սուլթանության միջև եղած թշնամանքից՝ նա գրավեց նաև Կիլիկիայի արևմտյան շրջանները: Այսպես Կիլիկիայում վերացվեցին բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ր թվականներին է կառավարել Թորոս I–ը: Ի՞նչ քաղաքներ նա գրավեց: Ո՞ւմ հետ համագործակցեց սելջուկների դեմ պայքարում:
2. Ե՞րբ է իշխել Լևոն I–ը: Ներկայացրե՛ք նրա գործունեության կարևոր դրվագները:
3. Ինչո՞ւ և ե՞րբ Հովհաննես Կոմնենոս կայսրը շարժվեց Կիլիկիա: Ներկայացրե՛ք Կիլիկիայում հայկական պետությունը վերականգնելու ընթացքը: Ի՞նչ կարևոր ձեռքբերումներ ունեցավ Կիլիկիան Թորոս II–ի օրոք:
4. Ո՞վ էր Մլեհը: Ինչո՞ւ նա դաշնակցեց Հալեպի ամիրայի հետ: Սիսը ե՞րբ դարձավ հայկական պետության մայրաքաղաք: Գնահատե՛ք Մլեհի գործունեությունը: Ո՞վ հաջորդեց նրան:

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑ

Ինչո՞ւ էր անհրաժեշտ Դաշտային Կիլիկիան Ռուբինյան իշխանությանը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թորոս I, Սիս, Ամանարզա, Լևոն I, Հռոմկլա, Մլեհ, Սիս մայրաքաղաք, Ստեփանի որդի Ռուբեն

§ 3. ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Լևոն II–ի իշխանության շրջանը: XII դ. վերջին Մերձավոր Արևելքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան Կիլիկյան Հայաստանի վրա:

Այդ ժամանակ հզորացել էր Եգիպտոսի սուլթանությունը: Սուլթան **Սալահ ադ Դինը** (1169–1193 թթ.) Եգիպտոսին միացրեց Ասորիքի և Պաղեստինի մի մասը և պայքար սկսեց խաչակիրների դեմ: 1187 թ. նա հետ գրավեց Երուսաղեմը:

Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը նույնպես վերելք էր ապրում: Երկու սուլթանություններն էլ թշնամաբար էին տրամադրված Կիլիկիայի նկատմամբ: Դաշտային Կիլիկիայի հարավարևելյան շրջանների համար լարված էին նաև Անտիոքի իշխանության և Կիլիկիայի փոխհարաբերությունները:

Այսպիսի բարդ իրավիճակում Կիլիկյան Հայաստանում իշխանությունն անցավ Ռուբենի եղբայր ***Լևոն II–ին*** (1187–1219 թթ.): Նրա կառավարման առաջին շրջանում ստեղծված միջազգային իրավիճակը բարենպաստ էր Կիլիկիայի համար: Բյուզանդիան մեկընդմիշտ հրաժարվել էր Կիլիկիայից: Մահմեդական սուլթանությունները պատրաստվում էին դիմագրավելու խաչակրաց երրորդ արշավանքին:

Երուսաղեմը մահմեդականներից կրկին հետ գրավելու համար 1189 թ. սկսվեց խաչակրաց երրորդ արշավանքը: Լևոն II–ը կապեր հաստատեց խաչակիրների առաջնորդներից մեկի՝ Սրբազան հռոմեական կայսրության կայսր ***Ֆրիդրիխ Շիկամորուսի*** հետ: Լևոնը խոստացավ օգնել խաչակիրներին, որի դիմաց կայսրը նրան թագ խոստացավ: Սակայն Ֆրիդրիխ I–ը խեղդվեց Կիլիկիայի գետերից մեկում, և Լևոնի թագադրությունը հետաձգվեց:

Այդ ժամանակ Դաշտային Կիլիկիայի արևելյան շրջանների համար նորից խնդիրներ ծագեցին *Անտիոքի* և Կիլիկիայի միջև: Սահմանային վեճերը լուծելու պատրվակով Անտիոքի իշխանը Լևոնին

Լևոն II–ի իշխանության շրջանի դրամներից

«Լևոն Մեծագործի թագադրությունը». իտալացի նկարիչ Ջուլիանո Զասսո, 1885 թ.

հրավիրեց Անտիոք: Իրականում նրա նպատակը Հայոց իշխանին ձերբակալելն էր: Իմանալով այս մասին՝ Լևոնն ինքը նշանակեց հանդիպման վայրը և ձերբակալեց Անտիոքի իշխանին: **1194 թ.** Սիս քաղաքում Կիլիկիայի և Անտիոքի միջև հաշտության պայմանագիր կնքվեց: Անտիոքի իշխանությունը Կիլիկիային վերադարձրեց նրանից խլված տարածքները, որի դիմաց Լևոնն առանց փրկագնի ազատ արձակեց Անտիոքի իշխանին: Երկու երկրների միջև բարեկամություն հաստատելու համար կողմերը որոշեցին Անտիոքի իշխանի ավագ որդի Ռայմոնդին ամուսնացնել Լևոնի եղբայր Ռուբենի ավագ դստեր՝ Ալիսի հետ: Ծնված արու զավակը պետք է ժառանգեր և՛ Անտիոքը, և՛ Կիլիկիան: Անտիոքի և Կիլիկիայի միավորմամբ Լևոնը փորձում էր ստեղծել հայ–խաչակրաց միացյալ պետություն:

Թագավորության հռչակումը: Եգիպտոսի հզորացումից ու Երուսաղեմի անկումից հետո խաչակիրների վիճակը խիստ ծանրացել էր: Նրանց օգնելու գործում Արևմտյան Եվրոպան հույսեր էր կապում նաև Կիլիկյան Հայաստանի հետ: Հաշվի առնելով այս ամենը՝ Լևոնը շարունակեց քայլերն արքայական թագ ձեռք բերելու ուղղությամբ: Նա բանակցություններ սկսեց Հռոմի պապի և Սրբազան հռոմեական կայս-

ության կայսր ***Հենրիխ VI–ի*** հետ: Այս անգամ դրանք հաջողությամբ պսակվեցին: 1197 թ. Հենրիխ VI–ը թագ ուղարկեց Լևոնին: Նրան թագ էր ուղարկել նաև Բյուզանդիայի կայսրը:

Լևոն II–ը մեծ հանդիսավորությամբ օծվեց ***1198 թ. հունվարի 6–ին՝ Սուրբ Ծննդյան օրը,*** Տարսոն քաղաքի Մայր տաճարում: Նրան թագավոր օծեց հայոց կաթողիկոս ***Գրիգոր Զ–ն*** (1194–1203 թթ.): Լևոն II իշխանը թագադրվելուց հետո սկսեց հիշատակվել որպես *Լևոն I թագավոր:*

Լևոն Մեծագործի քաղաքականությունը: Լևոն I–ի կարևոր ձեռնարկումներից մեկը Լամբրոն անառիկ բերդի գրավումն էր: Նրա նախորդները մի քանի անգամ փորձել էին գրավել այն, սակայն անհաջողության էին մատնվել: ***1202 թ.*** նա Լամբրոնի իշխան Հեթումին հրավիրում է Տարսոն և բանտարկում: Դրանից հետո Լևոնը, առանց կռվի գրավելով բերդը, միացնում է արքունիքին:

Աշխարհագրական դիրքի շնորհիվ Կիլիկիան ցամաքային և ծովային առևտրական ճանապարհների խաչմերուկում էր, ուստի Լևոնը մեծ ուշադրություն էր դարձնում առևտրի զարգացմանը: Վերաշինվեցին ու բարեկարգվեցին *Այաս ու Կոռիկոս* նավահանգիստները: Կառուցվեց ոչ միայն ռազմական, այլև առևտրական նավատորմ:

Հայոց արքան ուշադրություն էր դարձնում նաև մշակույթի զարգացմանը: Թագավորի հրամանով Կիլիկիայում հիմնադրվեցին տարբեր տիպի դպրոցներ, կառուցվեցին վանական համալիրներ և եկեղեցիներ:

Լևոն I–ի կարևոր խնդիրներից մեկը Անտիոքի գահաժառանգության համար մղվող պայքարն էր: Անտիոքի իշխան Ռայմոնդի մահից հետո, ըստ 1194 թ. Սսի պայմանագրի, նրա և Ալիսի որդի Ռուբեն–Ռայմոնդը դարձավ Անտիոքի իշխանության ժառանգորդը: Սակայն վերջինիս դեմ դուրս եկավ նրա հորեղբայր Բոհեմունդը, որը գրավեց Անտիոքը և իր ձեռքը վերցրեց իշխանությունը: Լևոնը որոշեց միջամտել Անտիոքի ժառանգության համար մղվող պայքարին և պաշտպանել իր ազգականի շահերը:

Լևոն Մեծագործի կնիքը՝ Հռոմի Ինոկենտիոս III պապին ուղղված նամակի վրա

Անավարզա բերդը

Կիլիկիայի և Անտիոքի միջև սկսվեց երկարատև պայքար: 1216 թ. Լևոնը գրավեց Անտիոքը և իշխանությունը հանձնեց Ռուբեն–Ռայմոնդին, որին հռչակել էր նաև Կիլիկիայի թագաժառանգ: Շուտով նրա գործունեությունից հիասթափված՝ Լևոնը փոխեց իր որոշումը և Կիլիկիայի թագաժառանգ նշանակեց իր մանկահասակ դուստր Զաբելին ու հրաժարվեց Անտիոքի համար մղվող պայքարից: Հայ–խաչակրաց միացյալ պետություն ստեղծելու Լևոնի ծրագիրը չիրականացավ:

Լևոն Մեծագործը մահացավ 1219 թ.՝ իր հաջորդներին թողնելով հզոր պետություն:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ իրավիճակ էր Կիլիկյան Հայաստանում XII դարի վերջին: Ե՞րբ է կառավարել Լևոն II–ը:
2. Ի՞նչ ընթացք և ավարտ ունեցավ Լևոն II–ի և Անտիոքի իշխանության միջև ծագած սահմանային վեճը:
3. Արքայական թագ ձեռք բերելու ուղղությամբ Լևոն II–ը ի՞նչ քայլեր ձեռնարկեց: Ո՞վ և ե՞րբ թագավոր օծեց Լևոնին: Ո՞րն է թագավորության հռչակման պատմական նշանակությունը:
4. Ներկայացրե՛ք Լևոն I արքայի ներքին և արտաքին քաղաքականությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կիլիկյան Հայաստան, Եգիպտոսի սուլթանություն, Լևոն II (I), հայ–խաչակրաց միացյալ պետություն, Գրիգոր Զ, Ռուբեն–Ռայմոնդ, Զաբել:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ՕՐՈՔ

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ
Կիլիկյան Հայաստանը Լևոն Բ–ի օրոք
Լևոն Բ–ի օրոք Կիլիկյան Հայաստանի ազդ. ոլորտում գտնվող տարածքներ
Այլ պետությունների սահմաններ
Սիս
Այաս
Բորոնկոս
Ակներ
Դրուազարկ
Մայրաքաղաքներ
Այլ քաղաքներ
Բերդեր
Վանքեր
Նավահանգիստներ
Լեռնանցքներ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ԿԻՊՐՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (1192-ԻՑ)
ՀԱԼԵՊԻ ԱՄԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՅՈՒԲՅԱՆՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՄԱՇՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (1188-1268 թթ.)
ՊԻՍԻԴԻԱ
ՊԱՄՖԻԼԻԱ
ԻԿՈՆԻԱ
ՍԱՄՍԱՏԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ՓՈՔՐ ՀԱՅՔ
Դրուազարկ
Սիս
Մամիստան
Կեսարիա
Տարսոն
Ադանա
Մամեստիա (Մսիս)
Դավաշեն
Սարուն
Մարաշ
Գանձակ
Սեբաստիա
Կոնիա
Ակներ
Դրուազարկ
Սիս
Մամիստան
Կեսարիա
Ադանա
Տարսոն

§ 4. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XIII–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Հեթումյան արքայատոհմի հաստատումը: Հայ–մոնղոլական դաշինքը: Լևոն I թագավորը արու զավակ չուներ և 1216 թ. արքունի խորհրդի համաձայնությամբ թագաժառանգի իրավունքները հանձնեց իր մանկահասակ դուստր Զաբելին: Այդ ժամանակ հայոց գահին փորձեց տիրանալ Ռուբեն–Ռայմոնդը, որին Լևոնը զրկել էր գահաժառանգի իրավունքներից: Սակայն Կոստանդին Գունդստաբլը ձերբակալեց նրան, և նա բանտում վախճանվեց:

Հայոց արքունական խորհուրդը որոշեց Զաբելին ամուսնացնել Անտիոքի իշխանի որդու՝ Ֆիլիպի հետ՝ Անտիոքի և Կիլիկիայի միջև շարունակվող թշնամանքին վերջ դնելու նպատակով: Ֆիլիպը Կիլիկիա ժամանեց 1222 թ., ամուսնացավ Զաբելի հետ և հռչակվեց հայոց թագավոր: Գահը նրան հանձնվեց որոշակի պայմաններով: Նա երկիրը պետք է կառավարեր հայկական օրենքներով և հարգեր Հայոց եկեղեցու դավանանքը: Սակայն Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց ծիսակարգը և հովանավորել խաչակիրներին, կողոպտել արքունի գանձերը և ուղարկել Անտիոք: Զայրացած հայ իշխանները նրան ձերբակալեցին: Բանտում նա թունավորվեց և մահացավ:

Գահակալության խնդիրը լուծելու համար հայ ավագանին Տարսոն քաղաքում ժողով հրավիրեց և որոշեց այս անգամ Զաբելին ամուսնացնել Կոստանդին Գունդստաբլի որդի Հեթումի հետ: 1226 թ. Զաբելի և Հեթումի ամուսնությամբ վերջապես լուծվեց գահակալության խնդիրը: Հեթումը հռչակվեց (1226–1270 թթ.), և հիմք դրվեց ***Հեթումյանների արքայատոհմին:***

XIII դ. կեսերին Մերձավոր Արևելքում տեղի ունեցան քաղաքական նոր փոփոխություններ, որոնք կապված էին մոնղոլական արշավանքների և Եգիպտոսում մամլուքների իշխանության հաստատման հետ:

Մոնղոլների ասպատակությունը (մանրանկար)

Մոնղոլական արշավանքները նոր խնդիրներ դրեցին նաև հայկական պետության առջև: 1243 թ. մոնղոլները ծանր պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը և մոտեցան Կիլիկիային: Հայոց արքունիքը որոշեց բանակցություններ սկսել մոնղոլների հետ:

Իր այցը Մոնղոլիա նախապատրաստելու նպատակով Հեթումը եղբորը՝ Սմբատ Գունդստաբլին, ուղարկեց Մոնղոլիա: Մոնղոլները համաձայնեցին պահպանելու Կիլիկյան Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը ու վերադարձնելու մահմեդականներից խլված տարածքները:

Հեթում I–ը 1254 թ. գարնանը մեկնեց Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորում՝ կնքելու հայ–մոնղոլական դաշինքը: Նույն տարվա աշնանը Հեթումը և Մանգու մեծ խանը հաստատեցին հայ–մոնղոլական դաշինքը: Երկու կողմերը պարտավորվում էին միմյանց օգնել պատերազմների ժամանակ: Հայոց եկեղեցիներն ու վանքերն ազատվում էին հարկերից:

Կիլիկյան Հայաստանը մոնղոլների և մամլուքների միջև: 1250 թ. Եգիպտոսում իշխանությունը բռնազավթեցին մամլուքները: Նրանք գնված ստրուկներ էին, որոնք ծառայում էին սուլթանի անձնական կայազորում:

1259 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Ասորիքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը: Սակայն հաջորդ տարի տեղի ունեցած ճակատամարտում մամլուքները ծանր պարտության մատնեցին դաշնակիցներին: Անտիոքի իշխանության վրա մի քանի արշավանք կազմակերպելուց հետո մամլուքները որոշեցին հարձակվել Կիլիկիայի վրա: 1266 թ. նրանք շարժվեցին դեպի Կիլիկիա: Հայ–եգիպտական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1266 թ. ***Մառի*** կոչված վայրում: Փոքրաթիվ հայկական ուժերը քաջաբար դիմադրեցին, բայց անհավասար մարտում պարտություն կրեցին: Ջոհվեց նաև Հեթում I–ի մի

Լևոն Մեծագործի ոսկյա կնիքը

Լևոն Մեծագործի նամակը Հռոմի պապ Ինոկենտիոս III–ին՝ արքայական ոսկյա կնիքով, 1216 թ.

որդին, իսկ մյուսը՝ Լևոնը, գերի ընկավ:

Մառիի ճակատամարտից հետո բարդացավ նաև խաչակիրների վիճակը: 1268 թ. մամլուքները կարողացան գրավել Անտիոք քաղաքը: 1270 թ. գահին անցավ եգիպտական գերությունից ազատված ***Լևոն II–ին*** (1270–1289 թթ.):

Մամլուքների հարձակումները վերսկսվեցին 1275 թ.: Նրանք ներխուժեցին Կիլիկիա, գրավեցին և ավերեցին Մսիս քաղաքը և շրջապատեցին մայրաքաղաք Սիսը: Սակայն չկարողանալով գրավել միջնաբերդը՝ մեծ ավարով և բազմաթիվ գերիներով վերադարձան: ***1285 թ.*** Լևոն II–ը ստիպված էր տասը տարի ժամկետով զինադադար կնքել Եգիպտոսի հետ:

Շուտով մամլուքների արշավանքները վերսկսվեցին: 1292 թ. նրանք պաշարեցին ու գրավեցին հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլա բերդաքաղաքը: Սպանվեցին բազմաթիվ հոգևորականներ, իսկ մյուսները Ստեփանոս Հռոմկլայեցի կաթողիկոսի հետ գերի տարվեցին: ***Հեթում II*** թագավորը (1289–1306 թթ.) հայոց կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Սիս, որտեղ այն մնաց մինչև 1441 թ.:

Ստեղծված ծանր իրավիճակից դուրս գալու համար Կիլիկյան Հայաստանը սկսեց բանակցություններ վարել Բյուզանդիայի, Արևմտյան Եվրոպայի երկրների և պապականության հետ: Օգնության դիմաց հայերը խոստանում էին որոշ զիջումներ կատարել հունական և հռոմեականաթոլիկական եկեղեցիներին: Այս խնդիրը քննարկվեց ***1307 թ.*** Սիս քաղաքում հրավիրված ժողովում: Որոշվեց ընդունել երկաբնակության դավանանքը և Հայոց եկեղեցու ծեսերի մի մասը վերափոխել ու հարմարեցնել հունական ու կաթոլիկ եկեղեցիների դավանանքին: Եկեղեցիների միավորման ճանապարհով հայոց արքունիքն աշխատում էր ստեղծել քրիստոնեական երկրների դաշինք ընդդեմ մահմեդականների: Սակայն Սսի ժողովի որոշումները չիրագործվեցին:

Կիլիկիայում տեղակայված մոնղոլական զորքերի հրամանատարը 1307 թ. հյուրասիրության պատրվակով Անավարզա հրավիրեց Լևոն III–ին,

նախկին թագավոր Հեթում II–ին և 40 հայ իշխանների ու սպանել տվեց նրանց: Հեթում II–ի մյուս եղբայր ***Օշինը*** կարողացավ մոնղոլներին դուրս քշել Կիլիկիայից և երկրի կառավարումը վերցնել իր ձեռքը (1308–1320 թթ.):

Արևմուտքից օգնություն ստանալու ակնկալիքով Օշին թագավորն ու Կոստանդին կաթողիկոսը ***1317 թ. Ադանայում*** նոր ժողով հրավիրեցին, որը վերահաստատեց Սսի ժողովի որոշումները: Այսպես հայ հասարակության մեջ առաջացավ մի խմբավորում, որը փորձում էր Հայոց եկեղեցին միավորել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Այն ստացավ ***ունիթորներ*** (միարարներ) անվանումը: Ունիթորների և հակաունիթորների պայքարը խախտեց Կիլիկիայի հասարակության ներքին միասնությունը և թուլացրեց երկիրը:

Կիլիկյան Հայաստանի թուլացումը և անկումը: Օշին թագավորի մահից հետո գահն անցավ նրա որդուն՝ ***Լևոն IV–ին*** (1320–1342 թթ.): Քանի որ նա անչափահաս էր, երկիրը կառավարում էին խնամակալները:

1322 թ. Կիլիկիա արշավեցին մամլուքները: Նրանց հաջողվեց գրավել Այաս նավահանգիստը և ավերել ցամաքային ու ծովային ամրությունները: Եգիպտոսի հետ հաշտության պայմանագիր կնքվեց 1323 թ.: Կիլիկիան պետք է Եգիպտոսին տարեկան վճարեր 12 մլն արծաթ դիրհեմ՝ Այաս նավահանգստից, ինչպես և օտարերկրացիներին վաճառած աղից ստացված եկամտի կեսը: Եգիպտոսը պարտավորվում էր զորքերը դուրս բերել Կիլիկիայից և վերաշինել ավերված քաղաքները, բացի Այաս նավահանգստի ծովային ամրություններից:

Լևոն IV–ը 1342 թ. հանկարծամահ եղավ: Նա ժառանգներ չուներ, ուստի արքունական խորհուրդը որոշեց գահը հանձնել նրա հորաքրոջ որդուն՝ ***Գվիդոն Լուսինյանին,*** որն այդ ժամանակ Բյուզանդիայում էր: Լուսինյանները ֆրանսիական ծագում ունեին և կառավարում էին Կիպրոսում: Այս ճանապարհով փորձ էր արվում Կիլիկիայի հա-

Լևոն II արքայի, Կեռան թագուհու և նրանց զավակների երկրպագությունը Հիսուս Քրիստոսին (մանրանկար, 1272 թ.)

մար ապահովելու Կիպրոսի և Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունը: Սակայն Գվիդոն Լուսինյանի կառավարումը կարճ տևեց: 1344 թ. նա սպանվեց Ադանա քաղաքում: Արքունի խորհրդի որոշմամբ հայոց գահն անցավ Հեթումյանների ազգակից ***Նղրեցիներին:***

Դաշտային Կիլիկիան նվաճելուց հետո մամլուքները որոշեցին նվաճել նաև Լեռնային Կիլիկիան: Մամլուքների 60–հազարանոց բանակը պաշարեց Սիս մայրաքաղաքը: Հերոսական ջանքերի շնորհիվ հայերը կարողացան անառիկ պահել մայրաքաղաքը:

1373 թ. հայոց գահը կրկին թափուր մնաց: Արքունի խորհուրդը որոշեց այն հանձնել Գվիդոն Լուսինյանի եղբորորդուն՝ ***Լևոն V–ին*** (1373–1375 թթ.): Այդ պահին նա Կիպրոսում էր. մեծ դժվարությամբ հասավ Սիս և օծվեց հայոց թագավոր: Այդ ժամանակ հայկական թագավորությունը, բացի մայրաքաղաքից, ընդգրկում էր Անավարզա քաղաքը և մի քանի բերդեր Լեռնային Կիլիկիայում: Մամլուքները և կարամանները (թուրքմենական ցեղ) կրկին պաշարում են մայրաքաղաքը: Պաշարվածները, դրսից ոչ մի օգնություն չստանալով, հրկիզում են քաղաքը և քաշվում միջնաբերդ: Ռազմամթերքի և սննդամթերքի պակասը ստիպում է ***1375 թ. ապրիլի 16–ին*** հանձնել նաև միջնաբերդը: Գերյալների թվում էին նաև Լևոն Լուսինյանը, նրա ընտանիքը, **Պողոս Սսեցի** կաթողիկոսը: Նրանց հատուկ հսկողությամբ տանում են Կահիրե: Սուլթանը հայոց կաթողիկոսին թույլ է տալիս վերադառնալ Կիլիկիա, իսկ Լևոն V–ին արգելում է հեռանալ Կահիրեից: Հետագայում նա ևս ազատվում է գերությունից և տեղափոխվում Արևմտյան Եվրոպա: Հայոց վերջին թագավորը մահացավ ***1393 թ.*** Փարիզում:

Հայոց պետականության անկումից հետո Կիլիկիայում երկար ժամանակ մեծ թվով հայ իշխանական տներ պահպանում էին իրենց գոյությունը: Սակայն նեղվելով կարամանների և մամլուքների միջև անընդհատ ընթացող պատերազմներից ու ծանր հարկերից՝ Կիլիկիայի հայ բնակչության և իշ-

խանների մի մասը ևս ստիպված հեռացան հայրենիքից՝ հիմնականում հաստատվելով Կիպրոսում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է գահակալել Հեթում I–ը: Ինչպե՞ս Հեթումյաններն ամրապնդեցին թագավորական իշխանությունը Կիլիկիայում:
2. Քաղաքական ի՞նչ փոփոխություններ կատարվեցին Մերձավոր Արևելքում XIII դարի կեսերին: Ե՞րբ և ի՞նչ պայմաններով կնքվեց հայ–մոնղոլական դաշինքը:
3. Ներկայացրե՛ք Կիլիկիայի և մամլուքների միջև 1266 թ. սկսված պատերազմի ընթացքը և հետևանքները: Ի՞նչ հետևանքներ ունեցավ մամլուքների կողմից 1292 թ. Հռոմկլա բերդաքաղաքի գրավումը:
4. Ի՞նչ իրավիճակ էր Կիլիկիայում XIV դարի սկզբին: Ինչո՞ւ առաջացավ ունիթորական (միարարական) խմբավորումը. ի՞նչ հետևանք դա ունեցավ:
5. Ի՞նչ ընթացք և արդյունքներ ունեցավ արտաքին թշնամու դեմ պայքարը XIV դ. առաջին կեսին:
6. Ի՞նչ ճակատագիր ունեցավ Կիլիկիայի վերջին թագավոր Լևոն V–ը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զաբել, Կոստանդին Գունդստաբլ, Հեթում I, Հեթումյան արքայատոհմ, մամլուք, Սմբատ Գունդստաբլ, Կարակորում, Մանգու Մեծ խան, Մառիի ճակատամարտ, Լևոն II, Ստեփանոս Հռոմկլայեցի, Հեթում II, Սսի եկեղեցական ժողով, Օշին, Ադանայի եկեղեցական ժողով, ունիթորներ (միարարներ), Լևոն IV, Գվիդոն Լուսինյան, Նղրեցիներ, Լևոն V, կարամաններ, Պողոս Սսեցի

§ 5. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հողատիրության ձևերը: Գյուղական համայնքը: Կիլիկիայի բարենպաստ բնակլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս զբաղվելու երկրագործությամբ և անասնապահությամբ:

Առաջնակարգ տեղ ունեին հացահատիկային բույսերի մշակումը և այգեգործությունը: Դաշտային Կիլիկիայի որոշ շրջաններում մշակում էին նաև մերձարևադարձային մի քանի բուսատեսակներ:

Անասնապահությունը հատկապես զարգացած էր Լեռնային Կիլիկիայում: Այստեղ պահում էին ձիեր, ջորիներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ և ընտանի թռչուններ: Անասնապահության մեջ առավել զարգացած էր ձիաբուծությունը: Կիլիկիայից արտահանում էին ձիեր, ջորիներ, կաշի, բուրդ:

Կիլիկյան Հայաստանում ձևավորվել էին հողատիրության մի քանի տիպեր՝ արքունական, իշխանական, վանքապատկան, համայնական:

Կիլիկյան Հայաստանում արքունի տիրույթները պատկանում էին թագավորին և արքայական ընտանիքի բոլոր անդամներին:

Կիլիկիայում հաստատված իշխանների մի մասն ուներ որոշակի տարածքներ, որոնց տիրում էին ժառանգաբար՝ մասնավոր սեփականության իրավունքով: Այս տարածքները կոչվում էին ***հայրենիք,*** իսկ սրանց տերերը՝ հայրենատեր–բերդատերեր: Խոշոր հայրենատերերի թիվը Կիլիկիայում XII դ. վերջին հասնում էր 45–ի:

Թագավորը և հայրենատեր–բերդատերերը որոշակի, մասնավորապես զինվորական ծառայության դիմաց առանձին մարդկանց հողեր էին տրամադրում: Այս հողերը փոխանցվում էին ժառանգաբար, բայց ստացողի սեփականությունը չէին, քանի որ պայմանական էին և պայմաններից որևէ մեկի խախտման դեպքում հետ էին վերցվում:

Կիլիկիայում կար շուրջ 150 վանք ու եկեղեցի, որոնք ունեին հսկայական հողատարածքներ:

Կիլիկիայում գոյություն ուներ նաև համայնական հողատիրություն:

Գյուղական համայնքը տնտեսական, հարկային, ռազմական ու թեմական միավոր էր և կարգավորում էր գյուղացու հարաբերությունները պետության, հողատիրոջ և եկեղեցու հետ: Այն կարգավորում էր նաև գյուղի բնակիչների փոխհարաբերությունները:

Գյուղական համայնքը որոշակի ինքնավարությամբ օժտված վարչական միավոր էր: Գյուղական

կյանքի հետ կապված խնդիրները լուծում էր համայնքը՝ հրավիրելով համայնքի անդամների ժողով, որն ընտրում էր նաև գյուղի տանուտեր:

Յուրաքանչյուր համայնք ուներ իր եկեղեցին կամ մատուռը: Գյուղական եկեղեցին զբաղվում էր համայնքի հոգևոր խնդիրներով՝ ծննդյան, հարսանիքի, թաղման և գյուղում կատարվող այլ արարողություններով: Սովորաբար եկեղեցուն կից կար դպրոց, որտեղ գյուղի երեխաները սովորում էին գրել, կարդալ, հաշվել, երգել:

Արհեստները, առևտուրը, քաղաքները: Արհեստագործության զարգացմանը խթանում էին բազմատեսակ հումքի և օգտակար հանածոների առկայությունը և ներքին ու արտաքին առևտուրը:

Կիլիկիան Արևելք–Արևմուտք ցամաքային և ծովային տարանցիկ առևտրական ճանապարհների խաչմերուկում էր: Միջերկրական ծովի նավահանգիստները տարանցիկ առևտրի համար շատ հարմար դիրք ունեին:

Քաղաքների զարգացման համար որոշակի էր նաև խաչակրաց արշավանքների դերը, քանի որ դրանք միջազգային առևտրական հարաբերությունների աշխուժացման խթան հանդիսացան:

Կիլիկյան Հայաստանի քաղաքային կյանքի աշխուժացման և առևտրի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ մոնղոլական կայսրության ստեղծումը, որը ձգվում էր Չինաստանից մինչև Միջերկրական և Սև ծովերը: Մոնղոլական տերության տարածքով անցնող առևտրական ճանապարհների մի մասն ավարտվում էր Կիլիկիայում, որտեղի նավահանգիստներից էլ սկսվում էր ծովային առևտրական ուղին դեպի Եվրոպա:

Կիլիկյան Հայաստանի նշանավոր քաղաքներից էին Սիսը, Տարսոնը, Այասը, Մսիսը, Կոռիկոսը, Ադանան, Անավարզան, որոնք ներառված էին արքունական տիրույթների մեջ և կոչվում էին թագավորական քաղաքներ: Դրանք կառավարում էին թագավորի նշանակած հատուկ պաշտոնյաները՝ կապիտանները:

Կիլիկյան Հայաստանը միջազգային առևտրին մասնակցում էր գյուղատնտեսական և արհեստագործական ապրանքներով: Երկրից արտահանում էին երկաթ, շինափայտ, կաշի, բուրդ, ձիեր, հացահատիկ, աղ: Առևտրի զարգացմանը նպաստում էին հայոց թագավորների կողմից եվրոպացի վաճառականներին տրված առևտրական արտոնությունները: Արտոնություններ էին ստացել ջենովացիները, վենետիկցիները, ապա ֆլորենտացիները:

Քաղաքային բնակչության մի մասը զբաղվում էր արհեստագործությամբ: Քաղաքի սահմաններում միևնույն մասնագիտության արհեստավորները միավորվում էին մեկ համքարության մեջ:

Արքունիքը և բանակը: Պետության կառավարման գլխավոր մարմինն արքունիքն էր: Նրա մեջ մտնում էին արքունի խորհուրդը, բարձրագույն դատական ատյանը և գործակալությունները:

Արքունիքի գլուխ սկզբում կանգնած էր իշխանաց իշխանը, իսկ 1198 թվից՝ Հայոց թագավորը: Նրանք էին պատերազմ հայտարարում, հաշտություն և դաշինք կնքում, քաղաքներ և ամրոցներ հիմնադրում, դրամներ հատում և լուծում գահաժառանգության խնդիրը:

Երկրի կառավարումը թագավորն իրականացնում էր գործակալությունների միջոցով, որոնց թիվը տասից ավելի էր: Գործակալությունների մի մասը նման էր Հայաստանում ստեղծված կենտրոնական կառավարման մարմիններին:

Թագավորության հռչակումից հետո վերականգնվեց նաև ***թագադիր*** գործակալությունը: Հանդիսությունների ժամանակ թագադիր գործակալն էր թագ դնում թագավորի գլխին, կապում արքայական նշանները, հետևում նաև արքունի կարգ ու կանոնի պահպանմանը:

Խնամակալության (պայլության) գործակալությունը գոյություն ուներ դեռևս իշխանության շրջանում: Գործակալը կոչվում էր **պայլ**: Նա թագավորի առաջին խորհրդականն էր, իսկ արքայի բացակայության դեպքում փոխարինում էր նրան, թագավորի անչափահասության դեպքում իրականացնում

էր ոչ միայն նրա, այլև ամբողջ երկրի խնամակալությունը:

Կենտրոնական կառավարման համակարգում մեծ էր արքունի պալատի կառավարչի՝ ***սենեսկալի*** դերը: Նա էր տնօրինում արքունի եկամուտները և ծախսերը:

Գործակալությունների մեջ բավականին ազդեցիկ տեղ էր զբաղեցնում ***արքունի քարտուղարությունը,*** որի գլխավոր պաշտոնյան կոչվում էր ***կանցլեր:*** Նա էր ղեկավարում բանակցություններն օտար երկրների ներկայացուցիչների հետ:

Պետության զինված ուժերը կազմակերպելու և ղեկավարելու համար ստեղծվել էր երեք գործակալություն՝ ***սպարապետություն, սպասալարություն և մարաջախտություն:*** Սպարապետին Կիլիկիայում հաճախ անվանում էին նաև ***գունդապետ:*** Նա բանակի ընդհանուր հրամանատարն էր: Բանակում մեծ էր արքունական հեծելազորի հրամանատարի՝ ***սպասալարի*** դերը: Բանակի սպառազինությամբ և պարենի մատակարարմամբ զբաղվում էր ***մարաջախտությունը,*** որի ղեկավարը կոչվում էր մարաջախտ:

Կիլիկիայի հայկական պետությունն իր գոյատևման ամբողջ ընթացքում միշտ պատերազմների մեջ էր, ուստի անհրաժեշտություն էր կանոնավոր և ուժեղ բանակ ունենալը: Մշտական բանակի կազմակերպումը սկսվեց դեռևս Ռուբինյան առաջին իշխանների օրոք:

Կանոնավոր բանակի հիմնական կորիզը հեծելազորն էր: Կիլիկիայում ևս սահմանվել էր ասպետի (ձիավորի) աստիճանը: Այն ստանալու համար անհրաժեշտ էր քննություն հանձնել ռազմական հմտություններից:

Պատերազմի ժամանակ Կիլիկյան Հայաստանը կարող էր ռազմադաշտ դուրս բերել 80–100 հազար զինվոր: Պատերազմների ժամանակ գյուղացիներից և քաղաքացիներից հավաքագրվում էր նաև աշխարհազոր:

Հայոց բանակում մեծ տեղ ուներ նաև ռազմա-

կան նավատորմը: Այն անհրաժեշտ էր պետության ծովային սահմանները պաշտպանելու, ինչպես նաև ծովային առևտրի անվտանգությունն ապահովելու համար:

Դատական համակարգը: Մինչև հայկական պետության ստեղծումը Կիլիկիան բաղկացած էր առանձին իշխանություններից, ուստի դատական կենտրոնական մարմիններ և համապետական օրենսդրություն չուներ: Յուրաքանչյուր իշխանություն ուներ սեփական դատարանը, որը համարվում էր այդ շրջանի բարձրագույն դատական մարմինը: Բացի իշխանական դատարաններից, տեղական դատական մարմինների դեր էին կատարում նաև եկեղեցական դատարանները, որոնք առաջնորդվում էին կանոնական իրավունքով: Հայկական պետականության ամրապնդմանը զուգահեռ անհրաժեշտ էր ստեղծել միասնական, համապետական օրենսդրություն: Այս խնդիրը լուծեց Հեթում I թագավորի եղբայր ***Սմբատ Սպարապետը:*** Նրա կազմած ***«Դատաստանագիրքը»*** միավորեց հայկական, հունական և խաչակրաց իրավանորմերը և հարմարեցրեց Կիլիկիայում ձևավորված պայմաններին:

Կիլիկյան Հայաստանի դատարաններում օգտագործվում էր նաև Անտիոքի իշխանությունում ստեղծված «Անտիոքի ասիզներ» օրենսգիրքը:

Գոյություն ունեին արքունի, Սսի արքեպիսկոպոսական, ստորին կամ փոքր, եկեղեցական դատարաններ:

Արքունի դատարանը՝ որպես դատական բարձրագույն մարմին, քննում էր պետական նշանակության կարևորագույն գործերը՝ իշխանների միջև ծագած վեճեր, գահաժառանգության, հայրենիքի դավաճանության, թագավորի դեմ կազմակերպված դավադրության և այլն: Արքունի դատարանի նախագահը թագավորն էր, իսկ նրա բացակայության դեպքում՝ իշխանաց իշխանը:

Իր նշանակությամբ կարևոր տեղ էր զբաղեցնում Սսի արքեպիսկոպոսական դատարանը, որտեղ հիմնականում քննում էին բարձրաստիճան

հոգևորականներին վերաբերող գործերը, քրիստոնյաների և այլադավանների միջև առաջացած վեճերի հարցերը: Սսի արքեպիսկոպոսական դատարանը նախագահում էր Սսի արքեպիսկոպոսը:

Ստորին կամ փոքր դատարանները քաղաքներում և գավառներում էին ու քննում էին տեղական նշանակություն ունեցող տարաբնույթ հանցագործություններ և իրավախախտումներ:

Եկեղեցական դատարանները Կիլիկիայում ևս պահպանվեցին: Այնտեղ հիմնականում քննում էին ամուսնական հավատարմության, ամուսնալուծության, կենցաղային իրավախախտումների, եկեղեցական հարկերի մուծման կարգի խախտման և այլ գործեր: Այսպիսով՝ Կիլիկյան Հայաստանում ստեղծվել էր ճյուղավորված և լավ կազմակերպված դատական համակարգ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Տնտեսության ինչ ճյուղեր էին զարգացած Կիլիկիայում: Հողատիրության ինչ տեսակներ էին ձևավորվել: Ո՞րն էր գյուղական բնակչության կազմակերպման հիմնական ձևը:
2. Ինչն էր նպաստում արհեստագործության զարգացմանը: Թվարկե՛ք Կիլիկիայի նշանավոր քաղաքները. ինչո՞ւ էին դրանք կոչվում թագավորական, և ովքե՞ր էին կառավարում:
3. Առևտուրը զարգացնելուն միտված ինչ քայլեր ձեռնարկեցին հայոց թագավորները:
4. Ներկայացրե՛ք գործակալությունները և նրանց գործառույթները:
5. Ո՞վ էր ասպետը (ձիավորը), ինչպե՞ս էին դառնում ասպետ: Ինչ միջոցների հաշվին էր պահվում մշտական բանակը, որքա՞ն էր նրա թիվը պատերազմի ժամանակ:
6. Ներկայացրե՛ք Կիլիկյան Հայոց թագավորության դատական համակարգը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայրենապրեր–բերդապրեր, արքունի խորհուրդ, բարձրագույն դատական ատյան, ինամակալ (պայլ), սենեսկալ, կանցլեր, գունդապրաբլ, սպասալարություն, մարաջախտություն, ասպետ (ձիավոր), «Անտիոքի ասիզներ», արքունի դատարան, Սսի արքեպիսկոպոսական դատարան, ստորին կամ փոքր դատարան, եկեղեցական դատարան

ԳԼՈՒԽ IV

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X–XIV ԴԱՐԵՐՈՒՄ

§ 1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԵԼՔԸ: ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հայ մշակույթի վերելքի պայմանները: Արաբական տիրապետության ժամանակաշրջանում հայկական մշակույթն անկում ապրեց: Իրավիճակը փոխվեց Բագրատունյաց թագավորության հաստատումից հետո:

Հայկական մշակույթի նոր վերելքը կապված էր հայ հասարակության քաղաքական և տնտեսական կյանքում տեղի ունեցող կարևոր տեղաշարժերի հետ: Հիմնականում արհեստագործությամբ և առևտրով զբաղվող քաղաքային բնակչությունը արդեն չէր բավարարվում գոյություն ունեցող կրթական համակարգով, որը հիմնականում տալիս էր աստվածաբանական գիտելիքներ: Քաղաքներում ապրող հարուստ առևտրականները և արհեստավորները սովորաբար իրենց միջոցների մի մասը ծախսում էին եկեղեցիներ, առանձնատներ կառուցելու և իրենց երեխաներին կրթության տալու համար: Նրանցից հետ չէին մնում նաև արքայական և իշխանական տների ներկայացուցիչները:

Նախկինում մշակութային կյանքի հիմնական կենտրոն վանքերի կողքին նման կենտրոններ դարձան նաև քաղաքները՝ Անին, Վանը, Դվինը, Կարսը, Արծնը, Սիսը, Տարսոնը, Աղանան:

Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում հայտնված հայությունն իր գոյատևման խնդիրը հիմնականում լուծում էր հայկական մշակույթի պահպանման և զարգացման միջոցով: Այդ պատճառով գաղթավայրերում ևս առաջանում էին հայկական մշակույթի կենտրոններ:

Հայ մշակութային կյանքի կազմակերպման գործն իր վրա վերցրեց հայոց կաթողիկոսությունը, որը, տեղից տեղ տեղափոխվելով, հաստատվեց Հռոմկլայում, ապա՝ Սսում:

X–XIV դդ. նպաստավոր պայմաններ կային նոր կրթական համակարգի առաջացման և զարգացման համար:

Նախորդ ժամանակաշրջանից հայտնի կրթության կազմակերպման «յոթ ազատ արվեստների» համակարգը նոր զարգացման հասավ: Այն ներառում էր քերականությունը, տրամաբանությունը, ճարտասանությունը, թվաբանությունը, երկրաչափությունը և երաժշտությունը, աստղագիտությունը:

Դպրոցները և համալսարանները: Դպրոցները հիմնականում եկեղեցու տնօրինության տակ էին: Կային ծխական, վանական և տաճարային դպրոցներ: Արդեն IX դ. վանական և տաճարային դպրոցների հիման վրա ձևավորվեցին նոր վարդապետարաններ:

Դպրոցներին կից գոյություն ունեին մատենադարաններ, որտեղ պահվող գրքերը ձեռագիր էին՝ գրված մագաղաթյա թերթերի վրա: Դրանք շատ թանկ արժեին և պահվում էին հատուկ խնամքով:

X–XIV դդ. ուսումնագիտական գործը կազմակերպող նշանավոր գործիչներից էին Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Իմաստասերը, Ներսես Մշեցին, Եսայի Նչեցին, Վահրամ Բաբունին, Գրիգոր Տաթևացին:

X–XIV դդ. կրթական համակարգը հիմնականում բաղկացած էր տարրական և բարձրագույն տիպի դպրոցներից: Բարձրագույն տիպի դպրոցում կամ վարդապետարանում ուսումը տևում էր 7–8 տարի: Դասընթացը հաջողությամբ յուրացրած շրջանավարտը ստանում էր վարդապետական գավազան, որը նրան իրավունք էր տալիս զբաղվելու ուսուցչությամբ, քարոզչությամբ և գիտական գործունեությամբ:

Միջնադարյան Հայաստանի նշանավոր ուսումնագիտական կենտրոններից էին Սանահինի և Հաղպատի վարդապետարանները: Իրենց գիտամանկավարժական գործունեությունն այստեղ են անցկացրել ժամանակի նշանավոր գործիչներ Դա-



Այրիվանքը (Գեղարդավանք)

Գրիգոր Նարեկացի (մանրանկար, 1173 թ.)

վիթ Ալավկաորդին, Վարդան Արևելցին, Հովհաննես Երզնկացին:

Ժամանակի նշանավոր կրթական կենտրոններից էր նաև ***Նարեկի*** վարդապետարանը, որտեղ կրթություն է ստացել աշխարհահռչակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացին:

XII դարից սկսվում է բարձրագույն դպրոցների վերելքի ժամանակաշրջանը: Համահայկական նշանակություն ունեցող բարձրագույն դպրոց էր **Անիի** վարդապետարանը, որի ուսուցչապետը Հովհաննես Իմաստասերն էր:

Հայկական մշակույթի զարգացման գործում նշանակալից դեր խաղաց նաև ***Նոր Գեղիկի*** (Գոշավանք) վարդապետարանը, որն իր ծաղկումն ապրեց ուսուցչապետ Մխիթար Գոշի օրոք: Այստեղ է կրթություն ստացել նշանավոր պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

Հայ մշակույթի զարգացման մեջ շատ կարևոր դեր է խաղացել Գլաձորի համալսարանը: 1280–ական թթ. հիմնադրված դպրոցը Եսայի Նչեցու ռաբունապետության տարիներին հայտնի դարձավ «Գլաձորի համալսարան» անունով: Ուսումնագիտական գործընթացի կազմակերպման տեսակետից այն նման էր միջնադարյան Եվրոպայում գործող համալսարաններին: Համալսարանն ուներ երեք բաժանմունք՝ գրչության արվեստի, հասարակական ու բնական գիտությունների և երաժշտության, որոնք կոչվում էին ուսումնարաններ:

Հայ մշակույթի զարգացման մեջ մեծ դեր է խաղացել նաև Տաթևի համալսարանը: XIV դ. երկրորդ կեսից XV դ. սկիզբը համալսարանի բեղմնավոր գործունեության շրջանն էր, երբ ուսումնագիտական աշխատանքները ղեկավարում էին նշանավոր գիտնականներ Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին:

Կիլիկիայում գործող բարձրագույն դպրոցների շարքում մեծ հռչակ էր վայելում Սսի համալսարանը, որը կրում էր նրա հիմնադրմանն աջակցած նշանավոր մատենագիր Ներսես Լամբրոնացու անունը:

Նրա հիմնադրած դպրոցներից էր Սկևռայի դպրոցը, որը հատկապես մեծ դեր ուներ Կիլիկյան Հայաստանի վանական տիպի դպրոցների շարքում: Այն իր գոյությունը պահպանեց շուրջ 200 տարի: Այնտեղ դասավանդվող առարկաների շարքում առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում մանրանկարչությունը, երաժշտությունը և գրչության արվեստը:

Մանրանկարչության, գրչության արվեստի և երաժշտության զարգացման գործում մեծ դեր խաղաց Հռոմկլայի կաթողիկոսարանին կից դպրոցը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ նախադրյալներ կային հայ մշակույթի զարգացման համար: Ինչ գործառույթ ստանձնեց հայոց կաթողիկոսությունը:
2. Ինչ գործոններ նպաստեցին կրթության բարելավմանն ու զարգացմանը: Ինչ տիպի դպրոցներ էին գործում: X–XIV դդ. կրթական գործի ինչ նշանավոր կազմակերպիչներ գիտեք:
3. Ինչ նշանավոր համալսարաններ կային X–XIV դդ.: Որոնք էին նշանավոր ուսումնագիտական կենտրոնները Կիլիկիայում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծիսական, վանական և տաճարային դպրոցներ, վարդապետարան, Գրիգոր Մագիստրոս (Պահլավունի), Հովհաննես Իմաստասեր, Եսայի Նչեցի, Ներսես Լամբրոնացի, Վահրամ Բաբունի, Գրիգոր Տաթևացի, Գլաձորի համալսարան, Նարեկավանքի վարդապետարան, Անիի վարդապետարան, Նոր Գետիկի (Գոշավանք) վարդապետարան

§ 2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

IX դ. վերջերից սկսած՝ հայ պատմագրությունը վերելք է ապրում: X–XIV դդ. առաջացան հայ պատմագրության նոր ժանրեր՝ տիեզերական (համաշխարհային) պատմությունը և տարեգրությունը: Վերջինիս դեպքում պատմությունը շարադրում էին համառոտ՝ ըստ ժամանակագրական հերթականության:

Հայոց պատմության շարքը շարունակում է նշանավոր հասարակական–քաղաքական գործիչ, կաթողիկոս ***Հովհաննես Դրասխանակերտցին***: Նա իր «Պատմութիւն Հայոց» աշխատության շարադրանքը սկսում է Հայկի ու Բելի ավանդությունից: Սմբատ I–ի և Աշոտ Երկաթի ժամանակաշրջանի պատմությունը նա շարադրում է մանրամասն՝ որպես դեպքերի մեծ մասի ականատես, իսկ որոշ դեպքերում՝ նաև մասնակից:

Հայոց պատմության շարքի հաջորդ պատմագիրը ***Արիստակես Լաստիվերցին է*** (XI դ.), որի «Պատմութիւն» աշխատությունը ներառում է 1000–1071 թթ. ժամանակաշրջանի իրադարձությունները՝ հայ–բյուզանդական հարաբերությունները, սելջուկյան արշավանքները:

XIII դ. պատմագիր է ***Կիրակոս Գանձակեցին:*** Նրա «Հայոց պատմությունն» ընդգրկում է քրիստոնեության ընդունումից մինչև 1265 թ. ընկած ժամանակահատվածը: Հեղինակը մանրամասն ներկայացնում է հայ–վրացական հարաբերությունները, Կիլիկյան Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, հայ–մոնղոլական առնչությունները:

Հայ պատմագրության մեջ համաշխարհային պատմության շարադրանքի ժանրը՝ որպես նոր ուղղություն, հիմնադրել է ***Ստեփանոս Տարոնեցին*** (Ասողիկ) (X դ. երկրորդ կես — XI դ.): Նրա աշխատությունը կոչվում է «Տիեզերական պատմություն»՝ բաղկացած երեք բաժնից:

Համաշխարհային պատմություն շարադրելու երկրորդ փորձը կատարեց XIII դ. նշանավոր մատենագիր ***Վարդան Արևելցին:*** Նրա «Տիեզերա-

կան պատմություն» աշխատությունն ընդգրկում է «անսկիզբ» ժամանակներից մինչև 1267 թ.:

X–XIV դդ. հայ պատմագրության մեջ շարունակվում էր Հայաստանի առանձին տարածաշրջանների պատմության շարադրանքը: Այս ժանրի հիմնադիրը համարվում է ***Մովսես Կաղանկատվացին:***

Այս ժանրով ստեղծագործող հաջորդ պատմիչը ***Թովմա Արծրունին*** էր (IX դ. երկրորդ կես–X դ. սկիզբ): Նրա «Արծրունիների տան պատմություն» աշխատությունը նվիրված է Վասպուրական նահանգի ու Արծրունիների տոհմի պատմությանը:

XIII դ. երկրորդ կեսի նշանավոր եկեղեցական–քաղաքական գործիչ ***Ստեփանոս Օրբելյանի*** «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատությունը նվիրված է Սյունիք նահանգի պատմությանը:

Հայ պատմագրության մեջ ժամանակագրության հիմնադիրը ***Մատթեոս Ուռհայեցին*** է (XI–XII դդ.): Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրությունը» ներառում է Առաջավոր Ասիայի ողջ տարածաշրջանի X–XII դդ. պատմությունը:

XIII դ. նշանավոր ժամանակագիր էր Կիլիկյան Հայաստանի պետական գործիչ, օրենսգիր ***Սմբատ Գունդստաբլը:*** «Տարեգիրք» աշխատությունում նա համառոտ շարադրում է Բագրատունյաց թագավորության շրջանի իրադարձությունները, իսկ առավել մանրամասն՝ Կիլիկյան Հայաստանի պատմության դեպքերը և երևույթները:

X–XIV դդ. հայ պատմիչների և ժամանակագիրների աշխատությունները կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն հայ ժողովրդի, այլև Առաջավոր Ասիայի երկրների պատմության ուսումնասիրության համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ գործոններ նպաստեցին հայ պատմագրության վերելքին: Որո՞նք էին պատմագրության կարևոր խնդիրները:
2. Նշե՛ք հայ պատմագրության հիմնական ուղղությունները և հեղինակներին:

Հովհաննես Դրասխանակերտցի, Արիստակես Լաստիվերցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ), «Տիեզերական պատմություն», Վարդան Արևելցի, Թովմա Արծրունի, «Արծրունիների տան պատմություն», Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Մատթեոս Ուռհայեցի, «Ժամանակագրություն», «Տարեգիրք»

§ 3. ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ



Ներսես Շնորհալի (Վենետիկ, հեճանկար)

Իրավունքը: XII դ. սկսած՝ բուռն վերելք ապրեց նաև իրավագիտությունը: Հայկական առաջին դատաստանագիրքը ստեղծել է Դավիթ Ալավկաորդին մոտ ***1130 թ.:*** Այնտեղ ներառված են ինչպես եկեղեցական կանոններ, այնպես էլ աշխարհիկ օրենքներ: Դատաստանագիրքը կարգավորում էր հասարակական կյանքի տարբեր բնագավառները:

Հայ իրավական մտքի հետագա զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցավ նաև ***Ներսես Շնորհալի*** կաթողիկոսի (XII դար) հեղինակած ***«Թուղթ ընդհանրականը»***: Դրանում արձանագրված են ամուսնաընտանեկան իրավունքի որոշ նորմեր:

Միջնադարի հայ իրավական մտքի գլուխգործոցը ***Մխիթար Գոշի «Դատաստանագիրքն»*** է (1184 թ.):

Մխիթար Գոշից հետո՝ 1265 թ., Կիլիկյան Հայաստանում նոր դատաստանագիրք է կազմում ***Սմբատ Գունդստաբլը:*** Թեպետ այդ դատաստանագրքում տեղ են գտել նաև օտարերկրյա ծագում ունեցող մի շարք իրավական նորմեր, նրա հիմքում դրվել են հիմնականում հայկական սովորութային իրավունքը, «Հայոց կանոնագիրքը» և Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»:

Բնափիլիսոփայությունը: XI–XIV դդ. մետաղագործության զարգացումը պահանջում էր քիչ թե շատ ճշգրիտ տվյալներ մետաղների ֆիզիկական և քիմիական հատկությունների մասին: Մաթեմատիկական ճշգրիտ տվյալներ էին պահանջվում ամրոցաշինության և քաղաքաշինության համար: Բնու-

թյան, շրջակա միջավայրի և մարդու վերաբերյալ գիտելիքները ներառող, սակայն դեռևս լիովին չձևավորված գիտությունները՝ ֆիզիկան, քիմիան, բժշկությունը, շարունակում էին զարգանալ փիլիսոփայության շրջանակներում: Գիտության այս ճյուղը ստացել է *բնափիլիսոփայություն* անվանումը: Բնափիլիսոփաները քննարկում էին նաև աստվածաբանության խնդիրները:

Հայ բնափիլիսոփայության ձևավորման մեջ մեծ դեր ունի միջնադարի նշանավոր գիտնականներից ***Գրիգոր Մագիստրոս Պահլավունին*** (մոտ 990–1058 թթ.): Նա հունարենից թարգմանեց Էվկլիդեսի երկրաչափությունը:

Բնափիլիսոփայության ներկայացուցիչ կարելի է համարել նաև XII դ. նշանավոր բժիշկ ***Մխիթար Հերացուն:*** Նրա «Ջերմանց մխիթարութեան» աշխատության մեջ քննարկված են բժշկությանը վերաբերող տարբեր խնդիրներ: Նրա կարծիքով հիվանդությունները ոչ թե չար ուժերի ներգործության արդյունք են, այլ պայմանավորված են բնական, նյութական պատճառներով:

XIII դ. նշանավոր գիտնական, Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ ***Վահրամ Բաբունին*** թողել է փիլիսոփայությանը վերաբերող մի շարք աշխատություններ: Նրա կարծիքով իրական աշխարհը գոյություն ունի՝ անկախ մարդու գիտակցությունից:

XIV դ. հայ նշանավոր փիլիսոփա ***Հովհան Որոտնեցու*** կարծիքով մարդը չպետք է բավարարվի միայն զգայարանների միջոցով ձեռք բերած գիտելիքներով, այլ պետք է աշխատի դրանք ճշգրտել բանականության և փորձի միջոցով:

Միջնադարի ճանաչված փիլիսոփաներից ***Գրիգոր Տաթևացին*** (1340–1410 թթ.) թողել է գիտական հարուստ ժառանգություն:

X–XIV դդ. հայ բնափիլիսոփայության նվաճումները հիմք հանդիսացան հետագա դարերի գիտական մտքի զարգացման համար:

Գրիգոր Տաթևացի, 1449 թ.

Մխիթար Գոշի արձանը Մատենադարանի դիմաց

Հարցեր և առաջադրանքներ

1. Ներկայացրեք հայ իրավագիտական մտքի զարգացման ընթացքը XI–XIV դարերում: Ի՞նչ նշանավոր գործիչներ և աշխատություններ գիտեք:
2. Բնական ի՞նչ գիտություններ էին շարունակում զարգանալ փիլիսոփայության շրջանակներում: Ներկայացրե՛ք հայ բնափիլիսոփայական ուղղության նշանավոր ներկայացուցիչներին ու նրանց գործունեությունը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դավիթ Ալավկաորդի, «Թուղթ ընդհանրական», Մխիթար Գոշ, Մխիթար Հերացի, Հովհան Որոտնեցի, «Գիրք հարցմանց», Գրիգոր Տաթևացի

§ 4–5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գրականությունը: Մինչև X դարը գեղարվեստական գրականությունը հանդես էր գալիս եկեղեցական ու պատմագիտական գրականության հետ միասնաբար: X դ. գրականությունը դարձավ մշակույթի ինքնուրույն բնագավառ, առաջացան գրականության տարբեր ժանրեր:

X–XIV դդ. զարգանում էր ժողովրդական բանահյուսությունը, գրվում էին առակներ, վիպերգեր:

Հայ առակագրության հիմնադիրը **Մխիթար Գոշն** է: Նա հավաքել և գրի է առել շուրջ 190 առակ: Առակում սովորաբար քննադատվում են հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները՝ անարդարությունը, շահամոլությունը, խարդախությունը, քծնանքը՝ նպատակ ունենալով դրանով դաստիարակելու և լուսավորելու ժողովրդին: Մխիթար Գոշի առակներում տեղ են գտել նաև ազգային ինքնագիտակցության և օտարների դեմ պայքարելու գաղափարներ:

XII–XIII դդ. հայ առակագրության ներկայացուցիչ է ***Վարդան Այգեկցին:*** Նրա առակների հիմնա-

կան թեման հասարակական կյանքն է՝ իր դրական ու բացասական կողմերով:

Պատմությունն ավանդվում էր ոչ միայն պատմիչների աշխատություններով, այլև ժողովրդական բանահյուսության, մասնավորապես նրա մի մասը կազմող հերոսական վիպերգերի օգնությամբ: Միջնադարյան հայ մշակույթի ոչ մի ստեղծագործության մեջ այնքան ցայտուն ու խորիմաստ չի դրսևորվել հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարախոսությունը, որքան ***«Սասնա ծռեր»*** վիպերգում:

Հայ գեղարվեստական գրականության առաջին նշանավոր դեմքը բանաստեղծ ***Գրիգոր Նարեկացին*** է (961–1003 թթ.): Դարաշրջանին հուզող խնդիրները դարձան նրա գլխավոր ստեղծագործության՝ «Մատյան ողբերգության» պոեմի թեման: Բանաստեղծը համոզված էր, որ մարդը պետք է այնքան մաքրվի, որ մերձենա Աստծուն: Ուստի Նարեկացին ստեղծում է Մատյանը (Նարեկ)՝ որպես աղոթագիրք, որով յուրաքանչյուր հավատացյալ պետք է խոսեր Աստծո հետ:

Հայ գրականության հետագա վերելքը կապված է ժամանակի նշանավոր հասարակական–քաղաքական գործիչ, կաթողիկոս ***Ներսես Շնորհալու*** (1100–1173 թթ.) գրական ստեղծագործությունների հետ: Նրա ամենանշանավոր ստեղծագործությունը ***«Ողբ Եդեսիո»*** պոեմն է: Պոեմի ստեղծման համար առիթ դարձավ Եդեսիա քաղաքի գրավումը մուսուլմանների կողմից: Սակայն այնտեղ առաջ են քաշված նաև օտար ափերում սփռված հայությանը հայրենիքում համախմբելու, օտար նվաճողների դեմ պայքարելու գաղափարներ:

Հայ միջնադարյան գրականության մեջ աշխարհիկ թեման առավել մեծ տեղ է զբաղեցնում ***Ֆրիկի*** (XIII–XIV դդ.) ստեղծագործություններում: Միջնադարի ոչ մի բանաստեղծ այդքան խորաթափանց չի նկարագրել մոնղոլ նվաճողների նկատմամբ հայ հասարակության մեջ առաջացած դժգոհությունը, որքան Ֆրիկն իր բանաստեղծությունն-

Սանահին



Նորավանք

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին

րում: Նրա ստեղծագործություններում մեծ տեղ են զբաղեցնում մոնղոլական տիրապետության նկարագրությունը և սոցիալական անարդարության քննադատությունը:

Ճարտարապետություն: X–XIV դդ. մեծ վերելք էր ապրում նաև ճարտարապետությունը: Այս բնագավառում հատկապես զարգանում են քաղաքաշինությունը, ամրոցաշինությունը և եկեղեցաշինությունը:

Սովորաբար քաղաքը բաղկացած էր լինում երեք մասից՝ միջնաբերդ, բուն քաղաք (շահաստան), արվարձան: Անկախ տեղանքից՝ միջնաբերդը և շահաստանը պարսպապատվում էին, իսկ արվարձանը պարսպից դուրս էր կառուցվում և չէր ամրացվում:

Բագրատունյաց Հայաստանում, Զաքարյանների իշխանությունում, Կիլիկյան Հայաստանում մեծ վերելք էր ապրում նաև ամրոցաշինությունը: Կիլիկյան Հայաստանում կար 112 բերդ: Սովորաբար ամրոցը բաժանված էր լինում երկու մասի՝ միջնաբերդի և բուն ամրոցի: Երկուսն էլ ունեին իրենց առանձին պարիսպները: Միջնաբերդում էր իշխանական դղյակը՝ իր օժանդակ կացարաններով, իսկ բուն ամրոցում զինվորների համար նախատեսված շինություններն ու արհեստանոցներն էին:

X–XIV դդ. մեծ վերելք էր ապրում նաև եկեղեցական ճարտարապետությունը: Այս ժամանա-

Անառիկ ծովային ամրոցը

կաշրջանում կառուցում էին ոչ միայն առանձին եկեղեցիներ և վանքեր, այլև վանական համալիրներ: Վանական համալիրներին կից կառուցվում էին ուսումնագիտական կենտրոններ, մատենադարաններ, արհեստանոցներ: Վանական համալիրներից հատկապես նշանավոր էին Տաթևը, Սանահինը, Հաղպատը, Սևանը, Սկևռան, Այրիվանքը (Գեղարդավանք), Գոշավանքը:

Ճարտարապետության զարգացման գործում նշանակալից դեր են խաղացել ***Մանվել և Տրդատ*** ճարտարապետները: Մանվել ճարտարապետը նախագծել և կառուցել է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, իսկ Ոստան քաղաքում՝ Արծրունիների թագավորական պալատը: Բագրատունիների արքունի ճարտարապետ Տրդատը հիմնականում աշխատել և ստեղծագործել է Անի քաղաքում, որտեղ նրա նախագծով կառուցվել են Մայր տաճարը (1001 թ.) և Ս. Գրիգոր Լուսավորիչ զվարթնոցատիպ եկեղեցին:

X–XIV դդ. քանդակագործությունը զարգանում էր ճարտարապետությանը զուգընթաց: Քանդակները դրվում էին եկեղեցիների և շենքերի պատերին: Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու պատերին պատկերված է խաղողի մշակության ամբողջ ընթացքը՝ որթի տնկումից մինչև գինու ստացումը:

IX–X դարերում արվեստի ինքնուրույն ճյուղ դարձավ խաչքարային արվեստը: Այն յուրահատուկ է միայն հայկական մշակույթին: Խաչքարերն ունեցել են տարբեր նշանակություն և կիրառություններ: Ամենից տարածվածը գերեզմանների վրա դրվող մահարձաններն են: XI–XIV դդ. խաչքարեր էին կանգնեցվում նաև որևէ նշանակալից իրադարձության կապակցությամբ: Սովորաբար խաչքարերի վրա թողնվում էին արձանագրություններ, որոնցում նշվում էր խաչքարը ստեղծելու ժամանակը և առիթը, վարպետի և հուշարձանը կանգնեցնելու վերաբերյալ տեղեկություններ: Նշանավոր խաչքարագործ վարպետներից էին ***Պողոսը (Գոշավանք)*** և ***Մոմիկը (Նորավանք):*** Մեզ են հասել X–XIV դդ. տասնյակ հազարավոր խաչքարեր:



Խորան. Սկևռայի Ավետարան, Գրիգոր, 1297

Հովհաննես ավետարանիչ. Զեյթունի Ավետարան, Թորոս Ռոսլին

Նկարչություն: XI–XIV դդ. նաև մանրանկարչության և որմնանկարչության վերելքի ժամանակաշրջանն էր: Մանրանկարչությունը՝ որպես արվեստի ճյուղ, ծառայում էր ձեռագրերի զարդարմանը: Մանրանկարներով զարդարված մեզ հասած առաջին ամբողջական ձեռագիրը վերաբերում է ***851 թ.:*** Մանրանկարչության բուռն վերելքը նպաստեց մի շարք դպրոցների առաջացմանը, որոնք միմյանցից տարբերվում էին ձեռագրի ձևավորման կանոններով և ընտրված թեմաներով: Դրանցից էին Կիլիկիայի, Վասպուրականի և Սյունիքի դպրոցները: Ինչպես քանդակագործները, այնպես էլ մանրանկարիչներն իրենց գործերի համար իբրև նյութ ընտրում էին և՛ աստվածաշնչյան, և՛ աշխարհիկ իրականությունից վերցված կերպարներ: Այդ ժամանակաշրջանի նշանավոր մանրանկարիչներից էին Թորոս Ռոսլինը, Սարգիս Պիծակը, Մոմիկը և ուրիշներ:

Մանրանկարչությանը զուգահեռ X–XIV դդ. Հայաստանում և Կիլիկիայում զարգանում էր որմնանկարչությունը: Բագրատունի, Արծրունի, Սյունի, Հեթումյան թագավորները և Զաքարյանները իրենց կառուցած պալատների, ընդունելության դահլիճների և տաճարների ներսի պատերը զարդարել էին տալիս որմնանկարներով:

Տաճարների ներսի որմնանկարներում, բացի Հին և Նոր Կտակարանների պատկերներից, հանդիպում են նաև պատմական գործիչների դիմանկարներ: Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարներում աստվածաշնչյան թեմաներին զուգահեռ պատկերված է նաև Գագիկ Արծրունին, իսկ Տիգրան Հոնենցի եկեղեցում՝ Տրդատ III–ը և Ս. Գրիգոր Լուսավորիչը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մինչև X դարը ինչպե՞ս էր հանդես գալիս գեղարվեստական գրականությունը: Համառոտ ներկայացրե՛ք գրականության ժանրերը և դրանց նշանավոր ներկայացուցիչներին ու ստեղծագործությունները:

2. Ինչ գործոններ նպաստեցին ճարտարապետության վերելքին:
3. Նկարագրե՛ք միջնադարյան քաղաքը և ամրոցը: Ինչ նշանավոր ճարտարապետներ գիտեք. ինչ են նրանք կառուցել:
4. Ինչ գիտեք խաչքարերի մասին: Թվարկե՛ք խաչքարագործ նշանավոր վարպետների:
5. Ինչ է մանրանկարչությունը: Նշանավոր ինչ մանրանկարիչներ գիտեք: Ինչ է որմնանկարչությունը:
6. Ինչ ձեռքբերումներ ունեցավ հայ երաժշտությունը: Ինչ շարականներ գիտեք, որ ստեղծվել են այս շրջանում:
7. Գնահատե՛ք X–XIV դարերի հայ արվեստի նվաճումները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարդան Այգեկցի, «Սասնա ծռեր», «Մայրյան ողբերգության», «Ողբ Եդեսիո», Ֆրիկ, Սանահին, Հաղպատ, Այրիվանք, Գեղարդավանք, Գոշավանք, Մանվել ճարտարապետ, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի, Տրդատ ճարտարապետ, վարպետ Պողոս, Մոմիկ, մանրանկարչական դպրոցներ, Թորոս Ռոսլին, Սարգիս Պիծակ, որմնանկարչություն

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

IX դարի երկրորդ կեսից Հայաստանում պետական անկախության վերականգնման համար ստեղծվել էին քաղաքական և տնտեսական նպաստավոր պայմաններ: Այդ գործը հաջողությամբ իրականացրեց Աշոտ I Բագրատունին: Բագրատունյաց Հայաստանն ունեցավ տնտեսական և մշակութային մեծ ձեռքբերումներ: Օտար նվաճողների դեմ հայ և վրացի ժողովուրդների համագործակցությունը տվեց ցանկալի արդյունք. Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններն ազատագրվեցին: Բուն երկրում պետության կորստի և քաղաքական անբարենպաստ իրադրության հետևանքով բնակչության հոծ զանգվածներ արտագաղթեցին դեպի հարևան և հեռավոր երկրներ: Կիլիկիայում հաստատված և բնակչության մեջ մեծ թիվ կազմող հայերը XI դ. վերջին այստեղ հիմնադրեցին մի կենսունակ պետական կազմավորում, որը մեկ դար անց հռչակվեց թագավորություն: Հետագայում շարունակվեց Կիլիկիայի տնտեսական և ռազմական հզորացումը:

X–XIV դդ. հայ մշակույթն աննախադեպ վերելք ապրեց: Զարգացան կրթական գործը, պատմագրությունը, իրավագիտությունը, բնագիտությունը, փիլիսոփայությունը, գեղարվեստական գրականությունը, երաժշտությունը, մանրանկարչությունը, որմնանկարչությունը, քանդակագործությունը, խաչքարագործությունը, ճարտարապետությունը:

1. Ներկայացրե՛ք և բնութագրե՛ք հայ Բագրատունի նշանավոր արքաներին: Ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել նրանց օրոք:
2. Ներքին և արտաքին ի՞նչ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել բուն Հայաստանում Բագրատունյաց թագավորության և Կիլիկիայում հայկական պետության ստեղծման համար:
3. Ներկայացրե՛ք X–XIV դդ. հայ մշակույթի ձեռքբերումները և նշանավոր ներկայացուցիչներին:

ԲԱԺԻՆ
III

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ I

ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XVII ԴԱՐԻ ԿԵՍԵՐԸ

§ 1. ՀԱՅԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ

Հայաստանի քաղաքական իրավիճակը XV դարում: 1405 թ. Լենկթեմուրի մահից հետո Հայաստանում նորից գլուխ բարձրացրին ակ–կոյունլու և կարա–կոյունլու թուրքմենական ցեղերը: Իրենց տիրապետությունը Հայաստանում ամրապնդելու համար՝ երկիր մուտք գործած թյուրքական և քրդական ցեղախմբերն անզիջում պայքար էին ծավալել միմյանց դեմ: Ընդհարումների ու արշավանքների ընթացքում մեծապես տուժում էր հայ բնակչությունը, ավերվում ու կողոպտվում էին հայկական բնակավայրերը: Հայկական առանձին իշխանական տների կողմից նրանց դեմ մղած պայքարը համակարգված չէր և ցանկալի արդյունք չէր տալիս: Հենց այդ պայքարի ընթացքում էլ նրանց մի մասը թուլանում էր կամ դադարում գոյություն ունենալուց:

Քոչվոր ցեղերը միաժամանակ ստիպված էին համագործակցել հայ իշխանական տների հետ: Ուստի հաճախ ճանաչում էին նրանց հողային սեփականատիրական իրավունքները: Ցեղապետերը նույնիսկ իրենց հաճախ ներկայացնում էին որպես «Հայաստանի թագավորներ»: Այդպիսի քաղաքականություն վարում էին կարա–կոյունլուների առաջնորդները, մասնավորապես ***Ջհանշահը*** (1437–1467 թթ.): Նա էր, որ նպաստեց հայոց կաթողիկոսական աթոռի վերահաստատմանն Էջմիածնում: Ջհանշահի օրոք Գուգարքի, Գեղամա երկրի, Վայոց ձորի, Սյունիքի, Արցախի հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունները: Նրանք սկսեցին կոչվել ***մելիքներ:***

Ջհանշահի մահից հետո ակ–կոյունլուները կարողանում են պարտության մատնել կարա–կոյունլուներին և զավթել Հայաստանի մեծ մասը: Նրանք շուտով բախվում են հզորացող օսմանյան թուրքե-

րի հետ: Նրանց դեմ համատեղ պայքարելու համար ակ–կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանը նույնիսկ փորձում է ստանալ Եվրոպայի աջակցությունը: Իտալիա ուղարկված պատվիրակությունը, որի կազմում էր նաև հայ վաճառական ***Միրաքը,*** չի կարողանում օսմանցիների դեմ դաշինք կնքել եվրոպական որևէ երկրի հետ:

Պետականության վերականգնման ձգտումը կենդանի էր հայ իշխանական տների շառավիղների մոտ: Պատահական չէ, որ իրենց Արծրունյաց թագավորական տոհմից սերած համարող ***Սեֆեդինյան*** տոհմից Աղթամարի կաթողիկոսներ ***Զաքարիան*** և ***Ստեփանոսը*** հավակնում էին ոչ միայն Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռին, այլև փորձում էին վերականգնել Հայոց թագավորությունը Վասպուրականում: Ունենալով զինական ուժեր՝ նրանց հաջողվում էր պաշտպանել ոչ միայն Աղթամարի կաթողիկոսական աթոռը, այլև Վասպուրականը: Ստեփանոս կաթողիկոսը Ջհանշահի աջակցությամբ **1465 թ.** Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում հանդիսավորությամբ «» է օծում եղբորը՝ Սմբատ Արծրունուն: Վերջինիս իշխանությունը, սակայն, տարածվում էր միայն Աղթամար կղզու և առափնյա մի քանի գյուղերի վրա: Ցավոք, այն գոյատևում է մի քանի տարի: Այդուհանդերձ, նման դեպքերը վկայում են, որ հայ ժողովրդի մեջ վառ էր մնացել պետականության վերականգնման ձգտումը:

Աշխարհավեր ուժերի բախման թատերաբեմի վերածված Հայաստանում անհնար էր Վասպուրականում նորահռչակ թագավորության հետագա ամրապնդումը: Սակայն նրա կարճատև գոյությունն իսկ փաստում էր հայության կենսունակությունն ու կարևոր դերակատարումը հայրենիքում:

Կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում: Հայ իրականության մեջ XV դարում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից էր Ամենայն հայոց կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին: Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո այնտեղ

գտնվող կաթողիկոսական աթոռը մնացել էր անպաշտպան: Անհրաժեշտ էր օտար տիրապետության տակ գտնվող մայր հայրենիքում ստեղծել պետականությանը փոխարինող մի հաստատություն, որպիսին կարող էր լինել Հայ առաքելական եկեղեցու հոգևոր կենտրոնը:

Հայ հոգևորականության ներկայացուցիչները մի քանի անգամ դիմում են Գրիգոր կաթողիկոսին՝ առաջարկելով Սսից տեղափոխվել Էջմիածին, սակայն մերժում են ստանում: Կաթողիկոսական աթոռի փոխադրման կողմնակիցներ ***Թովմա Մեծոփեցու*** և ***Հովհաննես Հերմոնացու*** նախաձեռնությամբ **1441 թ.** Էջմիածնում գումարված բազմամարդ ժողովը հարցին դրական լուծում է տալիս: Այրարատյան նահանգի կառավարիչ Յաղուբ բեկը, որը կատարում էր Ջհանշահի կարգադրությունը, նպաստավոր պայմաններ է ստեղծում ժողովականների համար: Ժողովը կաթողիկոս է ընտրում Կիրակոս Ա Վիրապեցուն: Իսկ 1446 թ. Սսում հիմնվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը:

Այս իրադարձությունը հայ բնակչությանը մեծ հուսադրություն, ոգևորություն և ցնծություն է պատճառում: Վաղուց ի վեր համազգային նման միջոցառման կարոտ ժողովուրդն այդ փաստն ընկալում է որպես թագավորության վերականգնմանը հավասարազոր իրադարձություն:

Էջմիածնում հայոց կաթողիկոսության վերահաստատումն ավելի է բարձրացնում Այրարատյան աշխարհի ազգային–քաղաքական դերը՝ մեծապես նպաստելով բուն հայրենիքում հայ ժողովրդի հետագա համախմբմանը:

Կ.Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծումը: Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսարանն իր գործունեությունն իրականացնում էր եկեղեցու նվիրապետական կառույցների միջոցով: Դրանցից հատկապես ազդեցիկ էին Աղթամարի, Աղվանից (Գանձասարի) և Կիլիկիայի կաթողիկոսություններն ու Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքությունները:

Օսմանյան թուրքերի կողմից 1453 թ. Կ. Պոլսի գրավումից հետո բազմահազար հայեր գավառներից բռնի տեղափոխվեցին այնտեղ: Օսմանյան պետության մեջ սկսեց ձևավորվել կրոնադավանաբանական տարբեր հանրությունների **(միլեթներ)** համակարգը: Ոչ մահմեդականներն առանձնացվեցին իրենց կրոնական ազգային համայնքներով՝ խմբվելով իրենց եկեղեցիների և հոգևոր առաջնորդների շուրջ: Սկզբնապես հիմնվեց հունական, 1461 թ.՝ հայոց, այնուհետև հրեական պատրիարքությունները: Հայոց պատրիարքության աթոռանիստը դարձավ Գում Գափու թաղամասի Ս. Աստվածածին Մայր եկեղեցին: Կ. Պոլսի Հայոց պատրիարքությունն սկսեց տնօրինել Օսմանյան պետության հայ համայնքի հոգևոր կյանքը: Կ. Պոլսի հայոց պատրիարքներն օժտված էին ընդարձակ կրոնական և մասամբ՝ աշխարհիկ իրավունքներով: Պատրիարքարանի իրավասության ներքո էին հայության կրթական ու լուսավորական, տպագրական գործը, բարեգործական և մշակութային հաստատությունները: Կ. Պոլսի հայոց պատրիարքը ճանաչվեց պետության տարածքում բնակվող հայության պաշտոնական ներկայացուցիչ: Օսմանյան կայսրության սահմանների ընդարձակմանն ու զորացմանը զուգահեռ ընդարձակվել են նաև պատրիարքության իրավասության աշխարհագրական սահմանները, բարձրացել նրա դերն ու հեղինակությունը: XVII դ. սկզբին պատրիարքության իշխանությունը տարածվել է օսմանյան տիրակալության հայկական ու հայաբնակ բոլոր շրջանների վրա: Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները, Երուսաղեմի հայոց պատրիարքությունն իրենց առաջնորդական իրավունքը զիջել են Կ. Պոլսի պատրիարքին, որն էլ ընդունում էր Ամենայն հայոց կաթողիկոսության գերագահությունը:

Մեծ եղեռնից հետո պատրիարքությունը կորցրել է իր նախկին իրավունքներն ու դերը: Այժմ այն Թուրքիայի հայկական համայնքների հոգևոր ներկայացուցչություն է:



Երուսաղեմի
Հայոց պատրիարքարան

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն էր վիճակը Հայաստանում XV դարի առաջին կեսին: Ներկայացրե՛ք անկախ պետականության կորստի բացասական հետևանքները:
2. Ինչո՞ւ էին հայ գործիչները փորձում համագործակցել այլ պետություններ-ի հետ Հայաստանը նվաճած բռնակալների դեմ պայքարում: Որտե՞ղ և ի՞նչ քայլեր արվեցին Հայոց թագավորությունը վերականգնելու համար:
3. Ինչո՞ւ Կիլիկիայի կաթողիկոսությունն այլևս ի վիճակի չէր իրականացնելու իր համահայկական դերակատարումը: Ե՞րբ և ո՞ր ժողովում որոշվեց կաթողիկոսական աթոռը Սսից Հայաստան տեղափոխել: Ի՞նչ նշանակություն ուներ հայ ժողովրդի համար կաթողիկոսության փոխադրումը Էջմիածին:
4. Ի՞նչ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ 1441 թ.: Ո՞վ ընտրվեց Ամենայն հայոց կաթողիկոս:
5. Ե՞րբ է հիմնվել Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը: Ի՞նչ դերակատարություն ուներ այն Օսմանյան կայսրությունում ապրող հայերի համար:

Ակ–կոյունլու և կարա–կոյունլու ցեղեր, Ջհանշահ, Զաքարիա և Ստեփանոս Աղթամարցի, Սմբատ Արծրունի, Թովմա Մեծոփեցի, Հովհաննես Հերմոնացի, Գրիգոր կաթողիկոս, Կիրակոս Ա Վիրապեցի, Կ. Պոլսի պատրիարքություն

§ 2. ՀԱՅԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ ԵՎ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Թուրք–պարսկական պատերազմները և Հայաստանը: Հայաստանում XVI դարի սկզբին թուրքմենական ցեղախմբերի իշխանությունը տապալվեց: Սկսվեց սեֆյան և օսմանյան պետությունների ծանր և ավերիչ հակամարտության ժամանակաշրջանը:

Ակ–կոյունլուներին պարտության մատնելուց և նրանց մայրաքաղաք Թավրիզը գրավելուց հետո շեյխ Սեֆին 1502 թ. Իրանում հիմնադրում է Սեֆյանների պետությունը:

Փոքր Ասիայում 1299 թ. հիմնադրված Օսմանյան պետությունն էլ իր հերթին, օգտվելով Բյուզանդիայի թուլացումից, 1453 թ. գրավում է Կ.Պոլիսը և կործանում կայսրությունը: Օսմանցիները, տեր դառնալով շրջակա այլ երկների ևս, ստեղծում են ընդարձակ կայսրություն: Մերձավոր Արևելքում ու Հայաստանում գերիշխանություն հաստատելու նպատակով էլ սեֆյան և օսմանյան պետությունների միջև 1512 թ. սկսվում են երկարամյա և արյունալի պատերազմներ: Այդ պատերազմները գլխավոր պատճառներն էին Հայկական լեռնաշխարհին ու առևտրական ուղիներին տիրելը, երկրամասում քաղաքական իշխանության հաստատումը:

1512 թ. ռազմական գործողություններն աստիճանաբար սկսեցին ընթանալ հիմնականում Հա-

յաստանի տարածքում: Հայկական քաղաքներն ու գյուղերն ավերվում էին, բնակչությունը կոտորվում, գերեվարվում ու գաղթում: Դրան հակառակ ավելի մեծ թվով թուրքական ու քրդական ցեղախմբեր էին ներթափանցում Հայաստան: Արևմտյան Հայաստանում զորեղացավ քրդական տարրը, և հայ ժողովուրդն ընկավ կրկնակի՝ թուրք ու քուրդ ավատատերերի իշխանության տակ: Քրդերի զինական ուժը օգտագործելու նպատակով օսմանյան սուլթաններն ամեն կերպ նպաստեցին նրանց դիրքերի ամրապնդմանը:

Ի պատասխան Արևմտյան Հայաստանում իրանական բանակի ավերիչ ասպատակության՝ թուրքերը 1554 թ. ավերակների կույտի վերածեցին Արևելյան Հայաստանը: Նույնիսկ թուրք պատմիչն է վկայում՝ «…ջրի փոխարեն արյուն խմեցին»:

1555 թ. Ամասիայում օսմանյան և սեֆյան պետությունների միջև հաշտության պայմանագիր է կնքվում, համաձայն որի՝ թուրք–պարսկական սահմանագիծն անցնում էր Հայաստանի տարածքով: Հայաստանի արևմտյան մասն անցնում էր Օսմանյան կայսրությանը, իսկ արևելյանը՝ Իրանին: Հաշտությունը, սակայն, կարճատև էր: Շուտով օսմանյան բանակները կրկին արշավում են սեֆյանների տիրապետության տակ գտնվող այսրկովկասյան տարածաշրջան և գրավում հսկայական տարածքներ: Պարսկաստանը չի կարողանում լուրջ դիմադրություն ցույց տալ: Գահ բարձրացած շահ Աբաս Ի–ը (1587–1639 թթ.) շտապում է հաշտություն կնքել օսմանցիների հետ: 1590 թ. Կ. Պոլսի պայմանագրով նա թուրքերին զիջեց Արևելյան Հայաստանը, Ատրպատականը և հարակից այլ շրջաններ: Շահ Աբասը, սակայն, մտադիր չէր հաշտվելու կորուստների հետ: Նա խաղաղության ժամանակահատվածն օգտագործեց երկրի տնտեսությունը վերականգնելու, բանակը նորովի վերակազմավորելու և դաշնակիցներ ձեռք բերելու նպատակով: Շահն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Ռուսաստանի և արևմտաեվրոպական երկրնե-

Շահ Աբաս

րի հետ: Վերջիններս և՛ օգնում, և՛ հրահրում էին շահ Աբասին Օսմանյան պետության դեմ պատերազմի: Իսկ Օսմանյան կայսրությունում տիրում էր խռովահույզ իրավիճակ:

Օգտվելով իր համար ստեղծված բարենպաստ վիճակից՝ 1603 թ. շահ Աբասը ձեռնամուխ եղավ զիջած տարածքների վերանվաճմանը: Նա, վերագրավելով Թավրիզը, անցավ Արաքսը և մտավ Ջուղա ու շարժվեց դեպի Երևան: Հակառակորդի գլխավոր ուժերը փակվեցին Երևանի բերդում: Շահը հարձակումների ժամանակ առաջին շարքերում կանգնեցնում էր հայ բնակչությանը: Ինն ամիս դիմադրելուց հետո բերդը հանձնվում է պարսիկներին: Պարսիկներն ավերում են ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր:

Շահ Աբասը և հայերի բռնագաղթը: 1604 թ. թուրքական սուլթանը նոր բանակ ուղարկեց պարսիկների դեմ: Շահ Աբասը, խուսափելով ընդհարումից, վճռեց ամայացնել օսմանյան բանակի ճանապարհին ընկած բնակավայրերը, իսկ բնակչությանը տեղահանել Իրանի խորքերը: Դրանով օսմանյան զորքը կզրկվեր պարենից, օթևանի հնարավորությունից և այլևս չէր կարողանա շարունակել արշավանքը: Իսկ բնակչությանը գաղթեցնելով Իրանի ներքին գավառներ՝ շահը հույս ուներ զարկ տալու իր երկրի տնտեսության զարգացմանը: Միաժամանակ հայ վաճառականությանը փոխադրելով հարավային նահանգներ՝ նա որոշել էր երկրի հյուսիսային տարածքներում զարգացած մետաքսի առևտուրը փոխադրել Պարսից ծոցի շրջան, ինչը մեծապես կհարվածեր Օսմանյան պետությանը: Պատահական չէ, որ Արաքսի ափին ընկած Ջուղա վաճառաշահ քաղաքը հիմնովին բռնագաղթեցվեց:

Հայ բնակչության տեղահանությունը սկսվեց ***1604 թ. օգոստոսին:*** Բռնագաղթի ենթարկված հայ բնակչության շարասյունը, Առաքել Դավրիժեցու վկայությամբ, կազմում էր շուրջ 30–40 կիլոմետր ճանապարհ: Հրամայված էր հրդեհել բոլոր գյուղերը, շենները, խոտի և

Անդրադառնալով հայ ժողովրդի համար թուրք–պարսկական պատերազմների աղետալի հետևանքներին՝ XVII դարի եվրոպացի հեղինակ Ժան Շարդենն արձանագրում է, որ «Աշխարհում չկա մի այլ երկիր, ուր տեղի ունեցած լինեին այդքան շատ արյունահեղ ընդհարումներ… նա (Հայաստանը) հանդիսացավ ռազմական գործողությունների թատերաբեմ թուրքերի և պարսիկների մղած վերջին պատերազմներում: Թուրքերը կռվում էին ամբողջ Հայաստանը նվաճելու համար, սակայն բավարարվեցին այն պարսիկների հետ բաժանելով, այդուհանդերձ, նրանք տիրեցին նրա մեծագույն մասին»:

հացաբույսերի դեզերը: Գաղթեցվեց մոտ 300 հազար մարդ: Տեղահանությունից զերծ մնաց Հայաստանի՝ օսմանյան բանակի երթուղուց հեռու ընկած նահանգների բնակչությունը: Հայ բնակչությունը բազմիցս փորձեց չենթարկվել բռնագաղթի հրամանին կամ խույս տալ գաղթից: Պարսկական զորքը հաշվեհարդար տեսավ Գառնի գյուղի նկատմամբ, որի բնակիչները փորձել էին ընդդիմանալ գաղթի հրամանին:

Լուր ստանալով, որ օսմանյան բանակն արդեն մտել է Արարատյան դաշտ՝ շահ Աբասը հրամայում է գաղթեցվող բնակչությանն արագորեն փոխադրել Արաքսի աջ ափը: Գետանցման ժամանակ մեծ թվով մարդիկ խեղդվում են: Կենդանի մնացած հայերը բնակեցվում են Իրանի տարբեր նահանգներում: Սպահանի մոտ Ջուղայի բնակիչները շուտով հիմնում են Նոր Ջուղա բնակավայրը:

Իրենց դաժանությամբ պարսիկներին չզիջեցին թուրքերը: Նրանք էլ շուրջ 100 հազար հայերի գերեվարեցին և վաճառեցին ստրկության: Այս բռնագաղթերի արդյունքում Հայաստանի տասնակ գավառներ կորցրին իրենց բնիկ ազգաբնակչության զգալի մասը:

Կասրե–Շիրինի հաշտության պայմանագիրը: Թուրք–պարսկական պատերազմները կարճատև ընդհատումներով շարունակվեցին մինչև 1638 թ., երբ օսմանյան բանակը, գրավելով Բաղդադը, ստիպեց պարսիկներին հաշտություն կնքել: **Կասրե–Շիրինում** 1639 թ. Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև կնքված հաշտության պայմանագրով Հայաստանը կրկին վերաբաժանվում է: Թուրք–պարսկական սահմանագիծն անցնում էր Ախուրյան գետով, ապա՝ Արաքսով մինչև Հայկական Պար, Փոքր Մասիսից թեքվում հարավ և Վասպուրականի արևելակողմյան լեռներով ձգվում մինչև Միջագետք:

Հայաստանում ևս օտար տիրապետողները հաստատեցին իրենց վարչական կարգերը: Արևմտյան Հայաստանում կազմավորվեցին Էրզրումի, Վանի, Կարսի, Ախալցխայի, Սեբաստիայի, Դիարբեքիրի,

ավելի ուշ՝ Խարբերդի, Բիթլիսի, Տրապիզոնի էյալեթները (վիլայեթներ): Էյալեթների կառավարիչները՝ փաշաները, նշանակվում էին սուլթանի կողմից:

Արևելյան Հայաստանում պարսիկները կազմավորեցին Երևանի, Նախիջևանի, Մակուի, ավելի ուշ՝ Գանձակի և Ղարաբաղի խանությունները կամ բեկլարբեկությունները: Խանությունների կառավարիչները՝ խաները, նշանակվում էին շահի կողմից:

Հայ բնակչությունն ապրում էր ազգային ու կրոնական ծանր պայմաններում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Երբ են ստեղծվել Օսմանյան պետությունը և Սեֆյան Իրանը: Ինչո՞ւ էին նրանք ձգտում տիրելու Հայաստանին:
2. Որտե՞ղ տեղի ունեցավ Սելիմ Ահեղի և շահ Իսմայիլի զորքերի բախումը և ե՞րբ: Ինչո՞վ ավարտվեց այն: Երբ է կնքվել Ամասիայի պայմանագիրը երկու պետությունների միջև: Ի՞նչ էր նախատեսում այն:
3. Ինչո՞ւ 1590 թ. պայմանագրով շահ Աբաս I–ը օսմանցիներին զիջեց զգալի տարածքներ: Երբ շահ Աբասը սկսեց զիջած տարածքների վերագրավումը:
4. Ինչո՞ւ շահ Աբասը կազմակերպեց հայ ժողովրդի բռնագաղթը: Որքա՞ն բնակչություն տեղահանվեց: Իրանի ո՞ր մասերում բնակեցվեց Հայաստանից տեղահանված բնակչությունը: Երբ ավարտվեցին թուրք–պարսկական պատերազմները:
5. Վարչական ի՞նչ բաժանումների ենթարկվեցին Արևմտյան և Արևելյան Հայաստանները:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեֆյան Իրան, Օսմանյան պետություն, Ամասիայի հաշտության պայմանագիր, շահ Աբաս I, Ջուղա, Նոր Ջուղա, Կասրե–Շիրինի հաշտության պայմանագիր, էյալեթ (վիլայեթ), փաշա, խանություն (բեկլարբեկություն)

1665 թ. Հայաստան այցելած ֆրանսիական կառավարության ներկայացուցիչների նամակից՝ ուղղված ֆրանսիական թագավորին. «Հասան–Կալայից (Վերին Բասեն) … այն կողմ՝ մինչև պարսկական հողերը, կարելի է հանդիպել միմիայն անապատների…: Այս երկիրն ամբողջովին ավերված է շահ Աբասի կողմից, որն այրել ու անմարդաբնակ է դարձրել բոլոր գյուղերը՝ բնակիչներին իր երկիրը տեղափոխելու նպատակով, իսկ մնացած սակավաթիվ մարդիկ, ինչպես նաև բոլոր գաղթեցվածները, քրիստոնյաներ են»:

§ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՅՔԱՐԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ

Հայկական իշխանությունները ուշ միջնադարում: Հայոց պետականության անկումից հետո հայ իշխանական տները շարունակում էին գործել: Օտար նվաճողները վարում էին նրանց վերացնելու հետևողական քաղաքականություն: Հայ իշխանական տների առանձին ներկայացուցիչներ, չդիմանալով ճնշումներին, արտագաղթում էին: Շատերն էլ սեփական կալվածքներն ու տիրույթների մնացորդները փրկելու նպատակով կամովին նվիրում էին եկեղեցուն և, ընդունելով հոգևոր կոչումներ, շարունակում էին տիրել իրենց կալվածքներին: Այդպիսիներին անվանել են ***պարոնտեր*** (այսինքն՝ պարոն աշխարհիկ, տեր՝ հոգևոր իշխան):

Հայկական իշխանությունների մի մասը, հատկապես լեռնային երկրամասերում, կարողացել է բավական երկար գոյատևել: Արևելյան Հայաստանում նման իշխանություններ կային Արցախում, Սյունիքում և Գեղամա երկրում: Նրանց անվանում էին մելիքություններ, իսկ տիրակալներին՝ մելիքներ: Մելիքների իշխանությունը ժառանգական էր:

Արևմտյան Հայաստանում հայ ավատատերերի իշխանությունները պահպանվել էին գլխավորապես Շատախում, Մոկսում և Սասունում:

Այս առումով առանձնահատուկ տեղ ունի Կիլիկիայի հյուսիս–արևելքում ընկած ***Զեյթունը,*** որի հայությունը չենթարկվեց Օսմանյան տերությանը: Միայն XVII դ. առաջին կեսին զեյթունցիները պարտավորվեցին տարեկան որոշակի հարկ վճարել, սակայն պահպանեցին ներքին ինքնուրույնությունը:

Հայկական այս իշխանությունները պետականության բեկորներ էին և խոշոր դեր են խաղացել թուրքական և պարսկական տիրապետության դեմ մղած ազատագրական պայքարում:

Հայաստանի ազատագրության համար պայքարը: Ազատության հասնելու և ազգային պետականությունը վերականգնելու ձգտումը հայ ժողովրդի մեջ չէր մարել: Ժամանակի հայ գործիչները չէին դադարում ելք որոնելուց, ուստի միջազգային իրադրության յուրաքանչյուր պատեհ առիթ նրանց մղում էր ազատագրական քայլերի: Սակայն սեփական ուժերն անբավարար էին, իսկ տիրապետողները՝ հզոր: Այդ ամենը մղում էր դաշնակիցների որոնմանը: Հայ գործիչներին հույս էր ներշնչում օսմանցիների դեմ Բալկաններում և եվրոպական այլ երկրամասերում քրիստոնյա ժողովուրդների պայքարը:

Կոստանդնուպոլսի գրավումից հետո թուրքերի դեմ ընդհանուր ճակատ կազմելու գործին անմասն չեն մնացել նաև հայերը: Հայ գործիչները դեռևս XV դարի կեսերից սկսել էին բանակցել եվրոպական երկրների հետ Կոստանդնուպոլիսը թուրքերից հետ գրավելու նպատակով միասնական ճակատ ստեղծելու շուրջ:

1547 թ. Էջմիածնում Ստեփանոս Ե Սալմաստեցի կաթողիկոսը հրավիրում է գաղտնի խորհրդակցություն՝ մելիքների և բարձրաստիճան հոգևորականության մասնակցությամբ: Որոշվում է կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ օսմանցիների դեմ համատեղ պայքար կազմակերպելու նպատակով: Պատվիրակությունը մեկնում է Եվրոպա: Կաթողիկոսը

Աբգար դպիր Եվդոկացի (Թոխաթեցի)

Նոր Ջուղայի
Ս. Ամենափրկիչ վանքը

Վենետիկի հանրապետության ղեկավարությանը ներկայացնում է խնդրագիրը: Սակայն պատվիրակությունը 1551 թ. վերադառնում է հայրենիք առանց արդյունքի հասնելու:

Հաջորդ կաթողիկոս ***Միքայել Ա Սեբաստացին*** ևս ակտիվ գործունեություն է ծավալում: Նրա նախաձեռնությամբ ***Սեբաստիա*** քաղաքում ***1562 թ.*** գումարված եկեղեցական գաղտնի ժողովի անունից ազնվականական ծագում ունեցող ***Աբգար դպիր Թոխաթեցու*** ղեկավարությամբ պատվիրակություն է ուղարկվում Վենետիկ: Պատվիրակության հեղինակությունն ու նշանակությունն ընդգծելու նպատակով Աբգար դպիրը և նրա որդին ներկայանում են որպես արքայական ծագում ունեցող անձնավորություններ: Միքայել Սեբաստացու ծրագիրը նախատեսում էր ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի ազատագրությունը, այսինքն՝ այն ուղղված էր ինչպես թուրքերի, այնպես էլ պարսիկների դեմ: Այս պատվիրակությունը ևս չի հասնում իր նպատակին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

ՍԵՎ ԾՈՎ
ԿԱՍՊՅԱՆ ԾՈՎ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆ
ԹՈՒՐՔԻԱ
ՊԵՐՍԻԱ
ՄԻՋԵՐԿՐՅԱ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ (ՊԱՐՍԿԱՍՏԱՆ)
ՎԱՆԱ ԼԻՄ
ՍԵՎԱՆ ԼԻՄ
ՄԱՍԻՍ
ՍՈՒՐԽ
ՍԱՄՈՒՐ
ՏԵՐԵՊՈՆ
ՄՈՒՐՃԱՆ
ՄԵԼԻՔՍԵԹԱՆ
ԹԹՎԱՆՔ
ՍԱՀԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԹԹՎԱՆՔ
ՍՈՒՐՄԱԼՈՒ
ԱՐԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ XV–XVII դդ. հայ ազատագրական շարժման մի թևը հայոց պետականության վերականգնման համար փորձում էր օգտագործել թուրքմենական ցեղերի առկա հակամարտությունը, երկրորդը՝ ստանալ եվրոպական քրիստոնյա պետությունների օգնությունը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ովքե՞ր էին կոչվում պարոնտեր: Արևմտյան Հայաստանում ո՞ր իշխանությունները պահպանեցին իրենց գոյությունը: Դրանցից ո՞րն էր ամենակենսունակը:
2. Հայկական իշխանությունները Հայաստանի ո՞ր շրջաններում էին պահպանվել:
3. XVI դ. հայ գործիչները ի՞նչ ելք էին գտել Հայաստանը ազատագրելու համար: Ինչո՞ւ էին այդ գործիչները համոզված, որ դաշնակիցներ կգտնեն այդ գործում:
4. 1547 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդակցությունն ի՞նչ որոշում ընդունեց: Ի՞նչ նպատակով Եվրոպա մեկնեց Աբգար դպիր Թոխաթեցու պատվիրակությունը: Հասա՞վ արդյոք այն իր նպատակին:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մելիք, Շապախ, Մոկս, Զեյթուն, Ստեփանոս Ե Սալմաստեցի, Միքայել Ա Սեբաստացի, Աբգար Թոխաթեցի

ԳԼՈՒԽ II

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (XV ԴԱՐ–XVII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ)

§ 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: Հայաստանում օտար տիրապետությունը և դրանով պայմանավորված բացասական երևույթներն արգելք հանդիսացան նաև մշակույթի ու գիտության զարգացման համար: Այդուհանդերձ, հայ մշակույթը որոշակի զարգացում ապրեց: Մշակույթում սկսում են գերակշռել այն ճյուղերը, որոնք ավելի քիչ ծախսատար էին՝ մանրանկարչությունը, փայտագործությունը, գորգագործությունը, խաչքարային արվեստը, եկեղեցիների վերանորոգումը, որմնանկարչությունը և այլն: Շինարարության ոլորտում նշանակալի ձեռքբերումներ են արձանագրվում կամուրջների և իջևանատների կառուցման գործում:

Հայկական մշակույթի կարևոր առանձնահատկությունը հայկական գաղթօջախներում ստեղծված հայ մշակութային արժեքների փոխադրումն էր Հայաստան:

Դպրոցը: Չնայած քաղաքական և սոցիալ–տնտեսական ծանր իրավիճակին ու անասելի կորուստներին՝ Հայաստանում շարունակվել են նախորդ դարաշրջանի կրթական ավանդույթները: Կրթական կենտրոններ են հիմնվել նաև հայկական գաղթավայրերում:

XV դարասկզբին Հայաստանում կրթական կյանքի կարևոր կենտրոն էր ***Տաթևի համալսարանը,*** որտեղ դասավանդում էր Գրիգոր Տաթևացին:

Դասավանդման համար օգտագործվում էին թվաբանության, քերականության, մարդակազմության, աստղաբաշխության վերաբերյալ հայ և օտար հեղինակների աշխատությունները: Տաթևի համալսարանը եղել է վարդապետական աստիճան շնորհող առավել հեղինակավոր կենտրոնը:

Միջնադարյան հայ երաժիշտներ (մանրանկարներ)

Գրիգոր Տաթևացին 1408 թ. Տաթևից շուրջ հարյուր ուսանողների հետ տեղափոխվում է Մեծոփա վանք՝ նոր շունչ հաղորդելով ***Հովանեսս Մեծոփեցու*** առաջնորդությամբ գործող դպրոցին: Այն գոյատևել է մինչև XV դարի կեսերը:

XV դարի առաջին կեսին Սյունիքում գործել է Հերմոնի դպրոցը՝ Հովհաննես Հերմոնացու առաջնորդությամբ: Հայաստանում գործել են նշանավոր այլ դպրոցներ ևս: Դրանցից ***Երզնկայի Կապուսի*** վանքի ուսումնական հաստատությունը որակվել է որպես Հայաստան աշխարհում համայն հայոց ազգի «լուսատու»:

Արևելյան Հայաստանի կրթական ու մշակութային առաջընթացին նպաստում է XVII դարի սկզբներին Սյունյաց աշխարհում հիմնված ևս մեկ հաստատություն՝ Մեծ կամ Հարանց անապատի դպրոցը:

Մովսես Տաթևացին 1620–ական թթ. հիմնադրում է Երևանի Անանիա առաքյալի անապատը և ***Հովհաննավանքի*** դպրոցը: Վերջինս թեև շուտով տեղափոխվում է Էջմիածին:

Հայկական դպրոցներ էին գործում նաև գաղթավայրերում՝ Ղրիմում, Նոր Ջուղայում և այլուր:

Տպագրությունը. Հակոբ Մեղապարտ: Տպագրության գյուտը նոր փուլ նախանշեց և անգնահատելի դեր ունեցավ մշակույթի զարգացման գործում: XVI դարում հայ մշակույթի ամենախոշոր նվաճումը **Հակոբ Մեղապարտի** կողմից հայկական տպագրության հիմնադրումն էր: Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ ***«Ուրբաթագիրքը»,*** լույս տեսավ Վենետիկում ***1512 թ.:*** Մերձավորարևելյան լեզուների մեջ եբրայերենից հետո հայերենը դարձավ հաջորդ լեզուն, որն ունեցավ իր տպագրական արվեստը:

Հայ տպագրության մեջ հաջորդ քայլը կատարում է դիվանագիտական առաքելությամբ Հռոմ ուղարկված Աբգար դպիր Թոխաթեցին: Նա, հայերեն նոր տպատառեր պատրաստելով, ***1565 թ.*** անցնում է Վենետիկ, որտեղ էլ մեծադիր թերթի վրա տպագրում է տոմարացույց:

Հայ գործիչները, օգտագործելով տպագրական

«Ուրբաթագիրք». հայերեն առաջին տպագիր գիրքը

գյուտի ընձեռած հնարավորությունները, նոր ուղի բացեցին հայոց մեջ լուսավորության տարածման համար: Տպագրվեցին պատմական, հոգևոր, քերականագիտական, բնագիտական, աշխարհագրական և այլ բնույթի աշխատություններ:

Խաչատուր Կեսարացու ջանքերով **1638 թ.** հայկական տպարան է ստեղծվում Նոր Ջուղայում: Այն հիմնվել էր ոչ թե Եվրոպայից բերված, այլ ամբողջապես տեղում պատրաստված տպագրական գործիքներով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հայ մշակույթի և գիտության զարգացման համար XV–XVII դարերում ինչ խոչընդոտներ կային: Մշակույթի որ բնագավառները սկսեցին գերակայել այդ ժամանակաշրջանում, ինչու: Նշեք հայկական մշակույթի առանձնահատկությունները:
2. XV դ. սկզբին որ համալսարանն էր դարձել կրթական կարևոր կենտրոն: Ովքեր են դասավանդել այնտեղ: Մինչև երբ է գոյատևել Մեծոփա դպրոցը: Ինչ նշանավոր մարդիկ են դասավանդել այնտեղ: Թվարկեք Հայաստանում XV դ. գործող ուսումնական կենտրոններ:
3. XVII դ. Հայաստանում ինչ նշանավոր կրթօջախներ էին գործում:

4. Ո՞րն է հայերեն առաջին տպագիր գիրքը, ե՞րբ և որտե՞ղ է այն լույս տեսել: Ո՞ւմ անվան հետ է կապված հայկական տպագրության հաջորդ քայլը: Ի՞նչ նշանակություն ունեցավ տպագրության գյուտը հայ մշակույթի հետագա զարգացման գործում:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեծոփավանք, Հովհաննես Մեծոփեցի, Հերմոնի դպրոց, Մովսես Տաթևացի, Երևանի Անանիա առաքյալի անապատ, Հովհաննավանքի դպրոց, Հակոբ Մեղապարտ, «Ուրբաթագիրք», Խաչատուր Կեսարացի

§ 2. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՎԵՍՏԸ

Գիպությունը: Ավերիչ արշավանքներն ու օտարի տիրապետությունը հուսահատական տրամադրություններ առաջացրին հայության շրջանում: Պատահական չէ, որ ավելի շատ սկսվեցին կազմվել մանր ժամանակագրություններ, դեպքերի համառոտ արձանագրություններ, քան ստվարածավալ «Պատմություններ»:

Մեծարժեք ստեղծագործություն է ***Թովմա Մեծոփեցու*** պատմութունը, որտեղ ներկայացված են XIV դարի վերջին քառորդի և XV դարի առաջին կեսին Հայաստանում ու հարակից երկրներում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունները:

XVII դարում գրված կարևոր աշխատություններից է ***Գրիգոր Դարանաղցու*** «Ժամանակագրությունը»: Ականատես հեղինակն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Օսմանյան կայսրության քաղաքական կացության և հայ բնակչության վիճակի վերաբերյալ:

XVII դարի առաջին կեսին Հայաստանում տեղի ունեցած կարևորագույն իրադարձությունների հանգամանալի շարադրանք է Առաքել Դավրիժեցու մեծարժեք «Գիրք պատմութեանց»–ը:

XVII դարի աչքի ընկնող գործիչներից Զաքարիա Քանաքեռցու հեղինակած «Պատմություն» աշխատության մեջ նկարագրվում են ոչ միայն հեղինա-

կի տեսած ու լսած դեպքերը, այլև Արշակունիների թագավորության հաստատումից հետո ընկած ժամանակաշրջանների համառոտ շարադրանքը:

Նույն ժամանակաշրջանի հեղինակ Հակոբ Կարնեցին տվել է Կարնո նահանգի պատմաաշխարհագրական նկարագրությունը:

Հայ մշակույթը զգալի հաջողությունների է հասել նաև գիտության այլ բնագավառներում: ***Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը*** բնագիտական ու հասարակագիտական շատ խնդիրների շուրջ բացատրությունների, մեկնությունների հանրագիտարան է:

XV դարի հայ նշանավոր գիտնականներից է կենսաբան ու բժիշկ, աստղագետ ***Ամիրդովլաթ Ամասիացին:*** Նա վաստակել էր բուժող բժշկի համբավ, դարձել օսմանյան սուլթանի անձնական բժիշկը: Նրա աշխատությունները բնագիտական ու դեղագիտական գիտելիքների շտեմարան են:

Արվեստը: Հայաստանի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակն իր կնիքն էր թողել նաև արվեստի զարգացման վրա: Այդուհանդերձ, որոշ բնագավառներ շարունակել են որոշակի զարգացում ապրել:

XV դարի աչքի ընկնող բանաստեղծ էր ***Մկրտիչ Նաղաշը:*** Նա նաև եղել է լավ նկարիչ՝ նաղաշ, որից էլ ծագում է նրա անունը: Խոշորագույն բանաստեղծ էր ***Նահապետ Քուչակը:*** Հաջողություններն ակնառու էին մանրանկարչության բնագավառում:

Մեծ զարգացում է ապրել գորգագործական արվեստը: Հայկական գորգերն արտահանվում էին շատ երկրներ: Հայտնի էին հատկապես «վիշապագորգերը»:

Հայտնի արհեստավորներ էին նորջուղայեցիները: Նրանք ռուսաց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին նվիրեցին «Ալմաստե գահ»: Նոր ջուղայեցի Աստվածատուր (Բոգդան) Սալթանովը նկարիչ էր ռուսական արքունիքում:

Նշանակալի զարգացում է ապրել նաև խաչքարային արվեստը: Հայ խոջաները Հին Ջուղայի գե-

Ջուղայի խաչքարերից, որոնք XXI դարի սկզբին զոհ գնացին թուրք–ադրբեջանցիների մշակութակործան ոճրագործությանը

ռեզմանատանը կանգնեցրել էին ավելի քան 10 հազար խաչքար: Նրանց մի մասն արվեստի կատարյալ գլուխգործոց էր: Ցավոք, մեր օրերում ադրբեջանցի ջարդարարների կողմից լիովին ոչնչացվել է համաշխարհային արժեք ունեցող այդ հսկա գանձարանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ էին XV–XVII դդ. խոշորածավալ պատմություններն իրենց տեղը զիջում մանր ժամանակագրություններին: Ո՞ր իրադարձություններն են նկարագրված Թովմա Մեծոփեցու աշխատության մեջ: XVII դ. գրված ի՞նչ աշխատություններ կարող եք նշել, ո՞ւմ հեղինակությամբ: Ինչո՞վ է տարբերվում Զաքարիա Քանաքեռցու «Պատմությունը» իր ժամանակակիցների աշխատություններից:
2. Նշե՛ք, թե ինչու XV–XVII դդ. Հայաստանում չկային նպաստավոր պայմաններ գիտության զարգացման համար: Գիտության ո՞ր բնագավառների հարցեր են արծարծվում Գրիգոր Տաթևացու աշխատության մեջ:
3. Ինչո՞վ է հայտնի Ամիրդովլաթ Ամասիացին:
4. Արվեստի ո՞ր բնագավառներն էին զարգանում XV–XVII դարերում: Ի՞նչ ճակատագիր ունեցան Ջուղայի ավելի քան 10 հազար խաչքարերը:

ՆՈՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՈՒՆՆԵՐ, ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գրիգոր Դարանաղցի, Առաքել Դավրիժեցի, Զաքարիա Քանաքեռցի, Հակոբ Կարնեցի, Ամիրդովլաթ Ամասիացի, Մկրտիչ Նաղաշ, Նահապետ Քուչակ, վիշապագորգ, Ասպվածատուր Սալթանյան (Բոգդան Սալթանով), «Ալմաստե գահ»:

ԵՐՐՈՐԴ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

XV դ. Հայաստանը գտնվում էր թուրքմենական քոչվոր կարա–կոյունլուների և ակ–կոյունլուների տիրապետության տակ: Նրանց միջև մղվող հաճախակի պատերազմների հետևանքով մեծապես տուժում էր երկրի բնակչության մեծամասնություն կազմող հայ ազգաբնակչությունը: Իրենց սոցիալական հենարան ապահովելու նպատակով Հայաստանում տիրապետություն հաստատած օտար իշխողները զգալի արտոնություններ և իրավունքներ էին շնորհում Հայոց եկեղեցուն և հայ իշխանական տների շառավիղներին: Պետության բացակայության պայմաններում ավելի էր կարևորվում Հայոց եկեղեցու դերը ազգապահպանության և ժողովրդի համախմբման գործում: Կարևոր էր կաթողիկոսական աթոռի վերահաստատումը Էջմիածնում: Օտար տիրապետության ներքո գտնվող հայ ժողովուրդը չէր կորցնում սեփական պետականությունը վերականգնելու ձգտումը: Հայ ժողովրդի համար աղետալի հետևանքներ ունեցան նաև թուրք–պարսկական պատերազմները, տեղահանություններն ու բռնությամբ մահմեդականացումը: Չնայած դրանց՝ Հայաստանի լեռնային մի քանի շրջաններում հայերը պահպանել էին իրենց ինքնավարությունը կամ ստեղծել կիսանկախ իշխանապետություններ: Անբարենպաստ քաղաքական և սոցիալ–տնտեսական պայմաններում հայ մշակույթը շարունակում էր զարգանալ և արձանագրել ձեռքբերումներ:

1. Քոչվորական ցեղերի և թուրք–պարսկական տիրապետության շրջանում Հայաստանում ինչ նշանակալի իրադարձություններ տեղի ունեցան:
2. Ներկայացրե՛ք հայ մշակույթի այն բնագավառները, որոնցում արձանագրվեցին ձեռքբերումներ: Նշե՛ք հայ մշակույթի գործիչներ և պատմե՛ք նրանց մասին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

301 թ. — Քրիստոնեության հռչակումը որպես պետական կրոն
301–303 թթ. — Վաղարշապատի Մայր տաճար Ս. Էջմիածնի կառուցումը
325 թ. — Նիկեայի առաջին տիեզերական ժողովը. «Հավատո հանգանակի» ընդունումը
330–338 թթ. — Խոսրով III Կոտակի գահակալումը
339–350 թթ. — Տիրանի գահակալումը
350–368 թթ. — Արշակ II–ի գահակալումը
354 թ. — Աշտիշատի ժողովի գումարումը
363 թ. — Պարսկաստանի և Հռոմի միջև պայմանագրի («ամոթալի») կնքումը
363–440 թթ. — Մեսրոպ Մաշտոց
370–374 թթ. — Պապի գահակալումը
371 թ. — Ձիրավի ճակատամարտը
387 թ. — Հայաստանի առաջին բաժանումը (Հռոմեական կայսրության և Պարսկաստանի միջև)
388–415 թթ. — Վռամշապուհի գահակալումը
405 թ. — Հայոց գրերի գյուտը
422–428 թթ. — Վռամշապուհի որդի Արտաշես Արշակունու գահակալումը
428 թ. — Հայ Արշակունիների արքայատոհմի անկումը
450–451 թթ. — Վարդանանց պատերազմը
450 թ. — Խաղխաղի ճակատամարտը
451 թ. մայիսի 26 — Ավարայրի ճակատամարտը
481–484 թթ. — Վահանանց ապստամբությունը
481 թ. — Ակոռիի ճակատամարտը
482 թ. — Ներսեհապատի ճակատամարտը
484 թ. — Նվարսակի պայմանագրի կնքումը
484–VI դ. առաջին կես — Վաչագան Բարեպաշտի գահակալումը
506 թ. — Դվինի առաջին եկեղեցական ժողովի գումարումը
554 թ. — Դվինի երկրորդ եկեղեցական ժողովի գումարումը
571–572 թթ. — Հակապարսկական ապստամբությունը Վարդան Մամիկոնյանի (Կրտսեր Վարդան) գլխավորությամբ
591 թ. — Հայաստանի երկրորդ բաժանումը (Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև)
618 թ. — Ս. Հռիփսիմե եկեղեցու կառուցումը
631 թ. — Ս. Գայանե եկեղեցու կառուցումը
639 թ. — Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի վերամիավորումը Հայոց իշխան և սպարապետ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ
640 թ. — Արաբական ներխուժումների սկիզբը Հայաստան
641–661թ. — Զվարթնոց տաճարի կառուցումը
652 թ. — Հայ–արաբական պայմանագրի կնքումը
701 թ. — Դվին կենտրոնով Արմինիա վարչաքաղաքական միավորի ստեղծումը
703 թ. — Հակաարաբական առաջին ապստամբությունը Սմբատ Բագրատունու գլխավորությամբ. Վարդանակերտի ճակատամարտը
774–775 թթ. — Հակաարաբական ապստամբությունը Մամիկոնյանների գլխավորությամբ

775 թ. ապրիլի 25 — Արձնիի ճակատամարտը
804–826 թթ. — Աշոտ Մսակեր Բագրատունին՝ Հայոց իշխան
826–851 թթ. — Բագարատ Բագրատունին՝ Հայոց իշխան
850–855 թթ. — Հակաարաբական հուժկու ապստամբությունը: Հայաստանի ինքնավարության վերականգնումը
855 թ. — Աշոտ Բագրատունին՝ Հայոց իշխան և սպարապետ
862 թ. — Աշոտ Բագրատունու ճանաչվելը Հայոց իշխանաց իշխան
869 թ. — Զաքարիա Զագեցու նախաձեռնությամբ հայ իշխանների ժողովի հրավիրումը Զագավանում. Աշոտ Բագրատունուն հռչակելու մասին որոշման ընդունումը
885 թ. օգոստոսի 26 — Գևորգ Գառնեցու կողմից Աշոտ Բագրատունուն օծելը
885–890 թթ. — Աշոտ I Բագրատունու գահակալությունը
885–1045 թթ. — Հայաստանի Բագրատունյաց կենտրոնական թագավորությունը
890–914 թթ. — Սմբատ I Բագրատունու գահակալությունը
894 թ. — Սաջյան ամիրայի զորքերի պարտությունը Դողսի ճակատամարտում
908–1021 թթ. — Վասպուրականի թագավորությունը
914–928 թթ. — Աշոտ II Երկաթի գահակալությունը
921 թ. — Արաբների պարտությունը Սևանի ճակատամարտում (Ծովամարտ)
922 թ. — Աշոտ Երկաթի ճանաչվելը Հայաստանի շահնշահ
928–953 թթ. — Աբաս Բագրատունու գահակալությունը
948 թ. — Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Աղթամարից Արգինայի վանք
953–977 թթ. — Աշոտ III Ողորմածի գահակալությունը
961 թ. — Անիի հռչակվելը մայրաքաղաք
961–1003 թթ. — Գրիգոր Նարեկացի
963–1065 թթ. — Կարսի (Վանանդի) թագավորությունը
977–990 թթ. — Սմբատ II Բագրատունու գահակալությունը
978–1113 թթ. — Տաշիր—Զորագետի (Լոռիի) թագավորությունը
987 թ. — Դվինի ամիրայության ջախջախումը և միացումը Անիի Բագրատունյաց թագավորությանը
987–1170 թթ. — Սյունիքի թագավորությունը
990–1020 թթ. — Գագիկ I Բագրատունու գահակալությունը
998 թ. — Ատրպատականի ամիրայի զորքերի ջախջախումը Ծումբի ճակատամարտում
1001 թ. — Տայքի կյուրապաղատության բռնակցումը Բյուզանդիային
1001 թ. — Անիի Կաթողիկե մայր տաճարի կառուցման ավարտը
1042–1045 թթ. — Գագիկ II Բագրատունու գահակալությունը
1045 թ. –Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումը
1047 թ. — Սելջուկ–թուրքերի բանակի առաջին ներխուժումը Հայաստան
1064 թ. — Ալփ–Ասլանի բանակի ներխուժումը Այսրկովկաս, Անիի հանձնումը Շադդադյաններին
1071 թ. — Մանազկերտի ճակատամարտը. Բյուզանդիայի պարտությունը սելջուկ–թուրքերից
1074 թ. — Փոքր Ասիայում սելջուկյան գերիշխանության հաստատումը
1080–1198 թթ. — Ռուբինյան իշխանությունը Կիլիկիայում
1080–1095 թթ. — Ռուբեն I–ի գահակալությունը

1082–1117 թթ. — Գող Վասիլի իշխանությունը՝ Քեսուն կենտրոնով
1098 թ. — Վահկա բերդի գրավումը բյուզանդացիներից. Վահկան՝ իշխանության կենտրոն
1100–1129 թթ. — Թորոս I Ռուբինյանի գահակալությունը
1104 թ. — Սիս և Անավարզա քաղաքների գրավումը բյուզանդացիներից. Անավարզան՝ Կիլիկիայի մայրաքաղաք
1129–1137 թթ. — Լևոն I Ռուբինյանի գահակալությունը
Մոտ 1130 թ. — Հայկական առաջին դատաստանագրքի (Դավիթ Ալավկաորդու «Կանոններ») ստեղծումը
1145–1169 թթ. — Թորոս II Ռուբինյանի գահակալությունը
1151–1292 թթ. — Հռոմկլան՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր
1169–1175 թթ. — Մլեհ Ռուբինյանի գահակալությունը
1173–1375 թթ. — Սիսը՝ Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք
1184 թ. — Դատաստանագրքի կազմումը Մխիթար Գոշի կողմից
1185 թ. — Սարգիս Զաքարյանի նշանակվելը վրաց զորքի ամիրսպասալար (սպարապետ)
1187–1219 թթ. — Լևոն II Ռուբինյան, 1198 թ. հունվարի 6–ից՝ Լևոն I Ռուբինյան
1194 թ. — Լևոն II –ի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագրի կնքումը Սիս քաղաքում
1196 թ. — Ամբերդի ազատագրումը հայ–վրացական զորքերի կողմից
1198–1375 թթ. — Կիլիկիայի հայոց թագավորությունը
1199 թ. — Անիի ազատագրումը Զաքարյանների կողմից
1203 թ. — Դվինի ազատագրումը Զաքարյանների գլխավորությամբ
1220 թ. աշուն — Մոնղոլների ներխուժումը Անդրկովկաս
1226 թ. — Զաբելի և Հեթումի ամուսնությունը. Հեթումյանների արքայատոհմի հաստատումը Կիլիկիայի հայոց գահին
1226 — 1270 թթ. — Հեթում I–ի գահակալությունը
1236–1244 թթ. — Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից
1249 թ. — Հայ–վրացական հակամոնղոլական ապստամբությունը
1254 թ. աշուն — Հայ–մոնղոլական պայմանագրի կնքումը Կարակորումում Մանգու խանի և Հեթում I–ի միջև
1265 թ. — Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքի ստեղծումը
1266 թ. — Սամցխե–Ջավախք հայ–վրացական իշխանության ստեղծումը
1266 թ. — Մառիի ճակատամարտը
1268 թ. — Կիլիկիայի և Եգիպտոսի միջև հաշտության պայմանագրի ստորագրումը
1270–1289 թթ. — Լևոն II Հեթումյանի գահակալությունը
1280–ական թթ. սկիզբ — Գլաձորի համալսարանի հիմնադրումը
1289–1306 թթ. — Հեթում II Հեթումյանի գահակալությունը
1292–1441 թթ. — Սիսը՝ Ամենայն հայոց կաթողիկոսության նստավայր
1307 թ. — Սսի եկեղեցական ժողովի գումարումը. ունիայի (միություն) մասին որոշման ընդունումը
1320–1342 թթ. — Լևոն IV Հեթումյանի գահակալությունը
1340–1410 թթ. — Գրիգոր Տաթևացի
1344–1362 թթ. — Կոստանդին Նղրեցին՝ Կիլիկյան Հայաստանի թագավոր
XIV դ. երկրորդ կես — 1412 թ. — Տաթևի համալսարանի գործունեությունը

1361 թ. — Սսի եկեղեցական ժողովը. Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումների չեղյալ հայտարարվելը
1374–1375 թթ. — Լևոն V Լուսինյանի գահակալությունը
1375 թ. ապրիլի 16 — Սիս մայրաքաղաքի գրավումը
1441 թ. — Մայր Աթոռի վերահաստատումը Ս. Էջմիածնում
1461 թ. — Կ.Պոլսի հայոց պատրիարքության հիմնումը
1465 թ. — Սմբատ Արծրունու օծվելը Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում
1512 թ. — Հայկական տպագրության հիմնադրումը. «Ուրբաթագրքի» տպագրումը Հակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում
1512 թ. — Պարսկա–թուրքական պատերազմների սկիզբը
1547 թ. — Էջմիածնի գաղտնի խորհրդակցության գումարումը Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի գլխավորությամբ
1555 թ. — Օսմանյան և Սեֆյան տերությունների միջև հաշտության պայմանագրի կնքումը Ամասիայում
1562 թ. — Հայաստանի ազատագրության նպատակով գաղտնի ժողովի գումարումը Սեբաստիայում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի գլխավորությամբ
1604 թ. օգոստոս — 300000 հայերի բռնագաղթեցումը դեպի Պարսկաստան
1620 թ. — Երևանի Անանիա առաքյալի անապատի հիմնադրումը Մովսես Տաթևացու կողմից
1638 թ. — Հայկական տպարանի հիմնումը Նոր Ջուղայում Խաչատուր Կեսարացու կողմից
1639 թ. — Օսմանյան պետության և Սեֆյան Իրանի միջև հաշտության պայմանագրի կնքումը Կասրե Շիրինում